

א' אב"ד פ"ה הו"ה פ"ה אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד


א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד

א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד
א' אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד אב"ד

A p-ke u-ty kungy u-ty-ty
Suy u-ty kungy u-ty-ty. 'p-ty-ty u-ty-ty
p-ty-ty

p-ty-ty kungy u-ty-ty u-ty-ty kungy p-ty-ty
p-ty-ty kungy u-ty-ty u-ty-ty:

G. S.



Handwritten mark or signature in the top left corner.

1059-ԱԳ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԱՀԱՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ ՍՐԹՈՅ ՊԱՏԱ- ՐԱԳԻՆ

Արտաճանեալ 'ի մեկնութեանց Խորովու՛ Ան-
ձևացեաց եպիսկոպոսի և Ներսեսի Լամբրոնա-
ցայ՝ զերատեսչին Տարանի՛ կարճելով և սար-
ղաբանելով

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐՃԻՇԵՅԻՈՅ:


'ի լոյս ընծայեաց Պարոն Յովհաննէս Ազգալ-
եանց՝ Անդամ Ասիական Միաբանութեանն Բան-
դալայ՝ և դաստաց 'ի Մարդասիրական Ճեմա-
րանին:

'ի Հայրապետութեան Տեառն Տեառն Եփրե-
մայ՝ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի:

'ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՈՐԻՆ ԻՄԿ ՃԵՄԱՐԱՆԻՆ:

'ի ԿԱԼԿԱԹԱ:

264+28584-4-2.



1645
47

Գերամեծար Տեառն Գրիգորի Ծայրագոյն Վարդապետի Զուղայու Սրբոյ Վանացն Ամենափրկչի՝

Նուէր որդիական պարտեաց :

Սրբազան Տէր :

Հոգեկիր հռետորի Գրիգորի Նարեկացոյ հոգեւից հայր՝ Անձևացեաց Եպիսկոպոսն Խօսրով, և հայաստանեայց սրբոյ Եկեղեցւոյն վահան անվկանդ՝ Լամբրոնացին Ներսէս ծաղկեալ ՚ի հայրենիս մեր ոչ հարուստ ժամանակաւ միմեանց զկնի՝ ուշ ՚ի կուրծս եղին աստուածայնոցն պարապելով յաստուածայինն սօժել ճանապարհ զառ ՚ի յաստուածուստ ինքեանց աւանդեալն հօտ : աստուածապատում մատենից յօրինուածովք, յորոց սակի են մեկնութիւնքն սրբոյ Պատարագին, հոգեւոյս մտաց՝ հոգեւոյս ծնունդ, Վեցցաղեալ ՚ի հայտ Եովհաննէս Արճիշեցի՝ Ոսկնակեր մականուն՝ փոքր ինչ սոցա զկնի՝ Մատուծոյ սիրոյն զօրացեալ հետևեցաւ նոցուն աստուածահաճոյ օրինակի, և իբրև յաւարտ երեքտասաներորդ դարուն, այսինքն՝ հինգ հարիւր քառասուն և վեց ամօք յառաջ յօրինեաց զհամառօտ մեկնութիւն ինչ պատարագի՝ զպայծառափայլ ահունս բանից վերայասացեալ ուրբ հարցն մերոց յիւրն մատեան ընդելլուղանելով :

որպէս յայտնի երևի 'ի նորին խոյ վկայու-
թեանէ :

Բարեհախանձ օրինակի վերոյստա-
ցեալ երանելեացն հետևելով սրբազնութեան
ձերոյ, և փոյթ մեծ ունելով 'ի վայրի դալար-
ւոյ զբանեղէն հօտ ձեր փարախել և 'ի հո-
գերուղի աղբերէ անտի զհոգիս նոցա մուցա-
նել՝ հաճեցայք սիրողսպէս սատար լինել . աշ-
խատանացս 'ի տպագրութեան այսր մատենի և՛
բարձրապատիւ արտօնութեամբ և՛ ձերովան
հանգանակութեամբ ծախուց նորին : Սկին իբի
և իմ կապեալ 'ի հանգոյց խորին երախտագի-
տութեան՝ վերընծայեմ սրբազնութեան ձե-
րում զայս մատեան իբրև նուէր արժանի ձե-
րում աստուածսիրութեան և գովելի հայրե-
նասիրութեան :

Վալով Մնամ սրբազնութեան
ձերում երախտապարտ ծառայ՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ :

'ի ԿԱԿԱԹԱ՝

'ի Մարդասիրական Ճեմարանի :

'ի 12 հոկտեմբերի, 1830 :

Խրոթ սրբոյ խորհրդոյ • Արքեււ Ուղաննէսէ Վարդապե-
տի Արձիշեցոյ՝ որ էւզի Ուղաննէր՝ Աս Վահանայս Աստ-
ուծագործո՛ւ :



մենայնի ժամանակ է , և ժամանակ է ամ
իրի • Արդ՝ վասն զի հարքն մեր առա-
ջինք և վարդապետքն եկեղեցւոյ յորժամ բանս
ինչ յաստուածայնոցն պատգամաց խօսիլ կամէին ,
և կամ գրել , նուրբ և առակաւոր դարձուա-
ծովք՝ այլ և գերազարդ և պաճուճեալ բառիւք
հնարէին ցանկալի առնել լատիրացն • Եւ զայս՝
ոչ թէ վայրապար ինչ , և կամ թէ վասն
փառս որսալոյ՝ ի մարդկանէ՝ այսպէս առնէին •
այլ զի տեսանէին զմարդիկ ժամանակին այնորիկ՝
ցանկացօղք ուսմանց բանից և սիրօղք աշխատու-
թեանց • և զի մի՛ գիւրագիւտ լինելոյ վասն՝
գիւրաւ արհամարհեալ լինին իմաստք նոցա , վասն
այնորիկ այնպիսի օրինակաւ գրէին , և կամ թէ

խօսէին ընդ նոսա : Բայց տեսանեմք զսոսա՝ որք
 'ի մերումն են ժամանակի , զի ոչ ունին զնոյն
 փոյթ յանձինս իւրեանց . այլ՝ կամ խոյ ոչ առ-
 նեն փոյթ գրոց ընթերցուածոց . և կամ թէ ,
 ընթերուն՝ և ոչ բնաւ քննեն զմիտս գրերլոցն :
 Այլ է զորս 'ի գիրս ընթերւումն և ոչ իմանան .
 և է զոր 'ի բերան առեալ՝ ասեն հանստպազ և
 ոչ գիտեն և ոչ հասկանան . որպէս զսաղմանն
 դաւթի և զսոյն խոյ զաղօթս խորհրդոյ պա-
 տարագիւտ : Չոր ոմանք կատարողք սոյն խորհրդոյ
 քահանայքն՝ 'ի բերան առեալ ասեն զաղօթս և
 ոչ իմանան , գործեն և ոչ գիտեն , այլ միայն
 արագ և շուտափոյթ լեզուօք շաղակիբատեն ըզ-
 քանս աստուածային աղօթիցս , և ոչ գիտեն
 բնաւ թէ , զի՞նչ իցէ զոր խօսին և կամ գոր-
 ծեն , բայց միայն աւարտմանն սպասեն , և ոչ
 իմաստից գիտութեան աստուածային խորհր-
 դեանն : Ո՞վ այր կատարիչ և գործունեայ աստ-
 ուածային խորհրդոց , իցէ՞ եթէ որ 'ի ձեռա-
 կերտ արհեստաւորաց՝ եթէ հիւսն իցէ , կամ
 դարբին , և կամ ստայնասկ , յորժամ կամլցի
 անօթս ինչ առնել , և ոչ նախ խորհիցի և ոչ
 զմտաւ ածիցէ զձե և զօրինակ անօթոյն , այլ
 միայն առանց խորհրդոյ զձեռն միայն 'ի գործն
 շարժիցէ՝ հնար է լինիլ 'ի նմանէ անօթ ինչ
 պիտանացու . և եթէ այս անհնար է , ո՞րքան
 ապա սնար է մտաւոր խորհրդով և մանաւանդ

Թէ, հանդերձ մեծաւ երկիւղիւ և զգուշու-
 թեամբ ձեռն արկանել 'ի գործս յայս՝ մեծ և
 սարսափելի խորհրդոյս, քանզի աստուածագործ-
 ութիւն է, և ոչ Թէ դոյզն ինչ գործ: Վասն
 սրոյ մեծն Խօսրով՝ Հայրն գրիգորի նարեկաց-
 ւոյն նախ՝ և Ներսէս վերատեսուչն տարանի
 յետոյ, ընդարձակ և պայծառ քննութեամբ
 ետուն մեղ զմեկնութիւն պատարագիս: Բայց եւս
 սմանք՝ զի զյաճախութիւն բանիցն պատճառեն
 և կէսք զնրբութիւնն, և անօգուտ մնան: Թէ-
 պէտ և չէ՛ ինչ ծածուկ բանք նոցին: Յաղագս
 այսորիկ յետնեալս՝ ի բարեաց՝ ծնունդս վերջին
 ժամանակիս՝ Ովհաննէս արձիշեցի Թախան-
 ձեալ յամնոց քահանայից սրբազգեցից, տալ
 նոցս վերստին համառօտ և սարզ բանիւք զտե-
 սութիւն խորհրդոյս: Եւ մեք հարկեալ 'ի նո-
 ցունց՝ ձեռն արկաք 'ի սոյն, յուսալով 'ի հոգին
 սուրբ և յաղթս սրբոց: Ոչ Թէ յաւելուած
 ինչ իմաստից խառնելով 'ի մէնջ 'ի բանս մեկնու-
 թեան նախասացեալ արանցն, այլ միայն զբանս
 նոցունց կարճեալ պարզեցաք: Որ Թէ հաճելի
 իցէ ձեզ՝ տեառն շնորհ, և Թէ ոչ՝ և նոյնպէս
 շնորհ տեառն, բայց միայն՝ անպարտաւ մնացից 'ի
 պատահելոցդ:

Տեոուելան՝ թէ որո թնչ խորհուրդ յամենայն առաջ պատրու-
 գեմի շէքիստոս . ե զի ոչ թոյն կենդանեաց , այլ ե մեռելոց
 է իրիւնելան : Եւ դորձեալ թէ որոց մեռելոց իցէ պատրուգն
 իրիւնելան , ե որոց ոչ : Այլ ե շէժոյս պատրուգն յորոց
 ե հոմ որդիսի օրինակաւ առնաւ զահանայն . ե առիջջ ըն-
 ծոյցն՝ որպէսի հոմօ գոյցեն՝ ՚ի զահանայն : Նաեւ , թէ
 զինչ խորհուրդ է զառանելորդս հասարել ննջեցելոցն :

ԱՐԴ՝ ՆԱԽ ՁԱՅՍ ՊԱՐՏ Է
 գիտել , թէ զիւրդ յամենայն առա-
 ճրաման ընկալաք պատարագել զգրիստոս . որ-
 պէս ե պատուիրէր ինքն քրիստոս աշակերտացն՝
 յաւանդելն զխորհուրդս չարչարանացն իւրոց ՚ի
 վերնատանն ասելով . Ձայս արարէք առ իմոյ
 յիշատակի . Բազում են այս պատճառք . բայց
 պարզ՝ կարճ ե համառօտ՝ զայս իմացուք : Ասան
 զի թէպէտ ե գալտեամբ բանին ե նորին
 չարչարանօք ե մահուամբ՝ փրկեալ ազատե-
 ցաք ՚ի ծառայութենէ մեղացն , ե արեամբ նորին
 կենդանացաք ՚ի մահուն սպականութենէ : բայց
 որչափ որք եմք ՚ի մարմնի աստ , զօրհանապազ
 հարկեալք ՚ի կարեաց մարմնոյս ե խաբեալք
 ՚ի չարէն մեղանչեմք , եթէ կամաւ ե եթէ
 ախմայ , ե սոսցաւ , թէ ամենայն որ մեղանչէ՝
 նոյն ե մեռցի : Արդ՝ մեռանի նս հանապազ մար-
 դասիրապէս իւր անմեղութեամբն՝ վասն մեղաց
 մերոց , ե կենդանիս առնէ զմեզ իւր անմահու-

Թեամբն՝ վստն մեղաց, և դեղ փրկու թեան
 տալով մեղ զմարմին և զարիւն իւր սուրբ, որ-
 պէս ասէ յովհաննէս, Արիւն որդւոյն ատուածոց
 սրբէ զմեզ 'ի մեղաց: Եւ ոչ կենդանեացն մի-
 այն՝ որք հաւատով հաղորդին՝ լինի սն փրկու-
 թիւն, այլ և մեռելոց, որք այնու հաւատով
 և յուսով 'ի քրիստոս ննջեցին: Քանզի մահն
 քրիստոսի ոչ միայն կենդանեաց եղև փրկու-
 թիւն՝ այլ և մեռելոց, որպէս ասէ պետրոս,
 Եւ ոգւոցն՝ որք էին 'ի դժոխս՝ երթեալ
 աւետարանեաց: Եւ որպէս յայնժամ չարչա-
 րանք և մահն քրիստոսի՝ կենդանեաց և մե-
 ռելոց արար փրկու թիւն, նոյնպէս և այժմ
 յիշատակ մահու նորին և կատարումն առնէ
 փրկու թիւն և մեռելոց: Այլ՝ ոչ պարզաբար
 ամենեցուն, զի եթէ զայս այսպէս կարծիցես՝
 թէ խառն 'ի խուռն ամենայն մեռելոցն փր-
 կու թիւն գործէ պատարագելն զքրիստոս, ա-
 պն և հեթանոսաց և անհաւատից լինի 'ի փր-
 կու թիւն կատարումն պատարագին, ապն և վանն
 նոցա ևս պարտ է առնել պատարագ: Իսկ ե-
 թէ այս անհնար է, ուրեմն քննել արժան է,
 թէ որո՞ց վանն պարտ է պատարագ մատուցու-
 նել, և որո՞ց ոչ: Արդ՝ այսպէս իմն, քանզի
 մարդիկ ոչ են միով օրինակաւ ամենեքեան 'ի
 յանցանա մեղացն, զի թէպէտ ամենեքեան մե-
 ղանչեն, այլ են ոմանք՝ որք յորժամ գործեն

զմեզոյ, իբրև ակամայ խաբեցեալք 'ի չարէնս
 և կամ թէ՛ Տարկեալք ինչ 'ի կարեաց մար-
 ծնոյն անկանին 'ի շնութիւն, 'ի սպանութիւն,
 'ի գողութիւն, յարբեցութիւն, 'ի յիշոցս և
 կամ յայլ ինչ չարիս: Ասկայն ոչ ուրախա-
 նան 'ի չարիսն, այլ մանաւանդ լան և ող-
 բան, և նախատեն զանձինս իւրեանց վասն մե-
 ղացն՝ զորս արարին, և չարչարեալք զօրհանա-
 պազ 'ի խղճէ մտացն՝ կան 'ի տարակուսի գե-
 ըի և տառապեալ անձինքն այնքիկ, որպէս ա-
 ռէր դաւիթ: Զօրհանապազ տրտում գնայի,
 զի անձն իմ լի եղև չարչարանօք, և ոչ գոյ
 բժշկութիւն մարմնոյ իմոյ, և Պօղոս ասէ. Տե-
 տանեմ այլ օրէնս յանդամս իմ՝ որ հակառակ
 կայ օրինաց մտաց իմոց, գերեալ զիս օրինօքն
 մեղաց: Արդ՝ այսպիսի արք՝ որք թէպէտ չար-
 չարէին հանապազ 'ի խղճէ մտաց իւրեանց,
 ասկայն վասն չար սովորութեանն իւրեանց, և
 յաղազս հեշտութեանց մարմնոցն ոչ կարացին
 դառնալ 'ի մեղացն և ապաշխարել, այլ որ-
 պէս է սովորութիւն սատանայի՝ որ հեշտացու-
 ցանէ զմարդիկ 'ի մեղսն և զապաշխարութիւնն
 յետո տայ ընկերուէլ, սոյսպէս և նոցա, և յան-
 կարծակի սատասի նոցա ելանել 'ի կենացոյ:
 Իսկ ողորմիւքն այնքիկ ոչ ինչ ունեւոյ ընդ-
 ինքեանս մասն, և կամ պաշար ինչ բարեաց
 կամ տաքինութեանց, բայց միայն զմթերս

մեղացն՝ զորս ժողովեցին : Յայնժամ դառնան և սպառնին յողորմութիւնն քրիստոսի և ՚ի նորին մահն կամաւոր : զղջնան ՚ի մեղացն , և խոստովանին զյանցանսն , և առնուն իւրեանց թաշակ զմարմինն և զարիւնն քրիստոսի , ահա սյսպիսեացս է յսո՛ գտանել ողորմութիւն ՚ի տեառնէ : և ընդունի զամենայն զոր ինչ սունեն վասն նոցա . աղօթք և սատարագ և ողորմութիւն , Իսկ այնոքիկ՝ որք անխտիր ՚ի մեղս և ՚ի չարիս թաւալին և ոչ ցաւին և ոչ արտմին , և ոչ բնաւ ածեն զմտաւ զոր դատատանին և կամ զերկիւղ տանջանացն , այլ ուրախութեամբ իբրև զբարիս գործեն զչարիս , և ոչ բնաւ զղջնանն , և կամ խոստովանին , այլ մեռեալքն են ՚ի մեղս և յանօրէնութիւնս : Այսպիսեացս՝ ոչ թէ վիայն չէ՛ օգուտ ողորմութիւն առնել , կամ սատարագ մատուցանել , այլ և ինքն քահանայն՝ որ ընկալաւ յարագս այսպիսեացս ինչս ընծայից , և կամ ողորմութիւն , և յիշատակեաց առաջի ատուծոյ աղօթութեք և կամ սատարագաւ , դատատան անձին իւրում ընդունի , և ՚ի քահանայական կարգէն զրկեցեալ լինիցի , որպէս ասէ սուրբն դիանէսիս : Ասն եթէ սատահիցի այսպիսեաց անզղջից՝ յանկողինս մահացն ՚ի ժամ մահուն զղջնալ ՚ի մեղացն , և խոստովանեցին դառն արտասուօք զչարիսն , սնրտ է քահանային ոչ

զրկել զնոսա յաստուածային շնորհէն . այլ
 յուսալով յանտխակալութիւնն քրիստոսի և 'ի
 նորին անբաւ քաղցրութիւնն . որ զաւաղակն
 վասն միոյ դաւանութեան՝ թէպէտ որ յել
 շնչոյն էր՝ ընդ իւր 'ի դրախտն ընկալաւ . Եւ
 դարձեալ՝ առակաւոր բանիւք զսոյն յոյս մեզ
 առաջի արկանէր տէրն յաղագս տնտեսին . որ
 թէպէտ անիրաւ էր . սակայն զըջացաւ 'ի միտս
 իւր . և ուղիղ դատեցաւ 'ի մէջ երկուց պար-
 տապանացն . այսինքն՝ հոգւոյ և մարմնոյ . և գո-
 վեցաւ 'ի տեառնէ . զի խմաստութեամբ արար
 զայն . Այլ և՛ յառակ բարեկամին . որ 'ի ժամ
 գիշերին բաղխեաց զդուռն . որ վասն առաւել
 ժտութեանն ընկալաւ զամենայն . զոր և կամե-
 ցաւ . Բայց դու՝ ո՛վ քահանայ՝ մի՛ջնորդ աս-
 տուծոյ և մարդկան . զգո՛յշ լեր անձին քում . և
 մի՛ սակս ագահութեան և կամ վասն կա-
 բեաց ինչ մարմնականաց՝ նուէրս ինչ կամ
 տուրս ողորմութեան՝ յանարժանիցն և յան-
 զեղջ մեղսւցելոցն առնուցուս . զի պիղծ և գար-
 շելի է այն առաջի աստուծոյ . որպէս ասէ մար-
 դարէն եսայի . և դու մի՛ պղծիր պղծեցելովքն .
 Եւ դարձեալ՝ այժմ զգո՛յշ լեր . զի գէտ կա-
 ցեալ ես 'ի գլուխս ժողովրդոցդ . քանզի՛ պարտիս
 հանապազ ազդ առնել նոցա փողով պատուի-
 րանին զահ դատաստանին և զերկիւղ տան-
 ջանացն դժոխոց . և ոչ դագարիլ միշտ 'ի իւր-

բնական զնոսա և յուսուցանելոյ, և մանաւանդ
 աղօթիւք և սաղատանօք 'ի գիշերի և 'ի տուն-
 ջեան տքնիլ վասն նոցա, և յետ մահուն սա-
 տարագօք հաշտեցուցանել զնոսա ընդ աստու-
 ծոյ: Ապա թէ այսմ անփոյթ առնիցես, գի-
 տացիւր ստուգութեամբ զի զարիւնն նոցա 'ի
 ձեռաց քոց պահանջելոց է թագաւորն քրիստոս:
 Եւ ամենայն տուրք և նուէրք ժողովրդեանն՝
 զորս առնուցու՝ 'ի գողանս են համարեալ քեզ,
 և իբրև զզրիանս աւաղակաց և սպանողաց: Եւ
 յորժամ ոք 'ի հաւատացելոցն կամիցի տալ իրս
 ինչ 'ի ձեռս քահանային վասն սատարապի, ոչ
 է պարտ յիմար և անյոյս մտօք թիւ համարոյ
 պահանջել 'ի քահանայէն իբրև յիւրմէ պար-
 տականէ, և մի' իբրև զերախտաւոր ոք համա-
 րեցի զինքն քահանային և մեծամտեցի: Այլ
 այնպիսի հաւատով պարտ է տալ զտուրս՝ որ-
 պէս 'ի ձեռս աստուծոյ, և զայն՝ ոչ իբրև ըզ-
 տուրս, այլ իբրև զհատուցումն պարտուց ա-
 ուեալ շնորհացն, և որպէս զգոհութիւն և ըզ-
 շնորհակալութիւն ընկալելոց բարեացն աստու-
 ծոյ: Այլ թէպէտ և վասն չքաւորութեան ոք
 ոչ կարէ մեծ ինչ և կամ բազումս տալ,
 սակայն վասն հաւատոյն փոքրն՝ մեծ է համա-
 րեալ առաջի աստուծոյ իբրև զխերեւէշս այրի
 կնոջն, այսինքն՝ զլոմայս: Եւ այնու յուսով՝ ոչ
 միայն յայնր քահանայի աղօթից և 'ի պատա-

րազէ, այլ որ մի անգամ ընդ ամենայն տիե-
 ղերս եկեղեցիք ուղղտիառ քրիստոնէից են, ուր
 և պատարագի քրիստոս, յամենայնէ մասն և
 բաժին ընդունի: Ջի եթէ հաւատամք թէ մի
 քրիստոս է՝ որ ՚ի վերայ ամենայն սեղանոյ պա-
 տարագի, ապա և զայս ևս պարտ է հաւատալ
 թէ, այն՝ որ ետ նուէրս վասն պատարագի
 յայս եկեղեցի և ՚ի տյն քահանայ, առնու-
 ինքեան վարձս փոխարինաց յամենայն եկեղե-
 ցեաց քրիստոնէից, ուր և պատարագի քրիստոս,
 Ջի թէպէտ այլ և այլ ձևով և արարողու-
 թեամբ ամենայն աղգք քրիստոնէից պատարա-
 գեն, սակայն մի հաց է և մի բաժակ, որ
 յամենայն տիեղերս ՚ի վերայ ամենայն սեղանոյ
 յեկեղեցիս քրիստոնէից կատարի ՚ի միոյ հոգ-
 ւոյն սրբոյ: Իսկ եթէ ասիցես, թէ նոցինն
 խառնուածով է, իսկ մերս ոչ. իմն ով եղբայր,
 Քշմարիտ են խօսք քո և ստոյգ, զի յամե-
 նայն աստուածաշունչ գրոց ստուգած է, որ
 հացն անխմոր պիտի, և բաժակն անապակ:
 Բայց դու զնոցայն մի՛ հայհոյէր, զի նոցա
 քննող և դատիչ աստուած է. այլ դու ՚ի քոյդ
 հաստատուն կաց, որ խառնուածով չառնես և
 դատապարտիս յաստուծոյ: Եւ գիտեա՛ թէ
 սևտի՛ ունիմք մեք զայս սովորութիւնս, զի ՚ի
 լուսաւորչացն մերոց՝ ՚ի սրբոյն թարգմտէ ա-
 ռաքելոյն և ՚ի սուրբ լուսաւորչէն մերմէ գրի-

դորէ է. զի տէր մէր յիսուս քրիստոս 'ի վերս
 նառանն հացն՝ զոր խնդրեաց՝ բաղարջ էր. և
 գինին՝ անասպակ. զի կուսածին մարմնոյն՝ այս
 էր 'ի դէպ առանց խառնուածոյ. Եւ արդ՝ կա-
 րի գերդէցիկ է մերս և անուշահոտ. հացն ան-
 խմոր. և բաժակն՝ անասպակ. Այլ թէ զի՞նչ
 խորհուրդ է քառաններորդն պատարագաց՝ զոր
 կատարեմք ննջեցելոց, ուսաք յատուածաշունչ
 գրոց՝ այլ և 'ի ստոյգ պատգամագրաց, թէ
 հոգւոցն՝ որք ելանեն 'ի մարմնոյ աստի՝ պատե-
 րազմ կայ առաջի յօգային դիւաց անտի. որպէս
 ետես անտոն 'ի տեսլեանն. և վկայէ առա-
 քեալն թէ. ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոց
 և ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս և ընդ
 պետութիւնս. ընդ այսս խաւարայինս՝ որք են
 'ի ներքոյ երկնից. Վասն որոյ պնդոտ է քահա-
 նային՝ յորժամ որ 'ի հաւատացելոց մեռանի՝
 զաւուրս քսուատուն պատարագ մատուցանել վասն
 նորս. որպէս պատուիրեաց առաքեալն փիլիպպոս
 վասն իւր զքառասուն աւուրս պատարագ առնել. և
 Իսկ եթէ և այլ որ մեռանի՝ զնն ևս ընդ ա-
 ռաջնոյն յիշատակեցէ. զի չէ ինչ փաս թէ
 զերկուս և կամ զևս բաղումս 'ի մի աւուր պատա-
 րագի յիշեցես. վասն զի ոչ եթէ յաղագս միոց
 անձին և եթ պատարագի քրիստոս. այլ և վասն
 ամենայն աշխարհի. և վասն այտորիկ սահմանե-
 ցաւ յամենայն աւուր պատարագ մատուցանել .

զի ոչ է օր՝ յորում ոչ լինի մահ մարդոյ • վասն
որոյ սնորս է յամենայն օր պատարաւ առնել •
Բայց բազում խափան և միջոց լինի • զի ոչ
կարեն քահանայք կալ 'ի խորհրդեանն • է՛ զի
'ի բնական կարեաց • և է՛ զի յաւուրս աղու-
հացից և առաջաւորաց • զի ոչ է օրէն պատա-
րագելոյ • Իսկ յետ այնորիկ՝ իբրև ժամանակ ի-
ցէ պատարագելոյ՝ չէ՛ ինչ հարկ թուոյ և հա-
մարոյ փոյթ առնել • սյլ միայն այնմ սպա-
սիցէ • զի որչափ կար իցէ և հնար՝ մի՛ ինչ
հեղգացի կեալ 'ի խորհրդեանն և մատու-
ցանել զատուածայինն փրկագործութիւն • զի
մի՛ ընդ չար և ընդ վատ ծառային այնորիկ ար-
տաքս ընկեցիկ լինիցի յատուածայինն դաւթէ •

Յողովո թէ ոչ է օրէնէ Հոցն և Բաթոնն Մարմոյն և
Արեանն քրեպոսի • ոյլ ճշմարիտ մարմն և որէնն քրեպոսի •
յորս թէ ոչ նոսաղի Ենարհն յողովո ոնորթոն մարտացանդի •

ՏԵՐ ՄԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ յիսուս քրիստոս
յորթամ էջն յարգանդ աստուածածին կուսին •
էառ յարենէ նորս և խտունեաց ընդ իւր
աստուածութեանն • և գոյացեալ եղև մարդ
ճշմարիտ և աստուած • և մարմինն՝ զոր էառ
'ի կուսէն՝ աստուածացաւ ստուգապէս • սա-
կայն զթանձրութիւնն բնութեան և զձևն
և զայնն ոչ փոխեաց • Եւ նոյն աստուածն մար-

գացեալ յերեկոյի 'ի հինգ շաբաթոշ աւուրն
 'ի վերնատանն էառ զհացն և զբաժակն 'ի
 ձեռս իւր, որով զերկին և զերկիր արար. և
 բարբառեցաւ նոյն բարբառով, որով առաց և
 եղեն ամենեքեան. եթէ՝ Այս է իմ մարմին.
 և Այս իմ արիւն: Եւ թէպէտ հացն և բա-
 ժակն ոչ փոխեցաւ յորակ մոյ և արեան,
 բայց բնութիւնն խառնեցաւ ընդ նա և առ-
 ուածացոյց զնա: Արպէս և ընդ այն մարմինն
 զոր 'ի կուսէն ընկալեալ էր, նոյնպէս և այս
 հաց և բաժակ՝ զորս առնուեք հրամանաւ նո-
 րին. և զնեմք 'ի վերայ սեղանայն, որպէս 'ի
 վերայ ձեռացն քրիստոսի. զի յիսուս է սեղանն
 ըստ սրբոյն Գիորգիոսի. և օրհնեմք զսն սրատ-
 մութեամբ խաչին և մահուն քրիստոսի, և
 հայցեմք 'ի հօրէ զկատարիչ հոգին սուրբ. զի
 իջէ և կատարեցէ զս. յայնժամ ըստ կա-
 մացն հօր և ըստ հրամանաց որդւոյն՝ զոր ա-
 սաց. Ձոյս արարէք առ իմոյ յիշատակի, իջա-
 նէ հոգին սուրբ. և խառնէ ընդ սա զաստուա-
 ծական զօրութիւնն իւր. և կատարէ զս 'ի
 ճշմարիտ մարմին և յարիւն քրիստոսի: Եւ
 ոչ թէ սակ օրինակ. այլ որպէս և նա ճշմա-
 րիտ աստուած առանց կարծեաց, նոյնպէս և
 ոս ըստ անաւտ բանին՝ զոր առաց թէ.
 Գուք իմ աշակերտք էք. զորս փոխանակ իմ
 կացուցի յաշխարհի. զայս արարէք առ իմոյ

5491
54



յիշատակի . լինի Տշմարիտ մարմին և արիւն քր-
 լիստտի առանց կարծեաց : Իսկ թէ անարժան
 ոք ևս իցէ պատարագիչ քահանայն , սակայն և
 ոչ այնու աղօտանայ շնորհն սուրբ հոգւոյն :
 Քի թէ 'ի ձեռն անարժանութեան քահանայ-
 ին նուազանայր շնորհն , և ոչ աստուածանայր
 հացն և բաժակն , յայնժամ զիարդ դատասպար-
 տի պատարագիչն իբրև զոչ խորոզ մարմնոյ և
 արեան տեառն : Արդ՝ թէպէտ և անարժան է
 քահանայն , և թէպէտ յամենայն մեղս է շա-
 ղախեալ , սակայն ոտուգապէս հացն և բա-
 ժակն առանց ամենայն կարծեաց աստուածա-
 նայ : Քանզի քահանայութեան շնորհն իբրև
 զբնականին՝ անմեկնելի է 'ի քահանայէն . զոր
 օրինակ հրեշտակք և մարդիկ . զի 'ի ստեղծ-
 մանն իւրեանց առին յարարէն զբնականու-
 թիւն և զանձնիշխանութիւն միահաւատար-
 Բայց հրեշտակք վասն անմարմնութեան առա-
 լելան անմահ բնութեամբն քան զմարդն : Քան-
 զի նոքա ամենեւին անմահ արարան . իսկ մարդն՝
 միշտոսհման մահու և կենաց եղև : Իսկ յորժամ
 յանցեան՝ 'ի տեղւոյն և 'ի պատուոյն մերժե-
 ցան , այլ ոչ 'ի բնական շնորհէն զոր ունէին :
 Նայնպէս և ամենայն շնորհ 'ի հոգւոյն սրբոյ՝
 որ յեկեղեցին մատակարարի՝ օրպէս զբնու-
 թեամբ իր՝ անմեկնելի է յարակայ : Արպէս մը-
 կրտութեան շնորհն , քանզի թէպէտ և բա-

զուամ մեզս մեղքներէն մկրտեալքն, և թէ յու-
 րացութիւն և սանկանիցին, բայց յարժամ զբը-
 ջանան՝ ապաշխարել միայն հրամայի նոցա, այլ
 ոչ եթէ մկրտիլ, քանզի մի է մկրտութիւնս
 որպէս դաւանեմք՝ ՚ի նիկիիականն: Այսպէս ի-
 մա զՆորհո և զասորիճան քահանայութեանն
 անաղտ և անմեկնելի: Ասն որոյ զաստուածայ-
 ինն խորհուրդ՝ նոյն քահանայական շնորհն է
 սր կատարէ, և ոչ եթէ մեղուցեալ քահա-
 նայն: Քանզի՝ այլ է քահանայն, և այլ քա-
 հանայական շնորհն որ ՚ի սուրբ հոգւոյն: Քան-
 զի նոյն հոգին սուրբ՝ նիւթ առնու ինքեան
 զքահանայական շնորհն, և նովաւ կատարէ
 զաստուածային և զսուրբ խորհուրդն: Յաղագս
 այսորիկ առաւել պատժոյ և դատապարտու-
 թեան արժանի է եղկելին այն՝ որ շաղախեալն
 էր մեղօք, և համարձակեցաւ յաստուածագոր-
 ծութիւն սուրբ խորհուրդոյն, և կրկին և երեք-
 կին առցէ անձին իւրում զպատուհաս: Նախ
 զի՝ մեղաւ և ոչ պատկառեաց ՚ի քահանայա-
 կան շնորհէն՝ զոր ընկալեալն էր ՚ի հոգւոյն:
 Եւ երկրորդ՝ զի այն շաղախեալ գործոյն յաստ-
 ուածագործութիւնն յայն յանդգնեցաւ մերձիլ:
 Եւ երրորդ՝ զի ճաշակէ ևս, վասն որոյ դատա-
 պարտի իբրև զոչ խորոյ մարմնոյն և արեանն
 տեառն: Զի որ ուտէ և ըմպէ անարժանու-
 թեամբ՝ դատառտան անձին իւրում ուտէ և

ըմպէ, ասէ առաքեալն. Եւ եթէ կամօս վկայու-
թեամբ հաստատել զբանս՝ ասի՝ ՚ի պատմու-
թեանց թէ ոմն եպիսկոպոս շնայր ընդ կնոջ
ումեմն հրէի. և յանդգնութեամբ պատարագ
առնէր. և յաւուր միւսմ հանդիպեալ կնոջն
երթալ յեկեղեցին. և տեսնէր զի՝ ՚ի ժամ
պատարագին ել հրեշտակ մի՝ ՚ի խորանէն. և
տարեալ կապեաց զեպիսկոպոսն՝ ՚ի մի սիւն ե-
կեղեցւոյն. և ինքն եկեալ մատոյց զպատարագն
և յորժամ պատմեաց կինն զտեսիլն զայն եպիս-
կոպոսին՝ եպիսկոպոսն զզջացաւ և ապաշխարեաց
զմեղս իւր. և կինն մկրտեալ եղև քրիստո-
նեայ. քանզի անզեղջ են շնորհքն աստուծոյ
որպէս հրամայէ առաքեալն, և ոչ մեկնի յորս
բնակի:

Եկեցուք այսուհետև ՚ի տեսութիւն առաջիկայ
խորհրդոյս ձեռնատուութեամբ հոգւոյն:

Խորհուրդ զնապան զԷփեսոս :



որժամ հանգերձեալ ոք իցէ ՚ի քահա-
նայապետաց և կամ ՚ի քահանայից պա-
տարագ առնել, նախ պնդու է զգոյշ լինիլ յա-
մենայն տեսակէ մեղաց. և սուրբ յամենայն բը-
ծէ և արատոյ. արդար. աստուածապաշտ. հեղ.
և խոնարհ և յամենայնի լցեալ ամենայն Կոր-

ծովք բարեաց, և օտարացեալ յամենայն իրաց
 չարեաց, Նախ՝ աստուածանալ ըստ կարողու-
 թեան, և ապա աստուածագործել, երթիցէ
 նախ առ իւր խոստովանահայրն՝ ի ծունկս ան-
 կեալ բացաւ գլխով, և խոստովանեսցի զամե-
 նայն յանցանս իւր՝ զգործոցն, զբանիցն և ըզ-
 խորհրդոցն: Եւ ՚ի պատրաստել սարկաւագացն
 զհաց պատարագին, մտցեն յաւանդատունն՝ ուր
 զգետտ պատարագին իցէ, և զգեցցին զգետտ
 ըստ իւրաքանչիւր աստիճանի և պատուոյ: Զգետտ
 պատրիարգին՝ որ թարգմանի հարանց
 հայր՝ և կաթողիկոսին և արք եպիսկոպոսին՝
 է պատմուճան և նախորտ բաղմախաչ, և եմիփո-
 րոն ՚ի վերայ այնորիկ հինգ խաչիւք զարդա-
 րեալ, և խոյր ՚ի գլուխն: Իսկ եպիսկոպոսն՝ որ
 թարգմանի տեսուչ՝ նախորտ առանց խաչի, և
 եմիփորոն: Եւ քահանայն պատմուճան և նա-
 փորտ զգեցցի որպէս և եպիսկոպոսն, բայց ու-
 րար՝ արկցէ զէրկու ուսոփն, և ոչ եմիփորոն: Եւ
 սարկուագն պատմուճան միայն զգեցցի առանց
 գօտուոյ, և ուրար զահեակ ուսոփն: Իսկ կիսա-
 արկաւագն նոյնպէս պատմուճան գօտելոյժ զգեց-
 ցի, բայց զուրարն ՚ի վերայ բաղկին արկցէ և
 ոչ զուսոփն: Եւ գրակարգացքն պատմուճան գօ-
 տելոյժ զգեցցին միայն, և բացաւ գլխով կացցեն
 ամենեքեան ՚ի սուրբ խորհրդեանն:

Մեկնութիւն :



ահանային մտանեւն յաւանդատունն , և
 'ի բաց մերկանալն զառաջին հանդերձն ,
 և զայլ զգեհունն պայծառագոյն՝ զայն նշանակէ ,
 որպէս թէ 'ի բաց մերկացաք զհին մարդն մե-
 ղաց . և զգեցաք զքրիստոս զնորն նորոգեալ
 սրբութեամբ և արդարութեամբ . զի նախ
 ծածկաբար խոտովանութեամբն միայն աստուա-
 ծացոյց զմաքրութիւն մտացն . այժմ 'ի ձեռն
 երևելի զգեստուցն՝ մարդկան ցուցանէ . քանզի
 պարտ է մեզ ոչ միայն առաջի աստուծոյ սուրբ
 երևիլ , այլ և առաջի մարդկան . որպէս ասէ
 առաքեալն . Իսկ նափորտն բազմախաչ և եմի-
 փորտն հինգ խաչիւք զարդարեալ՝ զորս զգեհու
 պատրիարդն և կաթուղիկոսն և արք եպիսկո-
 պոսն՝ նշանակեն զնոցին ամենեկին խաչիւն հինգ
 զգայութեամբն իւրեանց և զմեռանիւն մեղաց
 և ցանկութեանց աշխարհի , և զմիայն բարձեալ
 ունիւն յանձինս իւրեանց զխաչն քրիստոսի : Իսկ
 խոյրն 'ի գլուխն՝ զպսակն իմաստութեան նշա-
 նակէ և զստղաւարտն փրկութեան , որով խո-
 հականն պայծառանայ : Եւ ուրար քահանային
 յայտ առնէ զքաղցր լուծ աւետարանին քրիս-
 տոսի , զոր բարձեալ է երկոքին ուսովն . Եւ
 սարկաւազին զահեակ ուսովն միայն արկանեւն
 զուրարն՝ ցուցանէ զնա զեռևս տկար գօլ և ոչ

ունիլ կար՝ բովանդակ բառնալոյ զլուծ օրի-
նացն քրիստոսի: բայց միայն միով մատամբ տը-
կար անդամովն՝ որ է ասեակ ուսն: մերձեալ
'ի պատուիրանն: Եւ կիստարկաւազն՝ որ յա-
հեակ բազուկն ունի զուրարն՝ տայ աներևու-
թապէս զտղայութիւն ներքին հասակին յերգ
մարդոյ: որպէս թէ գոյզն ինչ կարաց հպիլ
'ի գործ պատուիրանին: Դարձեալ՝ գօտելոյծ
սխտմուխանն նորին և զպրացն՝ զիշխանու-
թիւնն նոցին նշանակէ 'ի տանն աստուծոյ՝
քանզի գօտին ծառայական է՝ որպէս և նա-
փորան զոր զգենու քահանայն գօտելոյծ: Իսկ
բացաւ գլխով մատուցանելն զաղօթան՝ զհամար-
ձակութիւն և զպարզութիւն սրտին ցուցանէ:

* Առն գիմարդուսէտն առ այս:



այց են ոմանք՝ զի հակառակին և աւե-
լորդ և անօգուտ համարին զայս բարեոք սո-
վորութիւն զգետուցն: Քանզի ասեն թէ
աստուած զսրբութիւն սրտին միայն պահանջէ:
Բարեոք է զոր ասես: Այլ ո՛վ եղբայր՝ ո՛չ է
հնար՝ որքան եմք 'ի մարմնի աստ: առանց մար-
մնական նիւթոց և զգալի նշանակաց մերձենալ
մեզ առ աննիւթն աստուած: Որպէս և ո՛չ է
հնար առանց ջրոյ մկրտութեան՝ մաքրութիւն:
և կամ առանց մեռանի՝ հոգի տալ: և կամ

առօնց եկեղեցւոյ և սեղանոյ և հացի և բա-
 ժակի պատարագ մատուցանել . Արդ՝ եթէ
 այսօրիկ ամենեքեան զգալի նիւթք են, և հար-
 կաւոր և պիտանացու են, և ոչ այս միայն, այլ
 և ինկարկուծիւն և լուսավառուծիւն և որ
 ինչ սոյնպիսիք, ՚ի նոյն օրինակ և քահանայ-
 ական զգեստքն՝ հարկաւորք են և խորհրդա-
 կանք որպէս և ասացաւ . Իսկ եթէ ասիցես
 թէ ընդ պայծառուծիւն զգեստուցն՝ ախա պըճ-
 նօղուծեան և մարդահաճուծեան խառնէ սա-
 տանայ, ապա և յողորմուծիւնն խառնէ զնոյն
 ախա, և ընդ աղօթելն և ՚ի դահելն և յամե-
 նայն բարեգործուծիւնն՝ որչափ և առնեն մար-
 գիկ՝ նոյնպէս ախտիւ մարդահաճուծեան, և
 փառասիրուծեան պատերազմի ստանայ, իսկ
 մեք ոչ եթէ ՚ի բարեգործուծեանն հրաման
 առաք ՚ի բաց կալ, այլ ընդ ախտին կռուիլ,
 Եւ զքահանայական զգեստն զգեցիր ՚ի փառ
 ստուծոյ, և մի՛ ՚ի փառս անձին քոյ, և ընդ-
 դէմ ախտի փառասիրուծեան մաքառեանց արի-
 աբար, սոյնպէս և յամենոյն առաքինուծիւնս .
 Եւ եթէ զիլինդ ասիցես քահանայական ըզ-
 դեստ, ապա ոչ էր պարտ քեզ իբրև զհառա-
 բակաց զգեստ հանապազ ՚ի գիշերի և ՚ի տուն-
 ջեան զանձամբ ունիլ . և յամենայն գործ ան-
 խտիր դովաւ վարիլ . նա և յերազարտործու-
 թիւնս և յամենայն խառնակուծիւնս ան-

խնդրեալ Եւ փիլիսոսաւոք: Եւ դարձեալ քահանայա-
 կան զգետտ համարիս զգա, և յաստուածադոր-
 ծուծեան խորհուրդն մերձիս, մե՛ծ անկարբըշ-
 տուծիւն է այս: Իսկ եթէ զաղբասուծիւն
 որ պատճառիցէ, Արդ ես ոչ եթէ զայն ատեմ՝
 թէ կերպաս կամ թէ յայլ ինչ մեծադին
 նիւթոյ զգետտն լինիցի: այլ միայն զայս զի
 յինչ և իցէ նիւթոց՝ միայն պարտ է այն լինիլ
 զգետտ: Եւ կամ զիտ՞րդ ոչ բարեվայելուչ թուի
 ձեզ՝ սրբուծեան զգետտուք մերձիլ՝ ի սրբու-
 թիւն սրբոց, և ոչ հասարակաց հանդերձիւք:
 և դու մի նոր և եկամուտ համարիր զայս սու-
 վորուծիւնս: Քանզի ՚ի հինն՝ ինքն աստուած
 հրամայեաց մովսիսի առնել զգետտս պայծառս
 և վայելուչս, և այնու զգետտով մեծն և առա-
 ջին քահանայապետն ահարոնն ՚ի խորանին սրբէր
 զժողովուրդն, և որդիքն ահարոնի նաբաթ և
 արիուծ յորժամ անարժանաբար մտին ՚ի
 խորանն արբեալք ՚ի գինւոյ, հուրն ՚ի բուր-
 վառացն ելեալ՝ զնոսին սյրեաց, բայց ՚ի զգետտ
 քահանայուծեանն՝ զոր նոքա զգեցեալ էին՝ ոչ
 իշխեաց մերձիլ հուրն: Եւ մարդարէն եզեկի-
 ել զհրեշտակապետն՝ քահանայական զգետտուք
 տեսանէր զարդարեալ, որպէս և ատեր թէ
 զգեցեալն էր զսիւնաւորն, Իսկ ՚ի նորս՝ ա-
 ռաջին եպիսկոպոս եղբայրն տեսան յակոբոս՝
 ասէ պատմուծիւնն՝ թէ որխտակ հանդերձիւք

Տանապազ օտրասւորէր տեառն : Եւ սուրբն բա-
 գարառ՝ աշակերտ առաքելոյն պերտօսի քա-
 Տանայական եմբիփորոնաւն իբրև զբոց վառեալ
 երևէր քաղաքապետին վնի փատասի : Այլ և
 մեծն բասիլիսս և ամենայն քահանայապետքն
 և երիցունքն . զի ոչ իշխեաց որ 'ի նոցանէ
 մերձիլ առանց քահանայական զարդուց 'ի խոր-
 հուրդ ինչ : Նոյնպէս և մերն լուսաւորիչ սուրբն
 գրիգոր և ամենայն թուռունք նորա քահանայ-
 ական զգետտուք կատարէին զսուրբ խորհուրդն :
 Իսկ որ զգլխոյն բանալն ոչ ընդունի : նսն 'ի
 պօղոսէ ուցի զնոյն հարկաւորութիւն . զի ոչ
 միայն օրինադէ զբանալն : այլ և ոչ բացողայն
 օտտէ ասելով : Որ յաղօթս կայցէ և կամ
 թէ մարգարէանայցէ : և զգլուխն իւր ծած-
 կեալ սնիցի : յամօթ առնէ զգլուխն իւր զքը-
 բիստոս : Զի՞նչ քան զայս այլ յանցանք իցէ՝
 զի յաղազս ճնչին իրաց զփառքն մեր զքրիս-
 տոս յամօթ առնիցեմք : Արդ՝ սյս է խորհուրդ
 սորա . զի մեր ամենայն ինչ՝ յայտնի և բնոց է
 ծածկագիտին ստտուծոյ : Եւ դարձեալ՝ այսպէս
 էր քրիստոս 'ի վերայ խաչին . և մեք բաց
 գլխով զձեռս տարածեալ՝ զնորա նմանութիւնն
 բերեմք 'ի մեզ . Բայց կին մարդոյ ոչ է սրտտ
 բանալ զգլուխն . այլ առաւել ծածկել յե-
 կեղեցւոյ : Իսկ որք այժմ՝ արեղայք ոչ բանան
 զգլուխս իւրեանց յամենայն աղօթս՝ սյս է

պատճառն . զի արեղայու թիւնն՝ կրօնաւորու
 թիւն է . և կրօնաւորին՝ պարտ է զամենայն
 զգայարանս ծածուկ պահել . Բայց ՚ի պատա-
 րագին պարտ է բանալ զգլուխն . որ պատարա-
 գին է . թէ քահանայ . թէ եպիսկոպոս և
 թէ այլ ոք . Այլ և բնութիւնս ուսուցանէ
 քեզ զայս . քանզի բնական է այս . զի ամե-
 նայն ազգ՝ ոչ միայն քրիստոնեայք . այլ և ան-
 ճաւատք՝ բացաւ գլխով կան յազօթս :

Ձեռն խորհուրդ ունի Սողմոն . և Մզօթն Բահոնային .
 ՚ի ժամ զգիտութեամբսննն :



Կեղեցին՝ տուն և բնակութիւն է երկ-
 նաւոր թագաւորին . և դաք քահանայ-
 իցն և սարկաւազացն՝ իբրև իշխանք են կար-
 գեալք ՚ի տանն աստուծոյ . և որպէս ոչ է պատ-
 շաճ առաջի թագաւորի կալ իշխանին առանց
 իշխանական ձեռնի . այսպէս և սոքա նախ յա-
 ւանդատունն իւրաքանչիւր ոք յիշխանական ձեռ
 զգեստութն զարդարին . և ապա գան առաջի
 թագաւորին քրիստոսի . Եւ ՚ի զգեհուլ ճան-
 դերձին ասեն սաղմոս ըստ խորհրդոյն . Յի-
 շեան տէր զգաւիթ և զամենայն ճեղու թիւն
 նորա . Եւ ամենայն բանք սաղմոսին զայս նշա-
 նակեն . քանզի ՚ի յիշումն ածեն Տօր զանչափ
 և զանճաս ճեղու թիւնն որդւոյ՝ զոր գաւիթ կո-

չէ : Եւ թէ զե՛նչ իցէ հեղութիւն նորա՞
 այս է զոր ասէ : Երդուաւ տեառն . և ուխտս
 եդ աստուծոյ յակորայ : Եւ երդումն է գործ
 անօրէնութեան որդւոյ նորա . որ ոչ եմուտ 'ի
 յարկ ներքին վարագուրին . և ոչ հանգեաւ 'ի
 մահի՞՝ հայրենի փառացն . որ անմեկնելին էր
 'ի նմանէ . և ոչ ննջեաց . և ոչ հանգեաւ 'ի
 խնամելոյ զարարածս իւր . մինչև եգիտ զմար-
 դիկ տեղի և հանգիստ կամացն հօր և ինքեան .
 և այսու օրինակաւ զայլ սաղմոսն քննեան
 կարգաւ :

Իսկ սակաւագն յորժամ զայսքան աստութիւն
 պարգևացն աստուծոյ ծանեաւ 'ի սաղմոսէ : հը-
 բաման տայ ժողովրդեանն ասելով : Ո՛վ եղբարք՝
 ծանենք մարգարէիւս թէ որչափ գթու-
 թիւնն աստուծոյ 'ի ձեռն քրիստոսի հեղաւ
 'ի վերայ մեր : Արդ քաջալերեալք այսու յու-
 սով՝ Խնդրեցուք հաւատով և միաբանու-
 թեամբ 'ի տեառնէ : զի զողորմութեան զշը-
 նորհս իւր արացէ 'ի վերայ մեր :

* Մեկնութիւն : *

Այսինքն լուաք զի խոստացաւ տէրն . երկու 'ի
 ձէնջ միաբանեալք՝ զոր ինչ խնդրեցէն հաւա-
 սով՝ առնուցուն : Արդ և մեք կցորդեալք մարմնով՝
 լծեցուք և զիղձս հոգւոց և զհաւատս կամոց

'ի միաբանութիւնս, և խնդրեցունք 'ի տեսունէ
 շնորհս մեզ զմեծ զողորմութիւնս նորա, որ
 կարէ զառաջարկութիւնս տնօրինել 'ի բարի,
 Ամենակալ տէր աստուած մեր կեցուցէ և
 ողորմեսցի :

* Մեկնութիւն : *

Յորժամ ուսոյց նոցա զճանապարհ աղօթիցն
 իբրև վերակացու և դաստիարակ, ապա առ աստ-
 ուած դարձուցանէ զբանն, Տէր ասէ՛ որ ա-
 մենեցուն տիրես, և զամենեւեան նախախնամես,
 Աեցո՛ զմեզ ողորմութեամբ 'ի կործանմանէն
 մեզաց և 'ի սայթաքելոյ խորհրդոց : Իսկ եղ-
 բարցն ծանուցեալ թէ ցոյս արժան է խընդ-
 րել յաստուծոյ զկեցուցանիլն, կցորդին և ին-
 քեանք վարդապետին բանից, և զնոյն երկրոր-
 դեն ասելով : Աեցո՛ տէր :

* Մեկնութիւն : *

Քի յորժամ դու ասեն պարօպեալ խնամօք կե-
 ցուցանես՝ չիք որ համարձակի կործանել,
 Ողորմեանց մեզ տէր աստուած մեր ըստ մեծի
 ողորմութեան քում : Չայոր և զորոց ընդ սմա
 զօրութիւն դարձեալ 'ի վեր անդր ուսիր 'ի
 քարոզութեան տարկաւագին :

Քաղաքի մեծանի աղօթից նոցա . և ընդամենէքսր խօսի ընդ
Քրիստոսի տունով .



Բ Զ Գ Ե Յ Ե Ա Լ
Ես զլոյս որպէս հանդերձ աէր մեր
յիսուս քրիստոս . անձառելի խոնար-
հու թեամբ 'ի յերկրի երևեցար . և ընդ մարդ-
կան շրջեցար :

* Մեկնութիւն : *

Մեծ և անչափ է խոնարհու թիւնն քրիստոսի .
զի արարիչն երկնի և երկրի՝ մարդ եղև և
ընդ մարդկան շրջեցաւ :

“Որ եղեր քահանայապետ Քշմարիտ յաւիտենից
լստ կարգին մելքիսեդեկի . և զարգարեցեր զե-
կեղեցի քո սուրբ :”

Կարգ մելքիսեդեկի՝ մշտնջենաւոր քահանայու-
թիւնն է . որով զարգարեաց զեկեղեցի պէտպէս
շնորհօք սուրբ հոգւոյն :

“Տէր ամենակալ՝ որ պարգևեցեր մեզ զնոյն երկ-
նային հանդերձ զգենուլ :”

Երկնային հանդերձ՝ զշնորհան հոգւոյն սրբոյ
ասէ՝ որով զարգարեցաք :

“Արժանի արն և զիս 'ի ժամուս յայմիկ զան-
պիտան ծառայս քո : Որ համարձակիմ և մեր-
ձենամ 'ի նոյն հոգւոր սաշտօն փառաց քոց :
Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկա-

ցոյց, որ է հանդերձ սղծութեան, և զարդարեցայց լուսով քով:”

Խոնարհութեամբ ավերսէ զորդին ասելով, թէ-
պէտ և անսպիտան եմ՝ ի քո ծառայութիւնդ, սա-
կայն դու արժանաւորեա զիս այս հոգևոր սրշ-
տամանս, զի չէ մարմնական որպէս հրէիցն, որ-
պէս զի զայս թխատեասկ մեղս մերկացայց, և ընդ
զգեհուլ մարմնական հանդերձիս, զարդարեցի
հոգիս լուսով իմատութեան և սրբութեան:

“Ընկեան յինէն զչարիս իմ, և թօթափեան
զյանցանս իմ: Որպէս զի արժանի եղէց հան-
դերձեալ լուսոյդ առ ի քէն:”

Դարձեալ զնոյն կրկնէ, զոր այժմ ասաց:

“Շնորհեան ինձ քահանայական փառօք մտանել
՚ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնտիկ, որք
անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո:”

Խնդրէ՝ զի մաքուր մտօք յերկինս առ աստ-
ուած մտցէ, և մարմնով ՚ի պաշտօն սեղանոյն
ընդ այնտիկ՝ որք անմեղութեամբ, այսինքն
ընդ այնտիկ՝ որք նախ քան զիս անմեղ խոր-
հրդով զսոյն պաշտեցին, ընդ նոսին և ես ար-
ժանացայց:

“Զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առաքա-
տին ընդ իմատուն կուսանն, փառաւորել
զքեզ Քրիստոս որ բարձեր զմեղս ամենեցուն:”
Երկնաւոր առաքատտ այժմ զատուածային խո-
րանն կոչէ, և իմատուն կուսանք՝ զհամագա-

տակիցս իւր զժառանգաւորս եղեղեցւոյն :
 “ Զի դու ես սրբութիւն անձանց մերոց , և
 քեզ բարերարիդ աստուծոյ վայել է վառք , իշ-
 խանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւի-
 տեանս յաւիտենից :

* ԶԷ՞նչ նշանակէ յե՞ր զԳԷ՞նոյն՝ ո՞ր Ը՞նդին Սոսր՞ք
 ողօ՞րէն : *


Եւ յետ զգեճնլոյն գայ առաջի սրբոյ սե-
 ղանոյն , և անկեալ 'ի վերայ երեսացն՝
 ասէ զաղօթս առ սուրբ Տոգին , զոր ասացեալ
 է սուրբ Տօրն մերոյ Գրիգորի նարեկացւոյ՝ ար-
 տասուօք :

* ՄԷ՞նչո՞ւնիւն : *

Քահանային յետ առ քրիստոս աղօթելոյն ,
 դառնալն և առ Տոգին սուրբ աղօթելն՝ զայն
 յայտ առնէ , վասն զի յետ քրիստոսի՝ Տոգին
 սուրբ եղև մեզ նախախնամօղ , և ամենայն ե-
 կեղեցական գործոյ կատարիչ 'ի ձեռն Տրեշ-
 տակաց միջնորդութեան , Յաղագս որոյ յետ
 ինդրելոյ 'ի քրիստոսէ զսրբութիւն , այսուհետեւ
 առ Տոգին մատչի աղերսել , զի մի՛ արգել-
 ցէ զգործակցութիւն իւր յառաջիկայ գործոյն ,
 և անկեալ 'ի վերայ երեսացն՝ մատուցանէ
 զաղօթան , որպէս թէ՛ մինչև եմք 'ի քէն

զօրացեալ : կօրագլուխ եմք, և իբրև զօրանամք 'ի քէն : համարձակութեամբ զձեռս և զգլուխս առ քեզ ամբառնամք :

* Աղօլ+ : *

 մենակա՛լ աստուած, բարերար և մարդասէր, աստուած բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող ինամօղ և խաղաղարար հօր հզօր հօգի :

* Մէկնութիւն : *

Այսու ամենայնիւ ցուցանէ զհօգին սուրբ աստուած հօր և որդւոյ հաւատար, արարիչ և ինամածու արարածոցս :

“ Հայցեմք բազկատարած մաղթանօք, գոչմամբ հեծութեան յննգիման եղեալ քեզ ահաւորիդ : Մատչիմք մեծաւ դողութեամբ, սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանասկանս զայս պատարադ քում անգննին տէրութեանդ : ”

Իբր թէ հօգւոյն աչօք նայեցեալ տեսանէ զմեծ և զտակալի զգահոյս թագաւորին՝ որոյ կայ առաջի և զարհուրեալ դողայ յահէ նորին, յաղագս որոյ նախ զայսպիսի աղերս արկանէ առաջի նորս :

“ Իբր աթոռակցի փառակցի և արարչակցի, հայրենի անկասողտ պատւոյդ : ”

Ջհագին սուրբ կոչէ Տօր աթուակից և փառաս
կից և արարչակից: Յորմէ անկապուտ. այսինքն՝
անկողարուտ մնայ յայնպիսի պատուոյն:

“Եւ քննողի ծածկութեան խորոց խորհրոց՝
ամենակատար կամաց Տօրդ էմմանուէլն՝ զքեզ
առաքչի՝ փրկչի և կենդանատուի և արարչի
ամենայնի:”

Քննօղ է խորոցն Տօր Տագին: զոր էմմանուէլն
առաքեաց:

“Ի ձեռն քս ծանուցաւ մեզ երբեակ անձնա-
ւորութիւն միասնական աստուածութեանդ. յո-
րոց մի և դաւ ճանաչիս անհաս:”

Ջգիտութիւն երբորդութեան՝ որդին յայտ-
նեաց մեզ քե:

“Քե՛ և ՚ի ձեռն քս առաջինքն նահապետական
տոհմին շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալքն
զանցեալն և զգալցոսն՝ զեղեալն և զոչ գոյս-
ցեալն անստուերաբար բարբառով բանի վե-
րապատմեցին:”

Ջմարգարէիցն ասէ՝ որք շառաւիղեցան ՚ի նա-
հապետէն արբաստմու: որք զչեղեալն իբրև զե-
ղեալ տեսին և պատմեցին:

“Հնգի աստուծոյ քարողեալ զքեզ մովսիսի: որ
՚ի դնալն քոյ ՚ի վերայ շրոցն. անպարագիր զօրու-
թիւնն՝ ասեղջ բջարկութեամբ տածողականաւ՝
թևապարփակ սլաշտպանողօրէն գթասիրեալ ՚ի
ճնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանու-
ցեր:”

Ձայն ասէ՝ զոր ստաց մտխտէս : Հոգի աստու-
 ծոյ շրջէր 'ի վերայ շուրջ : յայտ առնէ թէ
 թեօք քո խնամոց զկենդանականդ զօրութիւն
 'ի շուրմն գնէիր : որ օրինակէր զաւազանիս
 խորհուրդ : Ձի որպէս յայնժամ հոգւոյն շրջ-
 մամբ կենդանիք ծնանէին 'ի շրոցն : նոյնպէս
 և այժմ նոյն հոգւովն աստուծոյ մարդիկ ծը-
 նանին 'ի կեանսն յաւիտենից :

“Յոր կերտարան օրինակութեան՝ նախ քան զկա-
 ռուցանելն զլոյծ մածուած վերջնոյ վարագու-
 բիդ : յօրինեցեր կարօլ տիրապէս զբովանդակ
 բնութիւնս ամենից բնակից : բոլորից գոյից ա-
 մենայն էից յանէից :”

Ձաւազանին խորհուրդն ասէ : թէ նախ քան
 զհաստատիլ շրջէն կամարին՝ զոր լոյծ մած-
 ուած և վերջին վարագոյր կոչեաց : խորհուրդ
 մկրտութեանն հոգւովդ նկարեցաւ :

“Քե՛ս ասեղծանին 'ի նորոգութիւն յարութեան
 ամենայն եղեալքս առ 'ի քէն : յայնմ ժամա-
 նակի՛ որ է օր վերջին այսր կենցսդ և օր
 առաջին երկրին կենդանեաց :”

Ձյարութիւն մեռելոցն 'ի հոգւոյն սրբոյ ասէ
 լինիլ : որպէս և դաւիթ ասէ : Առաքես զհո-
 գի քո : և տանաս զնորս : և նորօգես զերեսս
 երկրի :

“Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն : որ-
 պէս և հօրն իւրում՝ ազգակիցն քո : էակիցն

Տօր, անդրանիկն որդի մերովս կերպիւ :”
 Զմարդանալն՝ զխաչն և զայլն ամենայն յանձն
 առնուլն որդւոյ՝ հնազանդութիւն կոչի Տօր և
 հօգւոյն : քանզի զփրկութիւն մարդկան՝ զոր
 հայր և հօգի կամէին՝ եկն որդին և զայն
 գործով՝ ՚ի մեզ կատարեաց :

“Զքեզ աւետարանեաց Քշմարիտ Աստուած՝ հա-
 ւասար և համագոյ Տօր իւրոյ հզօրի : և զառ ՚ի
 քեզ հայհոյութիւնն՝ անքաւելի քարոզեաց, և
 իբր զաստուածամարտիցն՝ զառ ՚ի քէն հետե-
 լոցն չարաբանական բերանն կարկեաց, և
 զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն՝ գտիչն
 ամենայնի :”

Քանզի ասաց, որ ոք զորդւոյ ասիցէ բան՝ թող-
 ցի նմա, բայց որ զհօգին սուրբ հայհոյեցէ՝
 մի՛ թողցի, և այսու եցոյց մեզ զհօգւոյն աստ-
 ուածութիւնն :

“Որ վասն մեզաց մերոց մասնեցաւ և յարեաւ
 վասն զմեզ արդարացուցանելոյ :”

Յնչտ է թէ Որդին :

“Նմա փնտք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանու-
 թիւն ընդ Տօր ամենակալի : Հոգւով զորդի,
 և Որդւով զհօգին փառաւորեմք յաւիտեանս
 յաւիտենից : Դարձեալ՝ կրկնեցի ՚ի նոյն կարգ-
 բանի, մինչև վտտահութիւն վերահայեցողու-
 թեանն լուսոյ հրաշապէս ազդեալ յայտնեցի՝
 աւետարանել վերտոին՝ կրկին խաղաղութիւն :”

Մինչև յայս ասէ՛ որ մտօքս՝ ՚ի վեր Տայեցայ
 ՚ի լոյս խնտոտից քոց • նոյն լուսոյ զօրութիւն
 հրաշագէս ազգեալ յայտնեացի մտացս • զի խը-
 ռութութիւն մտացս առնուցու վերստին զկրկին
 խաղաղութիւնն •

Աղաչեմք և աղերսեմք արտասուալից հա-
 ռաչմամբ յամենայն անձնէ զփառա-
 ւորեալ արարչութիւնդ անեղծ և անսակեղծ
 անժամանակ հոգւոյդ գթածի •”

Ասան զի արտասուքն է՛ որ զհոգւոյն աչն լու-
 սաւորէ • և հառաչանքն է՛ որ զքոց սիրոյն քը-
 րիստոսի աղերսական ձայնիւ և արտասուածոր
 կողկորանօք աստուծոյ ընծայէ •

“Որ բարեխօսդ ես վասն մեր յանմուռնչ հեծու-
 թիւնս առ սղարմածդ հայր •”

Ձի հոգին է՛ որ վասն մեր բախելօն է • ասէ
 առաքեալն • քանզի յորժամ ՚ի սիրսս մեր հե-
 ծեմք անմուռնչ • հոգին սուրբ զփղծուկ սըր-
 տից մերոց տեսանէ • և զայն հօր մատուցանէ •
 և վասն մեր բարեխօսէ •

“Որ զսուրբն պահես • և զմեղուցեալն մաքրես •
 և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կա-
 մաց բարձրեալդ հօր •

Քանզի հոգին սուրբ է՛ որ պահէ զսուրբն ա-
 ռանց վաստեց • և մեղուցեացն զղջումն ապաշա-
 ւանաց տայ՝ որով մաքրին •

“Արդ ազատենն զմեզ յամենայն անմարտի գործոց՝ որ ոչ է հաճոյ քու՛մ: Բնակութեանն:”

Վասն զի հոգին տւրբ ոչ հաճի յանմարտւոյս բնակիլ: և

“Եւ մի՛ շիջցին առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ՚ի տեսականացս աչսոց իմաստից:”

Լոյս շնորհաց կոչէ զքանազան շնորհս տւրբ հոգւոյն. հայցէ զի մի՛ շիջանիցին նոքա ՚ի հոգւոյն տեսողութենէ: և

“Վասն զի զքեզ ուտաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից և ընտիր վարուց խնկելոց:”

Արդարև ՚ի ձեռն աղօթից և ընտիր և անուշահոտ վարուց միանայ ՚ի մեզ տւրբ հոգին: և

“Եւ քանզի՛ մինդ յերրորդութենէդ պատարագի. և միւսդ ընդունի հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ: Իսկ դու ընկալիս զմեր պաշտանս. և յարդարեացես զմեզ յօթեանս պատուականս ամենայն պատրաստութեամբ ՚ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ:”

Որդի պատարագի. և հայր հաճի. իսկ հոգին տւրբ՝ որպէս կամակից հօր և որդւոյ՝ զմեզ սրբէլ պատրաստեսցէ ՚ի ճաշակումն անմահ գառինն: և

“Առանց պատժոց դատապարտութեան ընդունիլ զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան. և հալեսցի ՚ի հրոյս յայսմանէ գայթակղութիւնս մեր. որպէս մարգարէ ին՝ կեն-

զանախարոյի կայծակամբնն 'ի ձեռնն ունելէացն
մատուցմանն :''

'Ի մեծ երկիւղի կայ • զի մի՛ գուցէ անմահու-
թեանն դեղս այս՝ մահու առ թ լիցի • վասն ո-
րոյ հայցէ զի հալեացի յաստուածային հրոյ
սուրբ խորհրդոյն՝ մեղացն զայթակիւթիւն •
որպէս և մարգարէին՝ յաստուածային կայծա-
կանէ :

“ Զի յայտ ամենայնի քոյդ քարոզեացի գթու-
թիւնն • որպէս որդւոյդ աստուծոյ հօր քաղց-
րութիւնն :''

Զի որպէս որդին իւր շնորհօքն զոր արարն՝
զհօրն քաղցրութիւնն եցոյց մեզ • նոյնպէս և
դու որբելոյդ զմեզ՝ զանուն քո տէր փառա-
ւորեան :

“ Որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժա-
ռանգութիւնն • և զպոռնիկն յառաջեցոյց յերկ-
նային արքայութիւնն արգարացն երանութեանն :''

Զքրիստոսին 'ի մեջ առնու զտղորմութիւն • և
աղերսէ զհօգին ասելով թէ որպէս որդին
զնոսա արգարացոյց ձրի • այպէս և դու ինձ
տղորմեցիս :

“ Այո՛ այո՛ տէր և ես մի եմ 'ի նոցանէ • և զիս
ընկնլ ընդ նոսին իբր մարգասիրութեան կա-
րօտեալ մեծի • զշնորհօք քո ապրեալս • և զա-
րեամբ քրիստոսի ոտացեալս • զի այտ ամե-
նայնի՝ յամենայնի ծանիցի քո մարգասիրու-
թիւնդ :''

Արկին թախանձանօք աղաչէ զՏօգին ստեղծ,
որպէս որդին առ սրունիկն մարդասիրեաց, և
զանառակ որդին հայրն ընկալաւ, այսպէս և
դու առ իս մարդասիրեան՝ որ նման եմ նոցա,
քրիստոս արեամբն զնեաց զիս, և դարձեալ
գերեցայ, այսուհետև քումդ կարօտ եմ շնոր-
հի և օգնութեան՝ յոր աւանդեաց զիս պահել,
արդ յայտնեան զմարդասիրութիւնդ երկնաւորաց
և երկրաւորաց առ իս ողորմութեամբ և ըս-
տացիր այսու փառս յամենեցունց,

“Ընդ հօր փառաւորեալ համապատուաբար,՝ ի
մի կամս և ՚ի մի իշխանութիւն զովութեան,
Ջի քն է գթութիւն և կարողութիւն և մար-
դասիրութիւն՝ զօրութիւն և փառք յաւիտեանս
յաւիտենից ամէն, ”

Բռհնայն Գոյ ոռւնիեր ընծայորնի խորնին . ուս որ
մոգոսյոնի նովսուարկուսին զնշխորն . եւ ոռեալ Գռհնայն
դնէ ՚ի մաղղմոյն ոռելով .

Յիշատակ տեառն մերոյ յիսուսի քրիստոսի :

Եւ ոռեալ զգիտիւն՝ ոռկունէ ՚ի ոկիհն ոռելով .

Յաղագս յիշատակի փրկագործ սնօրէնութեան
տեառն աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի
Քրիստոսի :

Յիշատակ կոչէ քրիստոսի զհայն և զբաժակն

ըստ քրիստոսի անուամբ բանին՝ զոր ասոյն թէ՛ .
 Ջնյս արարէք առ խնայ յիշատակի՛ . որպէս թէ՛
 'ի յիշումն ածեմք հօրն և աստուծոյ զմահ
 որդւոյն իւրոյ յիսուսի՛ . Ջոր օրինակ՝ եթէ ոք
 բարկացեալ իցէ ումիք վասն յանցանաց ինչ .
 և նա ողորցցէ զնա . և զմահ սիրելի որդւոյ
 նորին 'ի յիշումն ածցէ նմա . այսպէս և մեք
 զմահ և զչարչարանս միածնին յիշեմք առաջի
 հօրն իւրոյ երկնասարի՛ որ բարկացան մեզ վասն
 մեզաց մերոց . և 'ի դուրս յորմութեան շար-
 թեմք զնա վասն մեր :

* Եւ Կոնստանտինոս Ի Ժածուէ զաղօթն Յովնանու Ու-
 իեթերանն :

Տէր աստուած մեր՝ որ զերկնաւոր հացդ զտէր
 մեր յիսուս քրիստոս զկերակուրդ ամենայն աշ-
 խարհի՛ սուսքեցեր փրկիչ և կեցուցիչ և բա-
 րերար օրհնել և սրբել զմեզ : ”

Առ հայր աղօթէ ասելով . դու հայր՝ ողորմե-
 ցար և զորդիդ քո՛ որ հաց երկնից անուանեաց
 զինքն՝ մեզ 'ի փրկութիւն և 'ի սրբութիւն
 սուսքեցեր :

“ Ինքնին դու տէր՝ օրհնեան և այժմ զառաջա-
 դութիւնս զայս : Ընկալ զսա յերկնային քո
 սեղանդ : ”

Եւ այժմ ասէ օրհնեան զնութս զայս՝ զոր ա-

ռաջին քո եղաք, և արժանի արն զոս ընդունիլ յերկնային սեղանն, այսինքն 'ի խորանն սուրբ, և կամ յիմանալին՝ որ յերկինս է :
 “Յիշեան որդես բարերար և մարդատէր զմատուցողս և վասն որոց մատուցանի : Եւ զմեզ անդատապարտ սրահեան 'ի քահանայազործութիւնս աստուածային խորհրդոց քոց :”

Երևա իրս հայցէ, մի՛ զի մատուցողաց պատարագին՝ որք են քահանայական դասքն՝ լիցի սն 'ի փրկութիւնս : Եւ երկրորդ՝ թէ վասն որոց մատուցի այսինքն ամենայն աշխարհի : Եւ երրորդ՝ զի և ինքն իսկ յանդատապարտութեան մնացէ յաստուածային խորհրդոցն քահանայազործութիւնս :

“Ձի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւնս փառացդ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ այժմ և միշտ և յսլխտեանս յսլխտենից ամէն :”

* Եւ սպա մարտացեալ Մարկոսոսին՝ ծածկէ դասաստիւանս :
 * Եւ սպա խոփանորեաց, զվոյել : * Եւ սպա խոփանի 'ի ճեռս Կահանային՝ առննէր կաշով նորոս :



Մարկոսոսին պաշտօնեայ թարգմանի և ըստ ստուար, և պաշտօնեայ է սա ոչ մարդոյ, այլ աստուծոյ և նորին սեղանոյն և բանին : Եւ է տրա աստիճան՝ Ստեփաննոսին և իւ-

բոցն, որպէս ասէ պատմութիւն գործոց առաջ-
 քերտցն, եթէ ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն
 աստուծոյ և պաշտել զսեղանս: Ընտրեցէք
 Եղբարք վկայեալս 'ի ձէնջ արս եօթն' լիս հա-
 գալ սրբով և իմաստութեամբ, զորս կացուս-
 ցուք 'ի վերայ պետոյիցս այսոցիկ: Եւ մեք ա-
 ղօթից և պաշտաման և բանին հպատակ լի-
 ցուք: Եւ հաճոյ թուեցաւ առաջի ամենայն
 բազմութեանն, և ընտրեցին զՍտեփաննոս՝ այք
 լի հաւատով և հոգևով սրբով, և զԼևրոն, և
 ձեռնագրեցին առաքեալքն զնոսա՝ 'ի պէտս այ-
 սորիկ: Վասն որոյ՝ յորժամ պատարագէրն Պետ-
 րոս՝ Ստեփաննոսի հարկ էր բերել զսպան և
 զհացն առաջի նորա, բանալ և ծածկել,
 մսքրել և պահել, և ինքն միայն զաղօթան
 կատարէր 'ի վերայ: Նմանապէս և սա զնորս
 գործ կատարէ զսպասուորութեանն, և քահա-
 նայն զպատարագին միայն զաղօթան և զօրհնու-
 թիւնն:

Երկրորդ՝ քահանայն պատմէ առ աստուած՝ 'ի
 ժողովրդենէն: Իսկ տարկաւագն զնուէրն և զըն-
 ծայն բերէ ընդ նմա զ'ի նոցանէ առաքեալս:
 Քանզի անմտութ է պատգամաւորի իւրովի առ-
 նել զընծայն և խօսիլ զբանն, որպէս և
 մարդկան այս է սովորութիւն, այլ նա միայն
 զհրեշտակութիւն բանիցն առնէ, իսկ սա ըզ-
 նաւէրոն բերէ մինչև 'ի նա: Եւ նա առեալ

ինքնին քահանայն՝ դնէ առաջի աստուծոյ՝ ի սեղանն ։

Արդ՝ է սարկաւազն պաշտօնեայ տէրունական սեղանոյն և նորին սպասուցն ։ Իսկ կիտասարկաւազն՝ քահանային և նորին զգեստուցն ։ Վասն այսորիկ ո՛չ է պարտ սորա համարձակիլ յամենայն տէրունիսն և ձկաիլ ։

Նա և ո՛չ քահանային՝ որ ազօթիցն է հպատակ՝ պարտ է ՚ի գործ ձեռնարկել ։ Այլ հպատակութիւն սպասաւորութեան մարմնական նշանակացն կատարէ սարկաւազն առննթեր նորին համարձակաբար ։ զծածկելն և զբանասն ։ զածելն և զտանիլն ։ և զորս ՚ի նոյնս յարին գործ ։ Իսկ մեկնութիւն սաղմոսին՝ տեսեալ զվերնագիր սաղմոսին՝ բաւական համարիմ ՚ի յայտնել ըզգօրութիւն նորին իմաստնոցդ ։ և առանց քննութեանն ։ զի գրեալ է ։ Օրհնութիւն գովութեան ինքեան դաւթի՝ յաւուր միաշարաթու ։ յորում երկիր հաստատեցաւ ։ Քանչև՝ ահա տեսանեմք զհաստատութիւն երկրի՝ զոր ՚ի քրիստոսէ ընկալաւ շնորհօք մարդեղութեան նորին ։ Ապա եթէ վասն առաջին արարչութեանն էր օրհնութիւնս՝ ո՛չ ասէր հաստատութիւն իբր զբոլեցելոյ ։ եթէ՝ Հաստատեաց զաշխարհս զի մի՛ սասանեցի ։ այլ՝ ստեղծուած և գոյութիւն ։ Ուրեմն յայտ է թէ այն ստեղծեալ երկիրն և բնակիչք նորա ՚ի մեղացն ա-

գամայ անիծեալ և դրդուեալ եղեն, այսօր 'ի նոր ագամս քրիստոս օրհնեցան և հաստատեցան, Սակս որոյ և մարգարէս շնորհակալ և գովասան և ներբողիչ լինի նմա օրհնութեամբ երգոյս ասելով: Տէր թագաւորեաց և այլն, Իսկ քահանային խնկեին՝ զայս յայտ առնէ, վասն զի՝ խունկն զգալի անուշահոտութիւն է, որպէս և աղօթքն՝ իմանալի: Արդ ոչ բաւական համարի զիմանալի աղօթսն մատուցանել, այլ և զգալի խունկն:

Վասն զի ոչ միայն հոգի իմանալի ունիմք, այլ և մարմին զգալի, վասն որոյ զերկոցունցն առնեմք զօրինակ, զոր և աղօթքն յայտ առնէ՝ որ ասէ:

* Աղօթ: *

Բունկ մատուցանեմք առաջի քո քրիստոս՝ բուրուճն հոգևորական:”

Այսինքն ընդ զգալի խնկոցն և զհոգւոյս ծուխ արծարծմամբ սիրոյ կայծականց աղօթիւք նուիրեմ քեզ:

“Ընկալ 'ի սուրբ յերկնային և յիմանալի քո մատուցարանդ՝ 'ի հոտ անուշից:”

Երկնային մատուցարան՝ նոյն ինքն է Յիսուս, յոր վերառաքեմք զաղօթս մեր:

“Առաքեա՛ն առ մեզ փոխարէն զշնորհս և զպար-

զևս հոգւոյդ սրբոյ :

Եւ զի այսմ եմք կարօտք՝ զի զհոգիդ օուրբ
տացես մեզ գործակից : Եւ քեզ մատուցանեմք
փառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :

Եւ ոպո գահանայն ի զոնէ նոսօ գահաբէր ի Աջ Եկեղեցւոյն .
և ծիէ Ռէնայն լրմոն Եկեղեցւոյն մինչև ցլեպին ժողովարդն .
և գաղթօնէայրն ունն շարախոն խնկոցն , մինչև գահանայն
Դառնոյ ի խորանն :

* ՍԵՆՆԱՌԻԱՆ : *

Էմ խորանին՝ որ է սրբութիւն սրբոյ՝ Է
Երկինք երկնից և տեղի աստուծոյ . իսկ
տաճարն՝ երկնից հաւատար , և ժողովուրդն որ
'ի նմա՝ հաւատար հրեշտակաց : Եւ քահանայ-
ին խնկելն շուրջ զսեղանամին , և անտի իջա-
նելն և ժողովրդեանն խնկելն և դարձեալ՝ ի
նոյնն դառնալն՝ զսոյն նշանակէ . քանզի քա-
հանայն սրտակեր է քրիստոսի . և թէպէտ՝
բարձրագոյն է երանութիւն որդւոյն աստուծոյ .
սակայն եկն և էջ առ մեր նուատ բնութիւնս
առնլով զմերս զամենայն բնց՝ ի մեղաց : Եւ
դարձեալ համբարձաւ յիւրն սեպհական տեղի
'ի ծոցն հայրական :

Սոյնպէս և քահանայապետս քրիստոսի նմանե-

լով՝ եկն և էանց ընդ ամենեւեան, մինչ զի
 յեամոցն հաւատարեցաւ, և ապա դառնայ և
 դնայ և մտանէ յիւրն տեղի ՚ի խորանն սուրբ,
 Իսկ խուսկն զնախախնամական զօրութիւնն
 քրիստոսի յայտ առնէ, որ անտուտ ՚ի վերուստ
 ՚ի սեղանոյն գայ և անցանէ ընդ ամենեւեան
 խնամելով զամենայն արարածս: Սակայն դար-
 ձեալ անհաս միայ յամենեցունց, և ինքեան
 միայն հասանելի: Սոյնպէս և խնկարկութիւնն,
 ՚ի սեղանոյն եկեալ՝ դարձեալ առ սեղանն
 ընթացաւ: Այլ և այսու օրինակաւս զիւրն
 ներգործութիւն ցուցանէ: Քանզի որպէս քա-
 հանայապետն զձեռնագրութեան շնորհս և ըզ-
 քահանայութիւն և զքարոզութիւն և զվար-
 դապետութիւն աննախանձաբար բաշխէ ամե-
 նեցուն, որպէս և խնկարկութեամբն եցոյց,
 դարձեալ և ինքն անըմբռնելի միայ ՚ի նուաստ
 ինչ վարուց և ՚ի գործոց, այլ միայն յիւրն
 սեպհական տեղի առ աստուած ունի զմտացն
 դիտաւորութիւն:

Այսպէս և խորհուրդ սուրբ պատարագիս, զի
 թէպէտ ամենեքեան հաղորդիմք սմա, և սր-
 բիմք ՚ի սմանէ, բայց կայ և միայ յիւր անհա-
 սութեանն, և միայն հոգւոյն սրբոյ է սա ի-
 մանալի:

Եւ ապա իջնէ սորէստագն՝ ՚ի մէջ Էկեղէցասն . եւ ջանէ
 ՚ի խորանն առ Կահնոյն ոսելով . Օրհնէան Տէր : Եւ Վ. Կ.
 հանայն ոսէ . Օրհնէալ Լուգուորուելան Հօր եւ Որդւոյ եւ
 Հոգւոյն «բնոյ ոյժմ եւ յիշու եւ յաւիտեանն :

* Մէկնութիւն : *

Որպէս եցոյց բանն՝ զի քահանայապետն
 նման է քրիստոսի : Արդ որպէս քրիս-
 տոս՝ թէպէտ ինքն կամի զբարեխօսելն վասն
 մեր, սակայն կամի՝ զի և միք աղերսիցեմք զինքն,
 նոյնպէս և սա յօրինակ քրիստոսի եմուտ
 յերկինս, որպէս ՚ի խորանն սուրբ առաջի աս-
 տուծոյ բարեխօսել վասն Ժողովրդեանն, վասն
 որոյ անկ է նոցա զի աղաչեցեն զքահանայն,
 զի մտղթեցէ վասն նոցա : Եւ սարկաւազն՝ որ
 վարդապետ է Ժողովրդեանն և միջնորդ նոցա
 առ քահանայն, իբր բերանով ամենայն Ժողո-
 վրդեանն ձայնէ առ նա, իբր յերկրէ յեր-
 կինս, ՚ի տաճարէն առ քահանայն . Օրհնէան
 տէր, այսինքն՝ դու ես տէր մեր փոխանակ
 քրիստոսի . Արդ օրհնէան և մատն զաղաչանս
 մեր առաջի աստուածու թեան . Եւ նա ասէ .
 Օրհնեալ թագաւորու : Վասն միժամեծ խոր-
 ճրդոյ հանդերձեալ է ինդիր առնել, վասն
 այսորիկ օրհնէ դոհանալով զառեալ սարգևացն,
 զի զայլ և ստացէ :

Եւ ապա թամբուսք ըստ ուսուցիչ խորհրդոյն : Եւ 'ի հաստ-
քէնէ Գորգիէ Գորգիէստեփն . Եւ եւս խաղաղաւ : Եւ Գորգի-
նայն տեղ զԵրուստիս :

Տէր աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ ան-
քննին է . և փառքդ անհասանելի : Որոյ ողոր-
մութիւնդ անչտի է . և գթութիւնդ անբաւ :”
Իբրև զորդի համարձակ պատմէ զանքննելի և
զանհասանելի կարողութիւն փառացն աստուծոյ
և զանբաւ և զանչտի ողորմութիւն գթու-
թեան նորա :

“ Դու ըստ առատ մարդասիրութեանդ քուժ
նայեանց 'ի Ժողովուրդս քո և 'ի տաճարս յայս
սուրբ : Եւ արն ընդ մեզ և ընդ աղօթակիցս
մեր առատապէս զողորմութիւն քո և զգթու-
թիւն :”

Ձի քահանայն հայր է Ժողովրդեանն . աղօթէ
առ աստուած մարդասիրապէս ինամօք հայիլ
'ի նոսա . և ինքեան իսկ՝ և աղօթակից Ժողո-
վրդեանն հայցէ առնել զողորմութիւն իւր :
“ Ձի քեզ վայել է փառք՝ իշխանութիւն և
պատիւ այժմ և միշտ և յա՛”

Եւ զի նի սորէն ոտէն սաղմոս եւ շարախոն ըստ ուսուց խորհրդոյն : Եւ Կոհոնայի ն սոկոս էնէ 'ի Բոքեոյ էրեւոյ 'ե սեղանոյն' ոտէ 'ի ծածոսէ շարախոս :

* Մէկնուելան Աղօթեցո : *

“Տէր աստուած մեր՝ կեցո՞ զժողովուրդս քո . և օրհնեան զժառանգութիւնս քո :”

Ժողովուրդ մեք անուանիմք քրիստոսի սեպհական՝ գնեալք արեամբ նորա . ըստ որում ասէ սօղոս առ երիցունս եփեսացաց : Ջգոյշ լերուք հօտիդ՝ յորում եդ զձեզ հօգին սուրբ , հովուել զժողովուրդ տեառն . զոր գնեաց արեամբն իւրով : Արդ զի այսպէս զգոյշ կալ հրաման առին . և 'ի նոյն ինքն 'ի քրիստոսէ աղերսեն զսպասանութիւնն . որոյ և ժառանգութեան վիճակի հօտս :

“Ջլրումն եկեղեցւոյ քո պահեան :”

Այսինքն թէ՛ մի՛ զոկեցի ոք 'ի բաղմութենէ մերոյ ժողովոյս , յափշտակեալ 'ի սատանայէ . այլ պահեան անխորով :

“Սրբեա զնոսա՝ որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո :”

Քահանայն 'ի պէտս սրբելոյ ժողովոցս աստ ապաւինեալ յօճառս աղօթից մերոց՝ աղաչէ ասելով . Արդ դու որպէս ամենաբաւական հօտոյ՝ սրբեան զնոսա ըստ հաւատոց նոցա և առաւել քան զնոյնս :

“Դու զմեզ փառաւորեան աստուածային զօրութեամբ քով, և մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ :”

Ձի քեզ սպասեալ յուսամբ, և դու ես կարայես փրկութեան մերոյ, զսղաքատացեալս հարստացն աստուածեղէն առտո կամօքդ, և մի՛ առներ անտես որպէս բազումսղօրմ : Ձի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն :

* Խորհրդանշան տէնէցան : *

“Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր ալօթել : Եւ զերկուց և զերից միաձայնեաց յանուն քո՝ զինդբուածս պարգևել խոստացար :”

Պարզաբար զհրամանսն քրիստոսի՝ նմին յուշած է զասացեալսն, եթէ երկու 'ի ձէնջ միաբանեցին՝ զոր ինչ ինդրեացեն, եղիցի նոցա : Եւ դարձեալ՝ ուր իցեն երկու կամ երեք յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա : Արդ զժողովիլս և զալօթելս՝ 'ի քէն ուսաք, և ոչ եթէ անձամբ անձին ժպրհիմք մարդիկս ընդ աստուած խօսիլ, այլ զի լուսք ատացեալ թէ զոր ինչ ինդրիցէք, եղիցի ձեզ :

“Դու տէր և այժմ զճառայից քոց զինդբուածսն առ 'ի յօգուտն կատարեան :”

'ի քէն ինդրեմք՝ որ զինդրելա ուսուցեր և վայելուչ է և քեզ զքո խոստումն կատարել և որպէս և դու քննես զօգուտն մեր ։

“ Ընորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քոյդ ճշմարտութեան և 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականն պարգևելով ։ ”
Աստ այնմ կարօտիմք՝ թէ զկամս աստուծոյ գիտիցեմք և 'ի ճանապարհս վկայութեանց նորա լինիցիմք իմաստունք՝ զոր և ինդրէ ։ Քանզի այսքիկ են՝ որք առաջնորդեն մեզ տանիլ 'ի յաւիտենական կեանսն ։

“ Զի բարերար և մարդասէր ես աստուած և քեզ վայել է փառք և ” ։ ”

Եւ 'ի Տիջի րոն շարակնին երկնալ առջի Էնին՝ երկրպագանին երեցո և բարանոյն առէ զողօխ զոյս ։

Տէր աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս ըզգասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց արն արժանի այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց և լինիլ պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեանդ ։ ”
Այս ինչ է զօրութիւն բանին ։ Թէ որպէս յերկինս իմանալեացն դասք՝ քեզ սպասաւորեն ։ այսպէս և աստ յեկեղեցւոջ՝ որ է երկին 'ի վերայ երկրի՝ նոյն պաշտօն քո և մեզ կցորդեցին ։

* 'ի չոյն : *

“ Զի քն է կարողութիւնս և զօրութիւնս և փառք
յաւիտեանս : ”

Էս համբարէնս զսեղանն . և յաւարտման շարունակն գո-
ղեցէ որհաւագն բարձր չոյնիս . Պատուաւ . և բարձ-
րացոյցանէն զաւեպորանն սուրբ . և ժողովուրդն երգէն
չոյնիս զերեւորբեանն տելով .

ՍՈՒՐԲ աստուած . Սուրբ և հզօր . Սուրբ և
անմահ՝ որ խաչեցար վասն մեր՝ ողորմեան մեզ :

* Մէկնուիտան այսոցիկ : *

Երգ շարականացն և քաղցրամուլագ ձայն
սաղմոսացն զայս ունին խորհուրդ . Քան-
զի ամենայն ժողովուրդքն 'ի հոգս և 'ի զբաղ-
մունս աշխարհիս խուճապեալ՝ եկին և մտին
յեկեղեցին . ոմն յիշխանական հոգոց . այլ ոմն
'ի դատողական ատենէ . կէսք յաշխատութեանց
մարմնոյ . և այլք 'ի զանազան արհեստից . և
ամենեքեան հաւաքեալ 'ի միատին 'ի սուրբ
եկեղեցին . բայց դեռ ևս անբոխեալ կան :
Վասն որոյ՝ նախ հեշտալուր երգք սաղմոսացն և
շարականացն քաղցրացունեն զլսելիս ժողովու-
րեանն , զի մաքրեցին 'ի մտաց նոցա մարմնա-
կան հոգքն , և երգովքն միացին առ աստուած :

Եւ իբրև այս այսպէս աւարտի, սարկաւազն
 ընդոստուցանողական ձայնիւ գոչէ. Պաօսխուժէ,
 այսինքն՝ ուղիղ ՚ի վեր հայեցէք, և ընդ բա-
 նին զաւետարանն վերացուցանէ ՚ի տեսութիւն
 նոցա:

Իսկ ժողովուրդքն ընդոստեալ ՚ի ձայնէ սար-
 կաւազին և ՚ի վեր հայեցեալ տեսանեն զաւե-
 տարանն, որ է պատմիչ տնօրէնութեանն քրիս-
 տոսի, այլ և զմտաւ ածեն զայն՝ զոր նախ քա-
 հանայապետն իւրեանց՝ որ էր բարձրագոյն
 պատուով քան զամենեսեան ըստ նմանութեան
 քրիստոսի, ոչ ինչ յամօթ համարեցաւ զիջա-
 նելն յիւրն բարձրագոյն տեղոյ, և զգալն և
 զլինիլն իբրև զսի ՚ի ժողովրդեանէն. զի նուա-
 տացեալ՝ առ դուռն եկն. և սոցա դարձեալ
 ըստ նմանութեան քրիստոսի բարձրացեալ քան
 զամենեսեան՝ եմուտ ՚ի բեմն. որպէս և քրիս-
 տոս առ հայր ՚ի ներքին կողմն վարագուրին.
 Չայս ամենայն տեսեալ լրումն եկեղեցւոյն՝ ՚ի
 նմանութիւն երկնաւորաց և սննդարամետակա-
 նաց խոստովանի զտէր յիսուս քրիստոս ՚ի վառս
 աստուծոյ հօր ասելով. Սուրբ աստուած՝ Սուրբ
 և՛: Որպէս թէ՛ զայս կամի ասել. Դուք քր-
 իստոս աստուած մեր՝ որ նման քեզ ձեացաւ
 քահանայապետս այս, թէպէտ և դու սուրբ և
 հօր և անմահ ես, սակայն ոչ միայն բաւա-
 կան համարեցար զմարդ լինիլն և զհաւատարիլն

մեզ, այլ և զանարգ և զյետին մասն ընկալար
վանս մեր՝ որ է խաչն, վանս այնքան անպատ-
մելի խոնարհութեանդ, օղորմեաց մեզ :

Եւ նշորդի Գահնայն ժողովրդեանն որ Բողոքաւնէն ոչոտ
աղօթեալս՝ զոր ոտէ յորժամ երէնն զսուրբ տոբոսածն :

* Մեկնութեան աղօթիցս : *

“Աստուած սուրբ՝ որ ՚ի սուրբս հանգուցեալ
ես, և երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն
զքեզ և քերովբէք փառաբանեն, և ամենայն
երկնային զօրութիւնք քեզ երկիրպագանեն :”
Ջտեսութիւն մարգարէիցն Եսայեայ և եղեկի-
ելի աստ յիշէ :

“Որ ՚ի չքոյէ ՚ի գոյ ածեր զամենայն արա-
րածս, որ արարեր զմարդն ըստ պատկերի քում
և նմանութեան, և ամենայն շնորհիւ քով զնա
զարգարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստու-
թիւն և զգօնութիւն :”

Քանզի դրախտն ամենապատիկ ծառալքն զիմաս-
տութիւն առակէ, յոր եզաւ մարդն քննել
զնա և պահել, զոր աստ խնդրել ասաց :

“Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եղեր
՚ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան :”
Եւ յետ յանցանացն՝ ապաշխարութեան արժա-
նացուցեր զնա :

“Որ արժանի արարեր զմեզ զնուստացեալ և

զանարժան ծառայս քո՝ ի ժամուս յայսմիկ կալ
առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօ-
րինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն
մատուցանել քեզ, ”

” Ի քէն ասէ տուաւ մեզ այս զգատտութիւն
աղօթիցս, որ զնախատացեալ շնորհս ալարեր
մարդկան, ”

Դու տէր՝ ընկնլ ՚ի բերանայ մեղաւորացս զե-
րեքսրբեան օրհնութիւնս, և պահեան զմեզ
քոյին քաղցրութեամբդ, թող մեզ զամենայն
յանցանս մեր զկամայ և զակամայ, զգիտու-
թեան և զանգիտութեան, սրբեան զհոգի՝ զմիտս
և զմարմինս մեր, և շնորհեան ՚ի սրբութեան
պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց, ”

Պարզ է բանս, քանզի յընդունիլ աղօթիցն
հայցէ զթողութիւն մեղաց, այլ և սուրբ վա-
րուք սպասաւորել նմա հանապազ, ”

“ Բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածա-
ծնին և ամենայն սրբոց քոց՝ որք յաւիտենից
քեզ բարեհաճոյցան, զի սուրբ ես տէր աստ-
ուած մեր, ”

Աշտակից և բարեխօս առ քրիստոս են ամենայն
սուրբքն, և մանաւանդ Տիրամայրն՝ զոր ՚ի մեջ
առնու, ”

“ Եւ քեզ վայել է փառք՝ իշխանութիւն և
պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից ամէն, ”

Եւ հարարին ազօնին և երէփարէեանն 'ի միտսն . և սոր-
հաւորօքն Կորնուլի .

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեցուք : Ժո-
ղովուրդքն՝ տէր ուղորմեան :

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և
հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և ամենե-
ցուն օրհնեցութեան՝ զտէր աղաչեցուք :

Վասն ամենայն քաղաքաց և գաւառաց . և որոց
հաւատով բնակեալ են 'ի նոսա՝ զտէր" :

Վասն հայրապետին մերոյ կենաց և փրկութեան
հոգւոյ նորին՝ զտէր" :

Վասն պատուական քահանայից և որոց 'ի քը-
րխտոս սարկաւազաց, և ժառանգաւորաց եկե-
ղեցւոյ՝ զտէր" :

Վասն բարեպաշտ և աստուածապահ թագաւո-
րին և ամենայն պալատան և ամենայն ղին-
ուորացն՝ զտէր" : Չամենասրբուհի աստուածա-
ծինն և զամենօրհնեալ տիրուհին և զմիշտ
կոյսն մարիամ յիշեսչնք, և զամենայն սուրբս .
և նոքօք՝ զտէր" : Եւ ևս միա" :

Ընդէր 'ի միտսն ոչնորին՝ սորհաւորօքն 'ի մէջ եկեղեցւոյ
զԿորնուլի . և զոյժնին Կորնուլի 'ի խորունն ոտքէ՝ զազօնսն :

Մի ոք կարծեցէ վայրապար և կամ պը-
ղերգութեան վասն զսահման զոյգ մի-
մեանց լինելոյ քարոզութեան սարկաւազին և

աղօթից քահանային, և իրաւունս դատեսցի
 միոյն լուել, մինչև յաւարտիլ միւսոյն, այս-
 ինքն քահանային՝ մինչև սարկաւազն լուէ կա-
 ցեալ, և սպա սկսանիլ: Այլ պարտ է գի-
 տել թէ զուգընթաց միմեանց լինելոյ աղա-
 դաւ սահմանեցաւ: Քանզի նոյն է խորհրդոյն
 զօրութիւն, զի զոր ինչ քահանայն խորհրդա-
 բար ինդրէ՝ զնոյն և սարկաւազն ժողովրդեանն
 բարձրածայն հրամայէ աղաչել: Վասն այսորիկ՝
 համաձայն նոցա պարտ է լինիլ միմեանց, որպէս
 զի ցուցցին ժողովուրդքն աստուծոյ ըստ հրա-
 մանի դատտիարակի սարկաւազին աղաչելով՝ եթէ
 զոյգ է մեր իղծք կամաց ընդ քահանայիդ, որ
 եմուտ մեր ամենեցուն փոխանակ առաջի քո:
 Եւ թէպէտ տղայք եմք յիմաստից և ոչ կա-
 րեմք այդպէս հրեշտակաբար աղաչել զքեզ,
 սակայն զտէր ողորմեայս ձայնելով թախանձեմք,
 զի դու ողորմած կամօք տացես զինդիրս, զորս
 խորհրդապէս մաղթէ քահանայդ, և սարկաւա-
 գին յորդորեն վարդապետութեամբ քարոզու-
 թեանն զնոսա՝ ՚ի տոյնս հայի: Ապա ամենայն
 իրօք պարտ է գիտել թէ՛ ամենայն քարոզից
 զանազանութիւն առ այս հային խորհուրդ, զի
 ստիպումն ժողովրդեանն՝ վասն լինելոյ աղօթա-
 կից քահանային է, զի զոյգ միմեանց պարտին
 աղօթել և ՚ի միասին աւարտել, քահանային
 ծածուկ խօսելով, իսկ նոցա միաձայն և յայտնի:

* Մեկնախնայան գործարարներն սարկապետն ։

Քաճանայայտան յօրինակ քրիստոսի եմուտ
'ի ներքին կողմն վարադուրին բարեխօսել բո-
լարեցունց ։ Իսկ սարկապետն 'ի նմանութիւն
սերովբէիցն ։ Ղի որպէս նոքա անընդմիջաբար
գիտողք են կամացն աստուծոյ, այսպէս և սար-
կապետն գիտէ զկամս քաճանային ։

Վասն որոյ գայ առ ժողովուրդն և խորհրդա-
ղգած առնէ զնոսա թէ քաճանայայտան եմուտ
առաջի աստուծոյ բարեխօսել վասն ձեր, պար-
տիք և դուք նմա աղօթակից լինիլ, և թէ
զե՞նչ և կամ որպէս պնդա է աղօթել՝ ու-
սուցանէ ։ Եւ ևս խաղաղութեան ։

Զխաղաղութիւնն զայն՝ զոր տէրն առաց թո-
ղուլ աշակերտացն՝ որ է Հոգին սուրբ, զայն
հրամայէ ժողովրդեանն հայցել 'ի տեառնէ ։
Եւ զայս ո՛չ վասն միոյ անձին և եթ, այլ և
վասն ամենայն աշխարհի և գաւառի՝ որք զեր-
կիւղ տեառն ունիցին ։ Եւ ապա 'ի քաճանայա-
պետէն սկսանի մինչև 'ի թագաւորն, և 'ի
դասս զինուորականացն աւարտէ ։ Այլ և զտի-
րամայրն և զամենայն սուրբս յիշել, և նոքօք
զտէր աղերսել ։ Դարձեալ՝ միաբան ասէ վասն
սուրբ և ուղղախոռագաւան քրիստոնէական հա-
ւատոյս խնդրել զողորմութիւն, և անկեղծ սի-
րով 'ի վերայ միմեանց աղօթել, և ամենակալ

տեառն յանձն առնել, և 'ի վերայ ամենայնի
զմեծ զողորմութիւն 'ի յողորմած տեառնէն
հայցել :

Եւ թէ՛ սորի՞սառփէ՛ն էրփէն զտարզն , Կոհմնայն՝ ոռէ՛ 'ի
Ժժռակ զազօրն զայն :


ՏԵՒ աստուած մեր՝ զբազկատարած զաղաչանս
ծառայից քոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ
մեծի ողորմութեան քում : Զգթութիւն քո
առաքեան 'ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս՝
որք աին ունին առ 'ի քէն առատ ողորմու-
թեանդ :

“ Զի ողորմած և մարդասէր ես՝ աստուած գո-
լով և քեզ վայել ” :

Պարզ է բանս , և ոչ է կարօտ մեկնութեան :

Յեք այսրի՛ն էրիբառփէ՛ն սեղանայն՝ Կոհմնայն . և էլէալ
Էռզի յախտն . և սորի՞սառփէ՛ն քոյ 'ի յեռո՞ւ նորս զաւետ-
բուն : Եւ զոր՛ջեռլ խնորհի՛ 'ի ծռանկն նորս և ոռանս :

* Մեկնութեան : *

 ասանայապետին յաթոռն բաղմիրն զայն
յայտ առնէ , վասն զի՛ նման քրիստոսի ե-
մուտ բարեխօսել վասն ժողովրդեանն : Եւ յոր-
ժամ աւարտէ զայս զոյգ աղօթս արբասացու-
թեան , համբուրէ զսեղանն և նստի յաթոռն :

որպէս թէ զայս ասէ առ ժողովուրդն . թէ այս պատիւս և աստուածաւայելուչ փառս՝ զորս ձեացայ այժմ և նստիմ յաթոռս : ոչ է իմ սեպհական , այլ փրկչին քրիստոսի՝ որ է աստուած բոլորեցունց . իսկ ես միայն պաշտօնեայ և սպասուոր եմ նմա : Արդ որք տեղանէք զգառգամս նորա՝ ի գիրկս իմ , այսինքն զաւետարանն՝ զնոյն ինքն զտերն ձեր տալաւ տեսէք բարձրալ յաթոռն իւր , և մի՛ զին զճաստայս նորա :

Եւ զի՞նչ որքն սուրբօրոն էրգէ զսուրբն . և զի՞նչ որքն զնիւննա նոյն զնորդութեանն . և որքն զսուրբննն :

* Մէլնութիւն : *

Ընթերցմունք աստուածաշունչ գրոյ՝ ի խրատ վարդապետութեան և ի յորդորումն բարեաց են ժողովրդեանն . այլ և նախագուշակ և վկայ տեղան տնօրէնութեան : Վասն որոյ նախ մարգարէականացն է ընթերցումն , և ապա առաքելականացն . զի ցուցցի թէ մի գիտաւորութիւն է սոցս և նոցս . քանզի զոր մարգարէքն նախ գուշակեցին , որում և առաքելալքն տիրանալես եղին :

Եւ յեօ ընկերացոսոճոյ փոյ դարձեալ սաղմոսերգոան յառաջ -
 և սկսանի յալիւտայ . և ՚ի նմանէ առնոս մինայն էկե-
 ղեցին . և երկրորդէ զնոյն եղանակուս զալիւտայն . և սկսանի
 սաղմոսերգոան զսաղմոսն առանց էղանակի մինչև ցուարս փ-
 խին . և էկեղեցին երկրորդէ զնոյն նախասոց ալիւտայն :

* Մեկնութիւն : *



Մալիւտայն՝ օրհնեցէք զաստուած Թարգ-
 մանի . և է սա երգ Տրեշտակաց . զոր
 այժմ ամենայն լուսնի եկեղեցոյն մի առ մի
 փոխանորդեալ՝ երգեն քաղցր եղանակաւ նախ
 քան զընթերցումն աւետարանին : Քանզի հան-
 դերձեալ է աստուած խօսիլ . վասն որոյ մար-
 դիկ Տրեշտակացեալ մատուցանեն նմա զօրհներ-
 գուծիւն Տրեշտակացն : Եւ միայնակ ասելն
 սաղմոսերգողին զմեսեղի առաքելոյն , և զալի-
 լուտայ աւետարանին՝ զայս նշանակէ : Արդ՝ որ-
 պէս սարկաւազն վարդապետութեամբ քարոզու-
 թեանն զիւրն աստիճանի առանձնաւորութիւն
 եցոյց , նոյնպէս և սաղմոսերգուն զիւրն գործ-
 կատարէ երգելովն . և ընթերցոյն ընթեր-
 նլովն : Իսկսեթ է ամենեքեան զուգակցին նմա
 յերգելն , անկարգութիւն տիրէ . և ոչ որիչ
 առանձնականութիւն պատուոյն : Արդ պարտ է .
 զի որպէս սարկաւազն միայն զքարոզութիւնն
 սոյ ժողովրդեանն , և ընթերցոյն՝ զընթերցու-

զուժիւնն • այսպէս և տաղմտերգուն զսաղմտերգուն թիւնն և զալէլուիայն • և ապա 'ի նմանէ՝ հրամանաւ նորին և առաջնորդութեամբ սիրոյ յամենայն լուսնի եկեղեցւոյն • զի կարասցուք պահել զհրամանսն • ամենայն ինչ ձեր ասէ բարեձեռութեամբ և ըստ կարգի լինիցի • և ըստ եկեղեցւոյն աստուծոյ •

Յայնժամ սուրբաբանն որեւէ զստեպարանն խնդի և մեղի-նօք յեք ուղիւնայն գոյ 'ի դռան բեմն • և 'ի կար-բանն ուղիւնայն յայնէ բարձր •

Մըթիւ : որ թարգմանի ունկն գի.ք • կամ յոսն կացէք •

Եւ Կողմնայն դռանայ 'ի խորանէն առ ժողովարդն • և խալանէն որեւէլ :

Խաղաղութիւն ընդ ամենեւեան •

Որպէս թէ նախ զայս հայցէր ժողովուրդն զև ևս առաւելապէս առնելն զխաղաղութիւն • զոր այժմ քահանայն առեալ յաստուծոյ տայ ժողովրդեանն • և ժողովուրդն • Եւ ընդ հոգւոյդ քում • Որպէս թէ ասեն • Խաղաղութիւնդ՝ զոր ետուր մեզ՝ և հոգւոյդ քում եղիցի • Սարկաւազն • Երկիւղածութեամբ լուարուք • Եւ քահանայն • կամ • սարկաւազն •

“ Արբոյ աւետարանիս՝ որ ըստ մատթէոսի կամ
 ըստ այլոցն , ”

Յայտ առնէ այսու ձայնիւ թէ աստուծոյ է
 բարբառ և ոչ մարդոյ , վասն որոյ՝ երկիւղիւ
 մեծաւ և դողու թեամբ աստուա-
 ծային սրատգամացս :

Ժողովուրդն , “ Փառք քեզ տէր աստուած մեր , ”
 Իբր թէ հիացեալ ընդ մեծութիւն իրին
 փառս տան աստուծոյ , որ արժանացոյց զհողա-
 նիւթսս խօսիլ ինքեան ընդ մեզ : Սարկաւազն ,
 Պաօսիուսն : Ժողովուրդն , Ասէ օթէօս : Իբր
 սարկաւազն զգուշացուցանողական բարբառովն
 ամենայն ժողովրդեանն հրամայէ սրատրատական
 լինիլ աստուածային բանիցն պատմութեանց :
 Ինչ նոքա յանձնառական ձայնիւ պատասխանեն :
 Ասէ օթէօս , Այսինքն թէ զգուշացաք և
 պատրաստ եմք , թող խօսի աստուած , քանզի
 մերձ եմք ՚ի լսել :

Եւ ընկերանս զուէրորուն :

Ուսուցանէ աւետարանի ընթերցումն թէ որքան
 առատ է և անչափ՝ սէրն հօր առ մարդիկ ,
 Ջրեա ոչ վիայն զլուսադարութիւնն , այլ և զփա-
 ծինն իւր պէտպէս տնօրէնութեամբն , որ է
 մարդեղութիւնն , բանք վարդապետութեանն՝
 Կործք սքանչելեացն , և ՚ի վերայ ամենայնի

խաչն և թաղումնն և յարութիւնն • զայն
ամենայն երախտիս պատմէ աւետարանն : Զորո
լուեալ ամենայն ժողովրդեանն և հիացեալ՝
փառս տան աստուծոյ ասելով • Փնօք քեզ աստ-
ուած :

Եւ սպս սաէն զնիկեոնիոնն դոստոնան 'էլբնն :

* Մէնուելան : *

Զմեկնութիւն նիկիականն դաւանութեան՝ զոր
խոստովանի այժմ ամենայն լրումն եկեղեցւոյս՝
թէպէտ ոչ եղաք բան առ բան • սակայն ըստ
կարի մերսւմ ասասցուք համառօտ զգորութիւն
նորա : Արդ՝ սկիզբն և աւարտ ամենայն բա-
րեաց է Քչմարտութիւն հաւատոյն : Վսնն այսո-
րիկ՝ սոքա որք հանդերձեալ են զայս սարսա-
փելի խորհուրդս կատարել և հաղորդ լինիլսմա՝
նսխ զխոստովանութիւն ուղիղ հաւատոյն դա-
ւանեն • և սպա արժանաւորին այսմ աստուա-
ծային խորհրդածութեանս • և թէ որպիսի օրի-
նակաւ պարտ է ունիլ զդաւանութիւնն՝ ասաս-
ցուք : Արդ՝ հաւատով արժան է իմացական մտօք
զաստուած անեղ իմանալ ; և սկիզբն եղելոցս •
Որոյ բնութեան՝ ոչինչ է նման և կամ
օրինակ յեղելոցս : Բայց է օրինակ մեր բանական
հօգիս՝ որ է պատկեր աստուծոյ • այլ որպէս

անշունչ պատկերն որոշեալ է 'ի կենդանւոյն և
 վասն զի զձեն միայն ունի և ոչ զզօրութիւն՝
 այսպէս և մեր բանական հօգիս՝ յատկութեան
 անձնաւորութեանն նորա միայն է նման , և ոչ
 բնութեանն : Արդ՝ որպէս է մեր բանական հօ-
 գին պարզ և անմահ և անսպական , և ծնանի
 'ի նոյն բանական հօգւոյ առանց ախտի բան ,
 կամ բարի և կամ չար , և բանն՝ որ ծը-
 նաւ 'ի հօգւոյն՝ որոշեալ անձնաւորի . և այլ
 էութիւն ամենայն իրօք քան զհօգին տեսնի .
 քանզի զատեալ է 'ի նմանէ իբրև զծնունդ . և
 դարձեալ 'ի նմա է իբրև զհամաբնութիւն :
 Այսպէս իմն և զատուածն բան , և զ'ի հօրէ
 անախտ ծնունդն նորա , զի զատեալ անձնա-
 ւորեալ է 'ի նմանէ : զի ծնունդ է նորա , և
 դարձեալ միաւոր է անխառն և անշիւթ . քանզի
 բնութեանակից է նորին . որպէս վկայէ յովհան-
 նէս ասելով . 'Ի սկզբանէ էր բանն , և բանն
 էր առ ատուած , և ատուած էր բանն : Դար-
 ձեալ՝ բանն որ անձնաւորի 'ի հօգւոյն կամօք
 նորին՝ արտաքս բղխէ և ելանէ ընդ բերանն ,
 զոր խօսք անուանեմք , և կամ թէ գրով ձե-
 աղուցանեմք : Եւ երևի արտաքս բերեալ խօսքն՝
 որ ել ընդ բերանն՝ այլ իմն անձն զատ 'ի
 հօգւոյն և 'ի ծնեալ բանէն . քանզի խօսք բե-
 րանոյն նման է բանական հօգւոյն : և ծննդեան
 նորա սրտի բանին , սակայն այլ իմն անձն է որո-


շեալ՝ ի նոցանէ . և է առ նոսա իբրև զբնութե-
 նակից . և զատեալ իբրև զբղիսումն : Այսպէս
 և հոգին սուրբ բղիսումն ՚ի հօրէ . և առեալ
 յորդւոյ անշխթ և անխառն . անձնաւորեալ
 ՚ի նոցունց՝ անբաժանելի է ՚ի հօրէ և յորդւոյ .
 զի բնութեանակից է . և զատեալ անձնաւորեալ
 է . վասն զի բղիսումն է սուրբ հոգին . Եւ այսու
 օրինակաւ պարտ է խօստովանիլ զերկրպագելի
 սուրբ Երրորդութիւնն . Հայր՝ և Ճնունդ՝ և
 Բղիսումն . անձն երեք . Եւ աստուածութիւն՝ և
 բնութիւն՝ և էութիւն՝ և զօրութիւն՝ և կամք
 և անեղութիւն՝ և անսկզբնութիւն և այլ ամե-
 նայն . Մի : Բայց յյժ զանազանեալ է . և
 հեռի է օրինակս՝ զոր եզպք՝ ՚ի սկզբնատպէն
 աստուծոյ . զի աստուծոյ բանն՝ և բղիսումն
 անժամանակ է . և անանցաւոր . և անցնդելի . և
 առ հայր է անաղաւաղելի : Իսկ մերս ժամա-
 նակաւ . և անցանէ և ցնդի յօրս և աղաւաղի .
 Իսկ զբանին աստուծոյ մարդեղութիւնն այսպէս
 հաւատացեալ իմանամք : Զի կամօքն աստուծոյ
 հօր՝ նախ հոգին սուրբ մաքրեաց զկոյսն ՚ի մարդ-
 կային ախտիցն ըտտ բանի հրեշտակին՝ զոր
 սասց . Հոգին սուրբ եկեացէ ՚ի քեզ . և թէ՛
 Որ ՚ի նմայն ծնեալ է՝ ՚ի հօգւոյն սրբոյ է .
 Քանզի՝ թէպէտ և էր սուրբ ամենամաքուր
 կոյսն . սակայն՝ կրիւր ինչ և ՚ի նմա կիր մարդ-
 կային . քանզի դուստր էր նախաստեղծին . ուս-

տի նախ մաքրեաց զնա հոգին սուրբ : Եւ բանն
 աստուած որդին աստուծոյ՝ հաճեցաւ բնակիլ
 ՚ի նմա : և առեալ յարենէ կուսին՝ խառնեաց
 ընդ իւր աստուածութեանն անձառելի խառն-
 մամբ : և ՚ի վերջսն զմիտս և զբանս : և գոյա-
 ցեալ եղև մարդ կատարեալ : հոգւով և մտօք
 և մարմնով : կամօք և յօժարութեամբ : և
 ամենայնիւ որ ինչ է մեր՝ բաց ՚ի մեղաց , խառ-
 նեալ և միացեալ անշիտթ խառնմամբ յերկուց
 բնութեանց անձառ միաւորութեամբ : Այլ աստ-
 ուածութիւնն ինչ տկարացաւ վասն խառնման
 մարդկային տկար բնութեան : և ոչ դարձեալ
 մարդկութիւնն ՚ի բաց եդ զիւր բնութեան
 կիրան : Թէպէտ խառնեցաւ ընդ աստուծոյ
 տակայն ոչ թէ ՚ի հարկէ ինչ կրէր զբնական
 կիրան որպէս մեք՝ ծառայք գոլով ախտից , այլ
 նս զոր կամէրն զայն կրէր : երբեմն թոյլ տայր
 բնութեան կրել զիւրն , զի ստուգեցի մարդ-
 կութիւնն , և երբեմն գեր ՚ի վերոյ լինէր կը-
 րիցն իբրև զաստուած : Այլ պարտ է համառօտ
 գբանս գլխաւորել , զի մի՛ յանբաւս տարածեա-
 ցի : Արժան է քրիստոնէին յերկօցունց չար
 հերձուածոցն զգուշանալ , այսինքն ՚ի նեոտորի
 մարդագաւան բաժանմանէն , զի մարդածին և ոչ
 աստուածածին խոտտովանեցաւ զկոյնս : Եւ դար-
 ձեալ յեւտիքեայ չարաչար խառնակութենէն
 և յանիմաստ շփոթմանէն : Եւ գաւանիլ զսպա-

ուածն մարդացեալ՝ աստուած և մարդ կատա-
րեալ միացեալ և խառնեալ յերկուց կատա-
րեալ բնութեանց մի քրիստոս և մի որդի կատա-
րեալ : Ար ընդ հօր անժամանակ ծնեալ յաստ-
ուածածին կուսէն . և լեալ ընդ ժամանակաւ .
որ է օրհնեալ յաւիտեանս ամէն :

Յետ այսորիչ Գոյ առաջի սեղանոյն : Եւէ եպիսկոպոս
Էջէ . ի Բաց հանէ զԵփեսոսն . և ինքն Կոյ առաջի
սեղանոյն . և գործնայն զոս զոս Կոն զԷէ եպիսկոպո-
սին ի Տի եղէրէ Էէֆէ Տիւն ի Տիան : Եւ որչի-
ւորքն որքոյէ ու զրոն :

* Մեկնութիւն : *

 ահանայապետին ՚ի բաց զնելն զերմիտո-
րոնն՝ զայս ինչ նշանակէ . Մինչև ցայժմ
զարդարեալ փառօք ձևացաւ ՚ի նմանութիւն
փրկչին . բայց արդ հանդերձեալ են բերել
զնշանակն քրիստոսի ՚ի սեղան անդ . վասն որոյ
՚ի բնց մերկանայ աս զձևակերպութիւնն . լինի
և ինքն իբրև զմի ՚ի ադասաւորացն . և կայ ՚ի
սպասաւորութիւն քրիստոսի : Եւ ընդ իւրա-
քան չիւր աղթից քարոզէ սարկաւազն . և ՚ի
միասին սկսանին և աւարտեն . Եւ այս ո՛չ եթէ
յազազս այնորիկ է զի փութով կատարեացի .
այլ ունի խորհուրդ ինչ . զի սարկաւազն քա-

րոզէ ժողովրդեանն և ուսուցանէ զնոյն աղօթել
և խնդրել 'ի տեառնէ : զոր և քահանայն վասն
նոցա աղօթէ . զի մի' այլ և այլ լիցին խնդր-
ուածք քահանային և ժողովրդեանն :

Մէջնոսինն քարոզութեան սարկաւակն * 'ի խորոզա
անջեացեաց էպիսկոպոսէ :



և ևս խաղաղութեան զտէր աղաչեցուք :
Եւ ժողովուրդն՝ Տէր ողորմեան :

Եւ ևս հաւատով աղաչեցուք և խնդրե-
ցուք յաստուծոյ հօրէ և 'ի տեառնէ ամենա-
կալէ և 'ի փրկչէն մերմէ Յիսուսէ քրիստոսէ 'ի
ժամուս պաշտաման և աղօթից . զի արժանի
ընդունելութեան արասցէ :

Ասացաք զև ևսն թէ զինչ է . Հաւատով
աղաչեցուք . Քի հաւատն առնէ լսելի . որ-
պէս ասաց առաքեալն յակովբոս : Եթէ ոք 'ի
ձէնչ իցէ նուազեալ յիմաստութենէ՝ խնդրե-
ցէ յաստուծոյ որ տայ յամենայնի առատապէս .
և ոչ նախատէ և տացէ նմա : Ընդէ՞ր երկուս
դնէ թէ՛ աղաչեցուք և խնդրեցուք . զի ցուց-
ցէ թէ՛ մեծաւ պաղատանօք զինդրուածն պարտ
է առնել . և սրտի մտօք և եռանդակից ջեր-
մութեամբ աղաչել ըստ խրատու մարգարէին .
Ժտեան ասէ 'ի տեառնէ . և նա տացէ քեզ ըզ-
խնդրուածս սրտի քոյ : Եւ կոչեաց զաստուած

յերկուց անուանց , և զերրորդն ևս յաւել :
 Խնդրեցո՞ւք յաստուծոյ հօրէ և 'ի սեւանէ
 ամենակալէ : Ուսուցանելով գութ առ ստուած
 և երկիր զ ունիլ , և 'ի գթութիւն և 'ի խնամ-
 ածութիւն և 'ի պահպանութիւն զնա յուսով
 կոչել :

“ 'ի ժամուս պաշտաման և աղօթից , զի արժանի
 ընդունելութեան արացի : ”

Ջայնմ ժամանակէ ասէ : յորում յաղօթս ի-
 ցեմք ժողովեալ , զոր պաշտօն և աղօթք կոչէ ,
 յայտ առնելով թէ պաշտօնեայք գոլով աստու-
 ծոյ հօրն և ամենակալին տեառն՝ հանապազ 'ի
 նորա պաշտօնն ժամանել պարտիմք առանց հեղ-
 գութեան : Եւ է պաշտօնն ծառայութեան ա-
 նուն . ոչ վայրապար նախ զպաշտօնն և ապա զա-
 ղօթան եգ՝ որ է խնդրուած , այլ զի ուսանիցիս
 թէ ծառայելով պարտ է խնդրել զպէտս :

“ Լուիցէ տէր ձայնի աղաչանաց մերոց , ընկալցի
 զխնդրուածս սրտից մերոց , թողցէ զյանցանս մեր
 և ողորմեցի 'ի վերայ մեր : ”

Քանզի այսպիսեացս սովոր է լսել՝ որք ըստ կա-
 մաց նորա հայցեն : Դարձեալ ոչ ասաց եթէ՝
 ընկալցի զխնդրուածս մեր , այլ թէ զսրտից
 մերոց , զի ոչ եթէ որ 'ի շրթանցն՝ այլ որ 'ի
 սրտէն խնդրուածն ընդունելի է նմն :

“ Աղօթք մեր և խնդրուածք՝ յամենայն ժամ
 մտցեն առաջի մեծի տէրութեան նորա : ”

Թէ՛ այնպէ՛ս աղօթեցուք որպէ՛ս ասացաւն . և զհաճոյն աստուծոյ և զօգուտն մեր խնդրեցուք . ոչ այժմ և եթ , այլ և յամենայն ժամու աղօթք մեր և խնդրուածք մտցեն անաղի մեծի տէրու թեան նորա :

“ Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակիլ ’ի գործս բարիս . զի զողորմութեան շնորհսն իւր արացէ ’ի վերայ մեր տէրն ամենակալն : ”

Տեսե՛ր զաղօթիցն շահ . որպէ՛ս իսկ եցոյց միաբանիլն յուզիլ հաւատս և վաստակիլն յարդարութեան . և այս լինի՛ յորժամ տէրն ամենակալն զողորմութեան շնորհսն իւր ’ի վերայ անէ . այսինքն՝ զշնորհս հոգւոյն սրբոյ . զոր ողորմելով տայ խնդրուցան : Այն է որ հաստատէն ’ի հաւատս : Նոյն և որ յարդարութեան վաստակսն զօրացուցանէ : Նա է որ զտաժանելիսն հեշտալիս անէ : Եւ այդ աղօթս աւարտէ զբանն ասելով . Աեցուցէ և ողորմեսցի մեզ :

Մինչև եւ եկելն նուերքն ’ի սեղանն , ոմենայն ողորտ Թեոփիլոսն ու Վրէժոսն է : Իսկ յորժամ Բերեն զհանձնն ’ի սեղանն , Բոնաբէէ Թեոփիլոսն զխօսուցումն իւր ու Հոյր : Եւ զՎրէժոսն Բոնաբէէ մեր Հօր նուերէ . Բոյց ոյժմ ոյուէն ողորտն ու Վրէժոսն :

Տէ՛ր մեր և փրկիչ յիսուս քրիստոս՝ որ մեծդ

էս ողորմութեամբ և առատ պարգևօք բարե-
բաբութեան քոյ : որ դու քոյին կամաւ 'ի ժա-
մուս յայտիկ համբերեցեր չարչարանոց խաչի և
մահու յաղագս մեղաց մերոց : ”

Ջմեծ սէրն քրիստոսի աստ ուսուցանէ՝ զի զանձն
'ի խաչ և 'ի մահ ետ վասն մեր :

“ Եւ պարգևեցեր առատապէս պարգևս հոգւոյդ
սրբոյ երանելի առաքելոցն : ”

Դարձեալ 'ի նմին ժամու խաչին՝ յորում զմեղս
մեր եբարձ . յետ կատարման տնօրէնութեան՝
առեալ պարգևս 'ի հօրէ զսուրբ հոգին՝ եհնել
յարարածս իւր :

“ Հաղորդս արա և զմեզ տէր աղաչեմք զքեզ
աստուածային պարգևացդ՝ թողութեան մեղաց՝
և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ : ”

Նոյնպէս և այժմ անփոփոխ է սէր քո առ մեզ .
արն և զմեզ կցորդս այնմ պարգևաց . սրբեան
և զմեզ 'ի մեղաց . և տուր զհոգիդ քո սուրբ
որպէս և նոցա :

“ Արպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ
միառաւօրեւ զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգ-
ւոյդ այժմ և միշտ և յաւ : ”

Ժողովուրդն՝ ունի : Վրահոնայն խողաղաւելեան քոյ ժո-
ղովրդեան : Եւ նոքա՝ եւ ընդ հոգեւոյր բոսմ : Սորվա-
սոքն՝ ոտոսածոյ երկիրպագեացոստ : Ժողովուրդն՝ ոտոսելի
ոք որք :

* Մեկնաւիտն : *

Խաղաղութիւնն թէ զինչ ունի զօրութիւն՝ ա-
սացաւ նախ : Իսկ սարկաւագին Տրամայելն՝
աստուծոյ երկիրպագեացութիւն . Իբր թէ՛
ասել թէ յաղագս խաղաղութեան աղաչեցի՛ք
զսէր . և զնա՛ զայն , զոր ետ՛ի ձեռն քահա-
նային , արդ երկիրպագութեամբ շնորհակալ
լինուք նմա : Դարձեալ յաւելու յաղօ՛ծս իւր
քահանայն և ասէ .

“ Խաղաղութեամբ քով քրիստոս փրկիչ մեր՝ որ՛ի
վեր է քան զամենայն միտս և զբանս . ամբայն
զմեզ և աներկիւղ պահեան յամենայն շարէ . ”

Խաղաղութիւն աստ՛ զանհաս նախախնամութիւնն
կոչէ . որով հայտե ամբանալ յամենայն շարէ :
որք երևին և որք ոչ երևին :

“ Հաւատարեան զմեզ ընդ ճշմարիտ երկիրպագուս
քո՛ որք հոգեով և ճշմարտութեամբ քեզ երկիր-
պագանեն : ”

Չնոսա ասէ՛ որք երկիրպագին քեզ այժմ .
քու՛մ սիրելեացն և ճշմարիտ երկիրպագուացն կը-
ցորդս արա՛ որք զհոգիս ընդ մարմնոյ ստորանոցիս
քեզ խոնարհեցուցաք . Վասն զի ամենասուրբ

Երրորդու թեանդ վայել են փառք : իշխանու թիւն
և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւ" :

Ժողովուրդն՝ ոմն : Վահանայն՝ Օրհնեալ փէր Տէր յիսուս
որիսոտ : Ժողովուրդն՝ ոմն : Սորիսառփն՝ Օրհնեա փէր :
և Վահանայն՝ դոտանայ տա ժողովուրդն . և հրճան ասյ Ե-
րախայեցն ելունել տելով : Տէր տաքաւած օրհնեացի զամենե-
նեանդ : Եւ սորիսառփն իայնի Բորչի Բարբոտով :

Որ երախայքդ էք՝ ելէք . որ երախայքդ էք՝
ելէք . մի՛ որ յերախայից և մի՛ որ ՚ի թերա-
հաւատից . և մի՛ որ յապաշխարողաց և յան-
մաքրից մերձեացի յատուածային խորհուրդս ."
Յետ այսորիկ արտաքս հանեն նախ զերախայսն՝
որք եկին ՚ի հաւատս . զի դեռ չև են ընկա-
լեալ զլուացումն աւազանին . և վասն անկատա-
րու թեան նոցա զորս և թերահաւատս կոչեն .
քանզի չև են կատարեալ ՚ի հաւատս : Եւ
ասոս զապաշխարողսն՝ որք ՚ի մեղս ինչ չարեաց
թաւալեցան . և դարձեալ ՚ի զղջումն եկեալ
խոտովանեցան . բայց դեռ չև է լցեալ նոցա
թիւ աւուրցն ապաշխարու թեան : Եւ զկնի նոցա
զանմաքուրսն . այսինքն՝ որք յանմաքուր այսոց
չարչարին : Աորս երեքեան դառք մինչև ցայո
ժամ կան ընդ սուրբ հաւատացեալսն : Զի
տեսեալ զքահանայապետն՝ որ ձևացաւ ՚ի նմա-
նու թիւն քրիստոսի և եցոյց զանհամեմատ սէրն

իւր առ մարդիկ՝ ոգտեցին յայնմանէ : Այլ
և մարգարէական և առաքելական և աւետարա-
նական ընթերցումն՝ ՚ի խրատ զգուշութեան
և ՚ի սնունդ անկտտարութեան նոցա լինի : Իսկ
այժմ հանդերձեալ է ինքնին թագաւորն քը-
րիստոս ՚ի խորհուրդ մտանել ընդ սիրելի և ընդ
հաւատարիմ ծառայսն իւր՝ որք են քահանայ-
ական դասքն : վասն որոյ ոչ է պարտ լինիլ ոք
անդ յանկտտարիցն : այլ ՚ի կատարելոցն ՚ի քը-
րիստոս : Իսկ կիստարկաւագացն հանելն զնոսա
արտաքս և պահելն զգրունսն զգուշութեամբ՝
զայս նշանակէ : վասն զի՝ նոքա դատտիարակեն
զնոսա և սնուցանեն հոգևոր կաթամբ ընթերց-
ման հին և նոր կտակարանացն :

Եւ զգիրն արժանացելոցն երգեն :

Մարմին տէրունական և արիւն փրկչական
կայ առաջի : Երկնային զօրութիւնքն յաներև-
ոյթս երգեն և ստեն անհանդիստ բարբառով •
Սուրբ Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց :

* Եւ սարկաւագոյն ասէն : *

Սաղմոս ասացէք տեառն աստուծոյ մերում
դպիրք՝ ձայնիւ քաղցրութեան յերգս հոգևորս :
Եւ ապա ասի սրբաուացութիւն : Եւ գան սար-

կուսակցութիւնքն 'ի սարկաւազատունն • և երգեն
 զՅարևու Էհարն • և ղևրք զգրովբէիցն՝ խնկօք
 և մամեղինօք : Եւ առեալ բերեն զաւրբ նուէրն
 'ի սեղանն և տան 'ի ձեռս քահանային :

* Մէկնութիւն այսցիկ : *

Գեղեցիկ և աստուածավայելուչ իմն տեսանեմ
 զկարգս զայս • զի սարկաւազութիւնքն առեալ բե-
 րեն զնուէրսն 'ի սուրբ սեղանն : Քանզի սար-
 կաւազութիւնքն ուսուցիչք են ժողովրդեանն • և
 միջնորդք առ քահանայն : Իբրև տեսին զքա-
 հանայապետն զի 'ի ձե սպասաւորի եկն • մանա-
 ւանդ թէ զձե միջնորդի և սպասամաւորի էառ
 'ի ժողովրդեանէն յաստուած : յայնժամ և նոքա
 հանդերձ կիսասարկաւազօք առնուն զընծայն
 ամենայն զգուշութեամբ • բուրմամբ խնկոց և
 մամեղինօք տան 'ի ձեռս քահանային • որպէս
 թէ զայս ինչ ասեն 'ի դիմաց ժողովրդեանն առ
 քահանայն : Արովհետև միջնորդ և բարեխօս
 առաքեցար 'ի մէնջ առ հայր՝ սխտոյ է նուէրս
 ինչ և ընծայս 'ի մէնջ • զի զորս տարեալ մա-
 սուսցես հօրն և աստուծոյ • և այնու 'ի հաշ-
 տու թիւն անցես զնա մեղ : Եւ մեք ոչ ինչ ու-
 նիմք այլ նախամիծար քան զհացս զայս և զբա-
 ժակս՝ որ նշանակ է գլխոյն մերոյ յիսուսի •
 զայս առեալ մատն ընծայ նմա : Եւ ապա բարձ-

րածայն աղաղակաւ երգեն և ասեն : Որք զքը-
րովբէիցն խորհրդաբար կերպարանիմք : Որպէս
Թէ զայս աղաղակեն՝ եթէ մեք ամենեքեան
Ժողովուրդքս ընդ քահանայական դատուցս զքը-
րովբէիցն խնացականապէս ձեանամք • զայն՝ զոր
ետես եզեկիէն • այսինքն՝ զկառան չորեքդի-
միս՝ որք վերացեալ զայնն՝ ՚ի Տիւսիտոյ ՚ի Տա-
րսւ : Այսպէս և մեք զխորհուրդս քրիստոսի
բարձեալ բերեմք ՚ի Տիւսիտոյ կողմանէ եկեղեց-
ւոյս • այսինքն՝ ՚ի սառուցեալ և ՚ի ձմեռնա-
ցեալ վայրէ մերս բնութեան ՚ի լուսատեասկ
կողմն աստուածային սեղանոյդ : Եւ որպէս անդ
մարգարէն ծիածան, զամբար և փայլտոսկումն
ետես • նոյնպէս և մեք զայն վառմամբ մամեղի-
նացս և բուրմամբ իննկոցս կերպացուցաք : Եւ
կենդանարար երրորդութեանն զերեքսրբեան
օրհնութիւնս մատուցանեմք • Եւ զոր եսայիաս
ետես • զսերովբէից զերեքսրբեանն սրբաբանեմք
զամենայն կենցաղականս ՚ի բնց դնելով զգործս •
որպէս զի զթագաւորն ամենեցուն ընդունիցիմք •
Քսնդի ոչ եթէ վայրապար յայս ձեացաք • այլ
զի ՚ի կենցաղական զբաղմանց և ՚ի Տոգոց ՚ի բաց
լինելով • և հրեշտակացեալ մտօք՝ զամենեցուն
զթագաւորն խնացականապէս ՚ի մեզ ընդունիցիմք •
Եւ զհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բե-
րեմք զկարգ • Ալէլուիայ • Ասեն Թէ • Էէ
վայրապար այս՝ զոր մեքս առնեմք • այլ զի սյուս
հրեշտակացն կարգաւորութեանցն նմանիցիմք •

Եւ Քիչ նոյս զայս էրգէն , սորիւստգանքն զքաղաքն ի միջ
 քիչն զնուէրսն առ Գահնայն . եւ Գահնայն խոնորհեալ
 առ զաղօթն զայս 'ի ծածուակ . որպէս զի աղօթն եւ Որդ
 զԳրովէէնն 'ի միտն զճարեցն :

Դէմ աղօթից քահանային՝ է առ քրիստոս .
 որպէս զի զօրացուցէ զնա խօսիլ ընդ Տօր
 իւրում զխորհուրդ տնօրէնութեան իւրոյ .
 Քանզի՝ զմտաւ էած զանհասութիւն մեծ խոր-
 հրդոյս . վասն որոյ սարսափի եւ դողայ եւ ասիւ
 մեծաւ պաշարի , տեսանէ զաս եւ զերկիւղ սար-
 կաւագացն եւ գպրացն եւ ամենայն ժողովրդեանն՝
 յերկիւղի եւ 'ի սոսկման կայ : Խոնարհեցուցանէ
 զպարանոցն , եւ զմիտս ընդ ձեռացն յերկինս
 ամբառնայ առ քահանայապետն Քրիստոս . եւ
 աղօթէ ասելով .



Ճ որք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր
 ախտիւք եւ ցանկութեամբ մատչիլ 'ի սեղան
 քո կամ սպասաւորել արքունական փառաց քոց :
 Արդարապէս խոստովանի զտկարութիւնս մար-
 մնոյս՝ որ միշտ ծառայէ պէսպէս ախտից եւ
 ցանկութեանց . որով անմարթ էր այսպիսեացս
 խօսակից լինիլ աստուծոյ՝ որպէս այժմ ես . եւ
 կամ երկնաւորացն նմանիլ՝ որպէս պաշտօ-
 նեայքս ձեացան : Իսկ թէ է՞ր վասն համարձա-
 կեցաք յայս գործ՝ դու վստահացուցեր . որ
 պէս եւ ասէ :

“ Քանզի պաշտել զքեզ մե՛ծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է • սակայն վասն անջտի բարերարութեան քոյ անսարագրելի բանդ հօր եղեր մարդ և քահանայապետ մեր երեւցար • Եւ իբր տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան և անսրխն ղենման զքահանայութիւն աւանդեցեր մեզ • ”

Ո՛վ առատ շնորհիւ և սիրոյդ առ մեզ • զի ոչ միայն վասն մեր մարդ եղեր • և քահանայապետ զքեզ հաշտութեան նուէր հօր մատուցեր • այլ և զքո սպասաւորութիւնդ մեզ ուսուցեր •

“ Ասան զի դու ես տէր աստուած մեր՝ որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց • որ ՚ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս • սերովբէից տէր և թագաւոր իսրայիլի • որ միայն սուրբ ես և ՚ի սուրբս հանգուցեալ • ”

Այսու ամենայնիւ՝ զանհաս և զանհամեմատ փառս տեառն յիշատակէ •

“ Ազաչեմ զքեզ միայն բարերար և հեշտալուր տէր • նայե՛նց յիս ՚ի մեղուցեալ և յանսլիտան ծառայս քո • և սրբեան զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին • ”

Նայե՛նց ատելն՝ զհաճիլն և զկամիլն յայտ առնէ • որպէս զի հաճեալ հաշտեցի • և սրբեալ մաքրեցէ զնեքին մարդն յամենայն աղտեղի իսրհրդոց •

“Եւ բաւականացն զիս զօրութեամբ սուրբ Տոբ-
 ւոյդ . որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ
 կալ առաջի սրբոյ սեղանոյս . և քահանայագործեալ
 զքս անարատ մարմինդ և զսրատականն արիւնդ : ”

Նախ զսրբութիւնն հայցեաց և ապա զՏոբին .
 զի զօրացուցէ զնա առ ՚ի քահանայագործեալ
 զանարատ մարմինն և զարիւնն քրիստոսի :

“Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ մաշ-
 թեմ : մի՛ դարձուցանէր զերեսս քո յինէն և մի՛
 մերժէր զիս ՚ի ծառայից քոց . այլ արժանի արն
 մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ՚ի մե-
 ղուցեալ և յանարժան ծառայէս քուսմէ : ”

Այսինքն՝ մի՛ անտես արացես զիս . այլ ար-
 ժանացն զիս : զի զընծայս զայս՝ որ ինքն դու-
 ես՝ դարձեալ քեզ մատուցանեմ : Քանզի ինքն
 է քրիստոս ամենայն յամենայնի . զի իբրև զԿո-
 հանայսպետ պատարագէ . և իբրև զԳառն պատա-
 րագի . իբրև զընծայ ընծայի . և դարձեալ
 զինքն ընծայ ընդ Տօր ընդունի . վասն զի մի
 է կամքն Տօր և սրբւոյ :

“Վասն զի դու ես՝ որ մատուցանես և մատչիս և
 ընդունիս և տաս Քրիստոս աստուած մեր : ”

Որպէս ասացսք իսկ՝ եթէ նախ ինքն ընդունի
 և ապա Տօր մատուցանէ . մանաւանդ թէ մի է
 իւրն և Տօրն ընդունելութիւնն . նոյնպէս և
 տալն զփոխարէնն :

“Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անըս-

կիզբն քո՛ հարբդ և ամենասուրբ և բարերար
հոգևովդ այժմ և՛։”

Եւ Բեբէ սորկուսողն զուր ուր է լուսնուլ բոհոնայնն
զժայր մոտոնցն ուր ջի սուրբ ուղղոնոյն ։

* Մեկնութիւն ։ *

Լուսացունն ծայրիցն մատանց՝ նշանակէ զչնչին
կիրս խորհրդոցն բնութեան . զայս ևս լուսցեալ
մաքրեաց՝ ի մտացն ։ Ջոր օրինակ և քրիստոս նախ
լուաց զտոս աշակերտացն՝ որ է վերջին մասն
մարմնայն . և ապա ետնոցա զմարմինն իւր սուրբ ։
Իսկ որ առաջի սեղանայն՝ ի տեսութիւն ժողո-
վրդեանն լուանայ , այս է պատճառն . քանզի
պարտ է այնմ՝ որ յաստուածայինն մերձենայ ի
խորհուրդ առաջի տեսողին աստուծոյ՝ որ զծա-
ծուկսն քննէ , և առաջի մարդկան՝ ոյք զյայտ-
նիս տեսանեն , յամենայնի սուրբ լինիլ երևելի
զործովք և անյայտ խորհրդովք ։ Դարձեալ ի
ցոյցս ժողովրդեանն . զի և նոքա զգուշացին յա-
մենայնի սուրբ լինիլ . և ապա հաղորդիլ աստ-
ուածային սուրբ խորհրդոյն ։

Ընդէն բոհոնայն յայնմհեռէ ուր հայր միայն ողջեի ։

Այժմ ՚ի կատարման այսր խորհրդոյ՝ առ հայր
զարձուցանէ քահանայատկտն զդէմս ալով լոյն ։

և սկսանի զտնօրէնութիւն սիրելի որդւոյ նորին՝
 հաշտութեան սպասարագ և նուէր ընծայել նախն •
 զի ՚ի գութ խանդաղանաց և սիրոյ ածիցէ
 այնու զնս վասն մարդկան : Եւ այս է օրինակն՝
 զոր և ասացից • վասնզի ՚ի սկզբան լինելու թեան
 կամայօժար մտօք հնազանդեցաք չարին • և այն-
 ու ՚ի վայր անկեալ մերժեցաք յատուածային
 փառացն և յանմահ բնութենէն : Եւ անտեռ
 լինելով յարարէն՝ մասնեցեալ եղաք ՚ի ձեռս
 թշնամւոյն և եղաք վարձկան չար ախտիցն և
 ծառայ սկզբնաչար բռնաւորին : Իսկ հայրն
 երկնաւոր տեսեալ զմեր կամայօժար հնա-
 զանդութիւն չարին՝ իրաւամբք անտես առնէր
 զմեզ : Այլ որդին իւր միածին տեսեալ զայս-
 սիսի աղէտս մարդկան ցեղի՝ գայ կամաւ հօր
 և խոնարհի ՚ի մեր փրկութիւն : Եւ դատա-
 սարտեաց իւրով արդարութեամբն զչար գոռոզն
 բռնացեալ • և ազատեալ փրկեաց զմեզ ՚ի նո-
 րին ծառայութենէ • և բերեալ ամբացոյց զմեզ
 յաշտարակս եկեղեցւոյ • և խոտացաւ մեզ՝ զի
 ՚ի միւսանգամ գալատեանն իւրում առեալ
 տարցէ զմեզ յառաջին դաւառն մեր : Բայց
 այժմ ասէ • մինչդեռ մերձ ունիք զթշնամիս
 ձեր՝ եթէ նեղիք ինչ ՚ի նոցանէ : ունիք զիս
 ձեզ միջնորդ և բարեխօս առ հայր • որ եկեալ
 տեսի զամենայն աղէտս ձեր ՚ի թշնամւոյն •
 Արդէս ասցն թէ • Չամենայն՝ զոր ինչ խնդ-

բիցէք 'ի հօրէ յանուն իմ՝ տացէ ձեզ : Աստու
որոյ՝ ներդրալ մեր 'ի դաւաճանսոյ թշնամւոյն
միջնորդութեամբն որդւոյ զհայրն աղաչեմք .
և տուեալ 'ի ձեռս քահանային զնշանակ մար-
մնոյ և արեանն որդւոյն՝ հրեշտակ առ հայր ա-
ռաքեմք : Զոր գնէ քահանայն առաջի հօրն 'ի
վերայ սեղանոյն , և սկսանի պատմել զպէսպէս
անօրէնութիւնն որդւոյն , և աղաչէ զհայրն զի
վասն հեղմանն արեանն որդւոյն՝ մի՛ միշտ անտես
արտացէ զմեզ , այլ զի սրբեացէ զմեզս մեր յի-
շատակաւ նորին չարչարանաց : Իսկ հայրն յոր-
ժամ տեսանէ զանձառ շնորհս որդւոյն իւրոյ և
զբանիցն պատմութիւն՝ զոր աղերսէ քահանայն
'ի դէմն ժողովրդեանն՝ տայ զլինդրուածսն :
Եւ այս է զոր ասէ յովհաննէս թէ . Արիւն որդ-
ւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց : Բայց
դու մի՛ կարծեր այտու բանիւ թէ զանազանու-
թիւն ինչ է 'ի կամս հօր և որդւոյ , այլ ու-
սուցիչ մեզ զհօրն կամս՝ որդին եղև . վասն
այնորիկ մեք նախ իմանալի մտոք առ որդին
բարձրանամք , և ապա այտու ճանաչել կարեմք
զհօրն դուրս առ մեզ : Այլ ո՛վ այր աստու-
ծոյ քահանայ սուրբ և պատարագիչ քրիստո-
սի . յորժամ կայցես 'ի սպասաւորել սուրբ և
աստուածային խորհրդոյն , մի՛ վերս 'ի վերոյ մի-
այն ծայրիւք շրթանցդ զաղօթսն մատուցես .
զի այնպէս անպտուղք են բանք աղօթիցն , և

նչինչ օգտիս 'ի նմանէ. և ոչ միայն անօգուտ,
այլ և 'ի դատապարտութիւն և օ իցէ. այլ
ընդ շարժիլ լեզուիդ, խառնեան զչեբմութիւն
սրտիդ բորբոքմամբ օիրոյ առաջի իմանալի ա-
չացդ. և ունելով զայն առ որս խօսիս: Քանզի
չէ իսկ հնար զձև աղօթիցն յայտ առնել թէ
նրպիսի օրինակաւ զիղձս սրտին խառնեացէ ոք 'ի
ժամ աղօթիցն. բայց եթէ ոք յինքենէ զայն
իմացի. զոր օրինակ՝ եթէ կին ոք առաջի ին-
քեան ունիցի զմիամօր և զսիրելի որդին իւր մե-
ռեալ, նրպիսի առ աղէտ սրտին կողկողմամբ
պէսպէս բանս խօսիցի ընդ նմա: Այսպէս և
դու ճմլեալ սրտիւ և աղէտական հայցմամբ
մատն զաղերս աղօթից հօրն և աստուծոյ. զի
առցես զպտուղ աղօթից զնոյն ինքն զբրիստոս
'ի փրկութիւն քեզ և ամենայն աշխարհի:

Մեկնութիւն Քարոզութեան Սարկաւոփին:

“Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յա-
ղօթս առաջի սրբոյ սեղանոյս աստուծոյ ահիւ.”
Որպէս թէ 'ի քնոյ ընդօտուցանէ զմեզ քա-
րոզս՝ զսեղանն աստուծոյ սեղան կոչելով. զի
առաջի աստուծոյ կայ և զորդին աստուծոյ 'ի
վերայ ունի բաղմեալ. յաղագս որոյ ահիւ կալ
ասէ առաջի նորս:

“Մի խղճիւ և գայթակղութեամբ.”

Խօղճ՝ գայթակղութեան՝ զգայթակղեալն՝ ՚ի մեղս
ասէ՛, զոր եթէ ոչ իցեն խոտովանութեամբ
հանեալ՝ ՚ի սրտից իւրեանց, մի՛ կացցեն առա-
ջն սրբոյ սեղանոյն յահաւոր յսնմ՝ ժամունս։
“Մի՛ նենգութեամբ խորամանկութեանս։”

Նենգութիւն խորամանկութեան զայնց ասէ՛, որք
կեղծաւորին իբր սէր և խաղաղութիւն ունիլ
առ եղբարս, և յանձինս նենգութեամբ զչա-
րութիւն խորհին, զորս ոչ ընդունի աստուա-
ծեղէն խորհուրդն, այլ արտաքս հանէ։

“Մի՛ պատրանօք և խաբէութեամբ։”

Բաղմագիմի են խաբէութիւնք և պատրանօք, զի
է՛ որ առ աստուած, և է՛ որ առ մարդիկ։
Նախ և առաջին հաւատովն կերպարանեալն ուղ-
ղափառ՝ չարափառ գոլով, կամ արգար ձեա-
ցեալ՝ մեղաւոր գոլով։ Եւ կամ առ մարդիկ
երևեալն այն, որ չիցէ ստոյգ կամ սիրուն
կամ պարզամիտ։ Եւ կամ այն՝ որ զխարդախու-
թիւն՝ զստութիւն և զխաբէութիւն և զայլ
այսպիսիս ցուցանէ յինքն՝ յորս չիցէ, զորս ՚ի
բաց մերժէ տէրն ասելով, ՚Ի բնց կացէք յի-
նէն ամենեքեան՝ ոյք գործէք զանօրէնութիւնս։

“Մի՛ երկմտութեամբ և մի՛ թերահաւատու-
թեամբ։”

Երկմտութիւն թերահաւատութեան է, եթէ
յայնցանէ՛, զորս դաւանեմք զկնի աւետարանին
՚ի հաւատամն՝ երկմիտ և թերի իցէ ոք իւրիք։

Եւ կամ 'ի սուրբ խորհուրդն ո՛չ որպէս յա-
 ղագս որոյ ասիւ կալ ասէ առաջի աստուծոյ .
 մարմին և արիւն հաւատայ . և կամ որ 'ի նա
 յոյն թերացեալ իցէ իւիք : Չորս նախ ազո-
 թիւք և գրոց խրատիւք ուղղել պնդա է . որ-
 պէս և գրեալ էթէ՝ Մաքրելի է նախ և
 առաջին . և ապա 'ի մաքուրն մերձենալի :

“ Այլ ուղիւ վարուք : ”

Ուղիւ վարք այն է՝ զոր պատուիրանն ասէ .
 անթիւրն լինիլ յաջ կամ յահեակ :

“ Պարզ մտօք : ”

Այսինքն թէ՛ որպէս արտաքուստ երեւեալ ,
 այնպէս և 'ի ներքուստ . և ո՛չ այլազունել :

“ Միամիտ սրտիւ : ”

Ողջամիտ առ աստուած և առ մարդիկ . և ո՛չ
 ուրեք խորհրդովն թիւրիլ :

“ Վատարեալ հաւատով : ”

Վատարունին հաւատոյն՝ է՝ ճանաչել զհայր և
 զորդի և զսուրբ հոգին՝ Երիս անձինս . և
 Մի աստուած . և ո՛չ գիտել 'ի նոսա առա-
 ւել կամ նուազ . կամ յառաջ կամ յետոյ :
 Այլ հարթ հաւատար և միապէս յամենայնի .
 և նոյն բնութեամբ . ծնող՝ զհայր . և ծնունդ՝
 զորդի . և ելուսն՝ զսուրբ հոգին՝ 'ի հօրէ և
 ո՛չ ծնունդ . անժամանակ զերեքեանն . և 'ի ըս-
 կզբանէ ընդ հօր զորդին և զհոգին սուրբ .
 մարմնացեալ որդին՝ 'ի մարիամայ անձառապէս

և անխոխարկաբար, նոյն ինքն աստուած Քշմարիտ և մարդ կատարեալ, զաստուածութեանն զօրութիւն ցուցանելով որպէս զաստուած, և զմարդկայինս առանց մեղաց կրելով որպէս զմարդ միաւորութեամբ: Նոյն ինքն խաչի և մահու համբերեալ, և յարուցեալ երեքօրեայ, և զմերն բարձեալ զանէ՛ծո և զմեղս և զմահ, և մերով մարմնովս համբարձեալ յերկինս, և զայ դատել զկենդանիս և զմեռեալս, և հաստուցանել ըստ իւրաքանչիւր գործոց, արդարոցն կեանս յաւիտենականս, և մեղաւորացն տանջանս յաւիտենականս: Նա և խոտովանելով զմլիրտութիւնն վերստին ծնունդ 'ի հոգւոյն սրբոյ յորդեգրութիւն հօրն երկնաւորի: Հաւատալ և զիրկական խորհուրդն ստուգապէս մարմին և արիւն քրիստոսի, որով միանամք 'ի քրիստոս և ժառանգակից նորուն լինիմք: Եւ այսու հաւատով լինիմք կատարեալ լցեալ սիրով աստուածգիտութեան լի, և եղբայրսիրութեամբ անթերի, և առաւելեալ ամենայն գործովք բարութեանց, այսինքն՝ որ ինչ յաստուածսիրութենէն և յեղբայրսիրութենէն են բարիք:

“Ասցցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս աստուծոյ:”

Դարձեալ վերստին յիշեցուցանէ զկալն առ սեղանն աստուծոյ, զի առաւել ընդ ահիւ վազկեցէ:

“ Եւ գտցուք զողորմութեան զշնորհս յառուր
 յայտնութեան և ՚ի միւսանգամ գալտեան տեա-
 ուն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի: ”
 Յիշեցուցանէ և զահաւոր գալուտն քրիստոսի +
 զի մի՛ անփորձ մատիցուք առ աստուածային սե-
 ղանն: Ձի եթէ խղճիւ կացցուք, մեծապէս
 լինիմք կշտամբեալք: որպէս զաղտեղի հանդեր-
 ձիւք մտեալն ՚ի հարսանիան: Ապա եթէ լուա-
 ցեալ զաղտն և զհարսանեացն զգեցեալ ըզ-
 սրտոմուճան ըստ խրատու քարոզին, ողորմեալ
 լինիմք յառուր յայնմիկ, և ողորմութեամբն
 քրիստոսի ՚ի նորա բարիան վայելեմք: Ձի թէ-
 պէտ և բիւրապատիկ լցեալ իցեմք արգարու-
 թեան վաստակօք, սակայն աղորմութեամբ Են
 պարգևքն, և բազմապատիկ առաւել քան ըզ-
 վաստակն: Եւ աղօթիւք կնքէ զքարոզն ասե-
 լով:

“ Ամենակալ տէր աստուած մեր կեցուցէ և
 ողորմեցի մեզ: ”

Ձի եթէ աղորմութեամբ ոչ օգնիցիմք, ոչ
 կարեմք այնպիսի մաքրութիւն ստանալ՝ մինչ
 զի խառնումն ընդ քեզ ունիլ, այլ աղորմելովք
 լիցուք արժանի և հասցուք կենացն յաւիտե-
 նից ամէն:

* Աղօթք : *

Տէր աստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելու թեանց, որ յանէութենէ զբնաւս 'ի ցուցակու թիւն ածեալ գոյացուցեր :”

Տէր աստուած՝ ոչ միայն անմարմին զօրութեանցն, այլ և ամենայն եղելոցս, որ յանէութենէ, այսինքն՝ որք չէին և դու զբնաւ գոյս 'ի տեսութիւն ածեր :

“ Ար և զմերս զՏողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս : Այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս :”

Միայն յամենայն էիցս զմարդս պատուեաց, և կացոյց իւր խորհրդոյն սպասաւորս :

“ Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագիսդ, ընկնլ առ 'ի մէնջ զառաջագրութիւնս զայս, և աւարտեան զսա 'ի խորհրդականութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ, դեղ թողլութեան մեղաց պարգևեան ճաշակողացս ըզհացս զայս և զբաժակս :”

Դու հայր՝ որ զայս պատարագիս որ է ընծայ՝ քեզ ընծայեմք, հաճեանց և ընկնլ զառաջի քոյ եղեալ նուէրս, և աւարտեան (որ է կատարեան) զսա հոգւովդ 'ի խորհուրդ, զի լինի քոյ միածնիդ մարմին և արիւն, և ճաշակողացս դեղ մեղաց թողլութեան :

“ Շնորհօք և մարդասիրութեամբ տեսան մե-

րոյ և փրկչին յիսուսի քրիստոսի: Ընդ ուրում քեզ հօր միանգամայն և հոգևոյդ սրբոյ վայել է վառք՝ իշխանու:”

* Սորհուսոփն գորոչէ: *

“ Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սրբութեան. և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս՝ առ գրունա ելէք և աղօթեցէք:”

Համբոյր սրբութեան է՝ որ տուրք սիրովն է և ոչ նենգաւոր. և ոչ սրտնկական խորհրդով. այլ յստակ մտօք իցէ յեղբայրն. որով կարող էք հաղորդիլ. ՚ի միմեանց ուսարուք: Իսկ որք ոչ կարէք հաղորդիլ աստուածային խորհրդոյս՝ առ գրունա աղօթեցէք:

Դարձեալ՝ հրաման տանն տարկաւագին եթէ՝ Ողջոյն տուք միմեանց՝ զոյս յայտ առնէ: Վասն զի՝ որպէս ամենայն բարեձևութիւն եկեղեցւոյս հոգևոր է և մարմնաւոր. և մարմնականքն՝ ապացոյցք և յայտնաբանք հոգևորացն. այսպէս և զայս է տեսանել զխորհուրդս: Քանզի հպիլ ՚ի միմեանս մարմնով բաղմութեանն. և շաղկապիլ ՚ի միութիւն մարմնոցն համբուրիւ՝ զմիութիւն հոգեպէս խառնմանն և զհաւատարութիւնն յայտ առնեն. ըստ այնմ թէ. է՛ր բաղմութիւն հաւատացեւոցն՝ սիրտ և անձն մի:

Եւ միանան՝ ո՞ր աղաղակ, եթէ ոչ առ ՚ի
 ցուցանել զայն թէ՛ շնորհի պարգևաց քոց, որ
 հանդերձեալ է բաշխիլ, միով յուսով և հա-
 ւատով սպասեմք, Եւ որպէս զմի անձն համակա-
 մութեամբ և սիրով բազմութիւնքս լինիմք, զի
 մի լլցի ինչ երկպառակութեան կարծիք, կամ
 անշատումն լուսոյ առ առաջնկայօ խորհուրդ:
 Աւստի նախ հրամանաւն զանկատարն և զանշա-
 տողական մեղօք բաժանեալն արտաքս եհան, և
 ապա կատարելոցս և միով տարիմամբ լցելոցս
 տայ զհրաման ողջունին և սիրոյն միութեան:

Ընդէր յե՞ր ոյորելէ դաշն հաւասարոյն երգէ յեկեղեցւոյն. և
 օղջանէ որդիաւորն նոխ զսեղանն՝ և ոպա զմեռնն. և
 զդերսն երգեն ասելով. Քրիստոս՝ է Աջ Աջ յայրնեցոս:

Յորժամ դպիրքն զգուշացան տաճարի մար-
 մնոցն, ապա միաբան զդաւանութիւն հաւատոցն
 խոստովանին, որով ցուցանեն թէ որպէս կամօք
 ՚ի ձեռն նշանակի համբուրին մի եմք, այսպէս
 և ուղղափառ դաւանութեամբ հաւատոց, և չիք
 օք յայնցանէ՛ որք ոչ այսմ հաղորդին ՚ի մեր
 կցորդութիւն:

Դարձեալ նուիրեն ստտուծոյ զհաւատս և ըզ-
 դաւանութիւնն՝ յայտ առնելով թէ այսպիսի
 յուսով խառնեալ միացաք ընդ քեզ՝ ոչինչ
 ունելով թերութիւն յերրորդութեանդ գիտու-

Թե՛նէ : Եւ զի անհունին մեծամեծ բարեաց յընթերակայ ժամանակս գտանել : Եւ քրիստոս առհաւատչեաց տրոցն 'ի մէնջ զհաւատոն պահանջեաց ասելով առ իւրաքանչիւր բժըշկեալն . Հաւատա՛յք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ :

Վասն այսորիկ և աքա նախ զանօրէնութեան նորա շնորհս և զատուածութեան փառս միաձայն բարբառով հռչակեն և խոստովանին հաւատալ ամենայնին բոլորով սրտիւ . և ապա զնոյն խորհուրդ՝ որում ամենեքեան հաւատացին՝ քահանայն առնու և 'ի դիմաց ամենայն ժողովրդեանն նուիրէ աստուծոյ հօր : Եւ զոր օրինակ զհացն 'ի նոցանէ՝ և նոցա փրկանք 'ի սեղանն ածին սարկաւազքն . այսպէս և զհաւատս քրիստոսի մարմնոյն խորհրոյ : 'ի նոցանէ և վասն նոցա փրկութեանն քահանայն առնու և նուիրէ աստուծոյ հօր մտացն ասելով : Սոքան հաւատացին զյիսուս քրիստոս զորդին աստուծոյ վասն մերոյ փրկութեան : մարմնացեալ՝ չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ՝ ելեալ յերկինս և նստեալ ընդ՝ աջմէ հօր . զայն՝ զնոյն ինքն և զնորին խորհուրդսն՝ որ վասն նոցա փրկութեանն եղև՝ ունիմ ես 'ի ձեռս առաջի քո Աստուած հայր՝ պատարագ և նուէր հաշտութեան կամաց քոց 'ի վերայ ամենայն արեամբ ստացեալ ժողովուրդոցս քաջ հովուիդ փրկողի :

* Սորիւսաբն սուէ : *

“ Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք
կացցուք և նայեցարուք զգուշութեամբ : ”

Բանն սարկաւագին առ 'ի զգուշութիւն է
ժողովրդեանն : Եւ նոցինն՝ յանձնառական խոս-
տովանութիւն :

“ Պատարագ քրիստոս մատչի անարատ գառն
աստուծոյ : ”

Զի քրիստոս է՝ որ սրատարագին, անմաքուրքն
և աղտեղեալքն հոգւով՝ արտաքս ելցեն, քան-
զի չեն արժանի 'ի հոգևոր ուրախութիւնս
վայելել :

Խրատեցեն զմիմեանս սուրբ գրովք, և առ
դրունս աղօթեցեն սգացեալ սրտիւ, և շերմե-
ռանդն արտասուօք ողբացեն զղրկանս, զի 'ի
հոգևոր հարսանեացն արտաքս վարեցան, զի
չեղեն արժանի յահաւոր ժամուն մերձենալ առ
երկնաւոր սեղանն, և ոչ երգակցիլ հրեշտա-
կացն անդր գումարելոց, և 'ի քրիստոս միանալ
խորհրդովն սրբով, և 'ի մի հոգի նովաւ լինիլ :
Արդ որք ըստ այսմ խորհրդոյ՝ յերանելն ար-
տաքս, երկիւղիւ և ամօթով զիւրեանց սխա-
լանսն առ 'ի խոստովանիլ ունիցին առաջի աս-
տուծոյ, և հաշտութիւն հայցիցեն յամենա-
ղորմ աստուծոյ 'ի ձեռն քրիստոսի զենմանն՝
վութով քաւութեան հասցեն : Իսկ անղգայքն

և ելեալքն յերեսացն աստուծոյ և մերժեալքն
 'ի սրբութեանցն՝ որք ոչ եկեացեն յասպաշա-
 ւանս • այլ սովորական իրա համարելով խնդա-
 միտ ելանիցեն և միայցեն անտրտում : ևս ա-
 ռաւել շարժեն 'ի ցասումն զանբարկանելին
 աստուած • զի ոչ 'ի սպտուհասին և յորոշին 'ի
 սրբոյն : և ոչ 'ի բացեայ յառնելն յիւրմէ հո-
 գացին ինչ • վասն որոյ յիրաւի դատին :

« Բահոնայն Դոռնոյ ու ժողովարդն և ունե •

“ Շնորհք՝ սէր և աստուածային սրբարար
 զօրութիւնն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ
 եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան • ”

* Դոգիրն : *

“ Եւ ընդ հոգւոյդ քում • ”

« Բահանայն որպէս մասն ինչ էառ 'ի շնորհացն
 աստուծոյ 'ի ձեռն աղօթիցն՝ զոր մատոյց • և
 դառնայ և կնքէ աշովն և տայ ժողովուրդանն •
 և նորա ընկալեալ շնորհակալ լինին նմա ա-
 սելով թէ՛ զայս շնորհս զոր ետուր մեզ :
 և ընդ հոգւոյդ քում այլ եղիցի •

* Մարիամոգն : *

“ Զգրուես զգրուես ամենայն իմաստութեամբ
և զգուշութեամբ : ”

Դարացն հրամայէ զգուշանալ դրանց տաճարին ,
զի մի՛ այնք՝ որք արտաքս ելին երախայքն և
այլքն՝ հայեցին ՚ի խորհուրդն : Այլ և զնոսս
զգուշացուցանէ՝ որք ՚ի ներքս մնացին , սատրաստ
և զգոյշ լինիլ ՚ի սահմանութիւն դրանց հոգ-
ւոյն . որ է զգայութիւն , աչքն և ականջն և
այլքն :

* Մարիամոգն : *

“ ՚ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուա-
ծային երկիւղիւնն : ”

* Դպիրն : *

“ Ունիմք առ քեզ Տէր ամենակալ , ”

* Մարիամոգն : *

“ Եւ գոհացարուք զտեառնէ բոլորով սրտիւ : ”

* Դպիրն : *

“Արժան և Իրաւ :”

Սարկաւազն տետանէ զժողովուրդսն՝ զի ընկա-
լան զօրութիւնն՝ ՚ի քահանայական օրհնու-
թեանէն, հրամայէ նոցա ՚ի վեր առ առտուած
ամբառնալ զմիտս : Իսկ նոքա պատասխանեն՝
նչ սարկաւազին, այլ՝ սատուծոյ :

“Ունիմք առ քեզ Տէր ամենակալ :”

Դարձեալ՝ գոհանալ հրամայէ նոցա սարկաւազն :
Իսկ նոքա յանձն առեալ խոստովանին զգոհա-
նալն ասելով :

“Արժան և Իրաւ :”

Բայց այժմ՝ նչ գոհանան, զի ժողովուրդքն ե-
տուն զընծայս ՚ի ձեռն քահանային, այսինքն՝
զհացն և զբաժակն, և միջնորդ և բարեխօս
հաշտութեան առաքեցին զնա առ հայր : Իսկ
նա առեալ զայն՝ եմուտ առաջի հօր :

Եւ սարկաւազն յառաջեաց, և պէտպէս բա-
նիւք զգուշացոյց զժողովուրդն, այլ և հրամա-
յեաց նոցա գոհանալ զտեառնէ :

Իսկ նոքա կան և տպառն քահանային, մին-
չև նա հաշտեցուցիչ բանիւք յողորմութիւն
ածէ նոցա զհայրն, և զընծայն՝ զոր առաքեցին՝
ընդունի ՚ի ձեռաց քահանային, և ապա այնու-
հետև զգոհացողականն երգեն զերգ : Բայց
այժմ՝ քահանայն առեալ ՚ի ժողովուրդենէն ըզ-
պատճառս ալօթիցն՝ ասէ :

Րժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայոր-
 օգոր փութով միշտ երկիրպագանելով փա-
 ռաւորել զքեզ Հոյր ամենակալ :”

Ստոյգ արժան է ասէ և իրաւ ամենայորդոր-
 այսինքն՝ զմիմեանս յորդորելով Հանապաղ եր-
 կրպագութեամբ փառաւորել զքեզ Հոյր՝ որ
 զամենեսեան կալեալ ինամես :

“ Որ քոյին անզնների և արարչակից բանիւդ
 զանիծիցն բարձեր զկրճիմն :”

Անզնների և հօր արարչակից բան՝ միածին որ-
 դին է : զոր առաքեաց հայր : և զանէծան՝ որ
 կնայ և կրճիմն էր ընդ մեզ և ընդ ինքեան՝
 եբարձ ՚ի միջոյ :

“ Որ ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի՝
 սեպհականեաց զհաւատացեալս ՚ի քեզ :”

Եւ յորժամ եբարձ զանէծան՝ որ միջնորմն և
 կնայ էր ընդ մեզ և ընդ քեզ՝ յայնժամ իւր
 ինքեան ժողովուրդ հաստատեաց զեկեղեցի՝ որք
 ՚ի քեզ հաւատացին : և թէ այս որպէս ե-
 ղև՝ ասէ :

“ Եւ զնների բնութեամբ ըստ ՚ի կուսէն
 տնտեսութեան՝ հաճեցաւ բնակիլ ՚ի մեզ :”

Ջառաղին բնութիւն բանին հօր՝ անքնների
 ասաց : իսկ զայս քնների ասէ զ՚ի կուսէն ծը-
 նունդն : Վասն զի թէպէտ և ՚ի վեր քան
 զմարդոյ էր ՚ի կուսէ ծնունդն, սակայն իբլև

զմարդ 'ի կուսէն ճնաւ ըստ առաքելոյն : Ըստ
'ի կուսէն տնտեսութեան : Ա՛յն է տնտեսու-
թիւն՝ զոր էառ 'ի կուսի արեւնէն . և միա-
ցոյց ընդ ինքեան , և այնու հաճեցաւ բնակիլ
'ի մեզ 'ի մեր բնութիւնս :

“ Եւ նորագործ աստուածապէս ճարտարապե-
տեալ՝ զերկիրս երկին արար : ”

Եւ զիարդ ճարտարապետեաց . և որպէս եղև
երկիրս երկին՝ այս է :

“ Ասան զի որում ո՛չն հանդուրժէին առաջի
կալ զուարթնոցն շոկք՝ զարհուրեալք 'ի վայ-
լակնացայտ և յանմատոյց լուսոյ աստուածու-
թեանդ : Եղեալ այդպիսիդ մարդ յաղագս մե-
րոյ փրկութեան՝ շարհեաց մեզ ընդ երկնայ-
իննս պարել հոգեղէնս պարս : ”

“ Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն մի-
աձայն սրբասացութեամբ յօրինել նուագս . և
համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին
և ասել : ”

Ասաց առ հայր թէ քո որդին ճարտարապետ
եղև . և զերկիրս երկին արար : Եւ այս էր
ճարտարապետութիւն նորա . զի սրբ զուարթ-
նոց հրեշտակացն շոկք դողային 'ի լուսոյ աստ-
ուածութեան նորա և ո՛չ կարէին հայիլ .
այնպիսին մարդ եղև և ընդ մեզ շրջեցաւ . և
մեզ համարձակութիւն ետ երկնային և հոգե-
ղէն սերովբէիցն և քերովբէիցն պարակից և

երգակից լինիլ, և զնոցա զերգսն երգել, Ջոր
 լուեալ ժողովրդեան զայսպիսի ազգուհն բանի
 'ի քահանայէն՝ հաստատեն զբան նորա, և ա-
 զաղակեն բարձր ձայնիւ առ քրիստոս այսպէս.
 “ Սուրբ Սուրբ Սուրբ Տէր զօրութեանց, Լի-
 են երկինք և երկիր փառօք քո, Օրհնութիւն
 'ի բարձունս, օրհնեալ որ եկիր և գալոց ես
 անուամբ տեսուն, ովտանայ 'ի բարձունս.”
 Ամենայն բանք ժողովրդեանն՝ առ քրիստոս է,
 որպէս և քահանային՝ առ հայր,
 Ավտանայն փրկութիւն 'ի բարձանց ասի:

* Քահանայն Բողոքորոծ ասէ : *

ՍՈՒՐԲ Սուրբ Սուրբ ես Քչմարտասպէս և ամե-
 նասուրբ.”

Քահանայն որ ասացն թէ՛ սերովբէիցն ձայ-
 նակից արար զմեզ որդին, զոր ժողովուրդքն
 լուեալ սերովբէանման Որդւոյ մատուցին զե-
 բեքսորբեանն օրհնութիւն: Իսկ քահանայն հօր
 մատոյց, Եւ սօղոս 'ի գործս առաքելոցն՝ Հո-
 դւոյն ասէ զսոյն, քանզի մի է բնութիւն եր-
 բորդութեան, իսկ անձն երեք:

“ Եւ ո՛վ ոք պանծացի բովանդակել բանիւ
 զքո՝ 'ի մեզ զանբաւ բարեգորովութեանդ զեղ-
 մունս.”

Եւ ո՛վ կարէ պարծիլ, կամ թէ բանիւ

պատմել կարացէ զՏօր զանչափ զբարեաց գործոցն առատութիւնս . և ս՛ր իցէ այս .

“ Ար և անդէն իսկ ’ի նախնումն զանկեալն ընդ մեզօք զանազան եղանակօք՝ խնամեալ ըսփօփեցեր : ”

’ի լինելութենէ աշխարհի ոկիզբն առնէ պատմել զերախտաւորութիւնն աստուծոյ . զոր և ասէ թէ անդէն իսկ յառաջնումն զմարդկային բնութիւնս՝ օր անկաւ մեղօք ’ի գրախտէն՝ պէտպէս օրինակաւ մխիթարեցեր . և թէ օրո՛վ մխիթարեաց՝ ասէ .

“ Մարգարէիւք . օրինացն տուչութեամբ . քահանայութեամբ . և ստուերակերպ երնջուցն մատուցմամբ . ”

Նախ մարգարէս ետ՝ զմովսէս և զայլն . և սպա զօրէնսն ’ի ձեռն մովսէսի . իսկ քահանայապետ՝ զահարոֆն և զնմանս նորա . Այլ և երինջքն՝ որք մատչէին զո՛հ և ողջակէզ՝ ստուեր և շուք էին այս ճշմարիտ պատարագիս . որ է քրիստոս . Այլ յորժամ սոքա ոչ կարացին փրկել , ’ի սոցա կատարածին զորդին առաքեաց՝ որպէս և ասէ .

“ Իսկ ’ի վախճան աւուրցս այսօցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խղեալ զգատակնիք : ”
 Ասն զի կամեցաւ Տայր զամենայն գիր պարտուցն մերոց պատառել , որպէս և ասէ զայս ինչ .

“Ետուր մեզ զորդիդ քս միածին՝ պարտական
և պարտոս, զենուճին և օծեալ, դառն և երկ-
նաւոր հաց, քահանայապետ և պատարագ:”

Այսմ ամենայնի՝ որդին եղև պարտապան քա-
հանայ, զի որպէս զպարտապան անիծիցն աղա-
մայ՝ ՚ի խաչել: Իսկ սնորոք, քանզի մեք ամե-
նեքեան զնա տամք յամենայն աւուր փոխանակ
պարտեաց մեղաց մերոց, զենանի որպէս զուա-
րակ, և մատուցանէ զինքն հօր՝ որպէս զօծեալ
քահանայ, մեռանի որպէս զգառն անմեղ, և
լինի մեզ կերակուր որպէս զհաց ՚ի յերկնից
իջեալ, որպէս զքահանայապետ եհեղ զիւր ա-
րիւնն, և պատարագեցաւ որպէս զճշմարիտ մե-
ռեալ, և թէ որպէս՝ ասէ:

“Ասան զի ինքնդ է բաշխօղ, և նոյն ինքնդ
բաշխի ՚ի միջի մերում միշտ անծախսպէս:”

Մինչև ցատտ օրինակաւ ատաց, իսկ այժմ պարզ
ասէ զորդւոյ անօրէնութիւնն:

“Ասան զի եղեալ հաւատոհաւ և առանց ցը-
նորից մարդ, և անշփոթ միութեամբ մար-
մնացեալ յատուածածնէն և ՚ի սուրբ կուսէն
մարիամայ:”

Ստուգապէս և առանց ցնորից, այսինքն՝ առանց
կարծեաց մտաց՝ մարդ եղև, իսկ օրինակ մար-
դանաւրյն, այսինքն՝ անշփոթ էր միութիւն աս-
տուծոյն և մարդոյն, քանզի երկու բնութիւն
թէպէտ միացան, սակայն ոչինչ շփոթեցան:

այլ կատարեալ մնացին, զի Քրիստոս՝ աստուած և մարդ է կատարեալ :

“ Ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց : ”

Որպէս զստոյգ ճանապարհ գնան, այսպէս և նա զամենայն զկիրս մեր բաց 'ի մեղաց կատարեաց, որ է քաղցն և ծարաւն և այլն ամենայն :

“ Եւ յաշխարհակեցոյցն և յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ 'ի խաչ : ”

Եւ 'ի կատարին ամենայնի եկն կամաւ 'ի խաչն՝ որ պատճառ և առիթ եղև փրկութեան մերում :

“ Առեալ զհացն 'ի սուրբ՝ յաստուածային՝ յանմահ՝ յանարատ և յարարչագործ 'ի ձեռս իւր՝ օրհնեաց՝ գոհացաւ՝ օրբեաց՝ եբեկ և ետ իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով . ”

“ Առէք կերէք, այս է մարմին իմ՝ որ վանն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց : ”

'Ի վերնատանն զայս խորհրդածեաց, որպէս և պատմէ աւետարանն : Էառ զհացն յարարչատեղծ 'ի ձեռան՝ որ զերկինս և զերկիր գոյացոյց, օրհնեաց և աստուածացոյց, գոհացաւ յօրինակ մեր, զի և մեք յորժամ ճաշակել կամիցիսք 'ի հացէն, նախ արժան է զի գո-

Հասցուք զՏօրէ և զորդւոյ անօրէնութենէ և
Երեկ խաչանման և ետ իւրոց սրբեալ աշա-
կերտացն : Զի և մեք սրբացն և ընտրելոցն մի-
այն տացուք զնա :

“ Այս է իմ մարմին՝ որ յաղագս ձեր և
բազմաց : ”

Քանզի ոչ միայն աշակերտացն , այլ և բազմաց
'ի քրիստոս հաւատացելոց բաշխի 'ի քաւու-
թիւն և 'ի թողութիւն մեղաց :

“ Նոյնպէս և զբաժակն առեալ՝ օրհնեաց՝
զոհացաւ՝ էարբ և ետ իւրոց ընտրեալ սուրբ
և բազմեալ աշակերտացն ասելով . Արբէք 'ի
սմանէ ամենեքեան . այս է արիւն իմ նորոյ
ուխտի՝ որ յաղագս ձեր և բազմաց հեղանի 'ի
քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց : ”

Զբաժակն՝ որ ատաց թէ նախ ինքն էարբ ,
զայն յայտ արար եթէ այսպէս ախորժեղի
փախագմամբ ճաշակեմ զմահ , որպէս ծարաւի
ոք զբաժակ : Նոյնպէս և դուք պարտիք յոյժ
պատքեալ սրտիւ մերձենալ 'ի մարմին և յա-
րիւն իմ սուրբ :

“ Եւ զտոյն միշտ իւր յիշատակ առնել , պատ-
ուիրան աւանդեաց մեզ բարերար որդիդ քո
միածին : ”

Եւ զոր ինքն արար՝ զնոյն դարձեալ մեզ պատ-
ուիրեաց առնել , զի զայն առնելով մեր՝ մա-
հաւ նորա յիշատակն անմուսց լինի 'ի մէնջ :

“ Եւ իջեալ 'ի ստորին վայրս մահաւ մարմնովն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յաղգակցութենէ՝ և զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս՝ զքեզ միայն ծանոյց մեզ Քչմարիտ աստուած՝ զաստուածդ կենդանեաց և մեռելոց : ”

Մարմնովն 'ի գերեզմանս էջ և բանական հոգւովն 'ի դժոխս : զոր ստորին վայր մահաւ կոչէ : և զնիգս նորա՝ որք էին դեքն՝ աղարտեաց : այսինքն արհամարհեաց զօրեղապէս : Եւ այսու զօրութեամբս զոր արար՝ ծանոյց մեզ թէ դու միայն ես աստուած կենդանեաց և մեռելոց : վասն զի՝ զոր յերկրի կատարեաց կամօք քս զմարդկան փրկութիւն՝ զնոյն և 'ի դժոխս եցոյց :

Եւ ոռնուս զընծայն 'ի ճեռն և ոռն :

Եւ արդ մեք Տէր՝ ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ : ” Եւ իբրև զամենայն աղերսական բանս զայտօսիկ՝ զորս ասաց նախ : որովք և 'ի հաշտութիւն էած զհայրն երկնաւոր համարձակ պատգամաւոր քահանայս՝ որ առաքեցաւ 'ի ժողովողենէն : մանաւանդ թէ և պարտական ողորմելոյ արար զհայրն : այնուհետև բուռն հարկանէ զնուիրացն : առնու 'ի ձեռն քահանայն :

որպէս թէ՛ զայս ինչ ասէ առ հայրն : Եթէ պատմեցի ես առաջի քո զխորհուրդ տընօրէնու թեան որդւոյ քոյ • 'ի ձեռս քո՛ տամ այժմ՝ զնշանակ չարչարանաց միածնի քոյ՝ որ է հացս և գինիս • զոր ունիմ այժմ՝ 'ի ձեռս իմ : Եւ դու առցես զսա՛ 'ի ձեռաց իմոց • և որոնեալ տեսցես զսպիս վերաց դորա՛ որ վասն մեր • և զխոցումն կողին • զտեղի բևեռացն • զթուք • զապտակն և զայն ամենայն • զի տեսեալ զայդ ամենայն՝ իջցես՝ 'ի դուր ռըրմու թեան՝ մեղօք յանցուցեցս • վասն որոյ ասէ • Եւ արդ մեք Հայր՝ ըստ քոյ միածնի հրամանացն համարձակեցաք յառաջ ածել զայս մեծ խորհուրդս • որ գիտէր զկամս քո :

“Յիշեմք զդորս որ վասն մեր զիրկազօրժ չարչարանն • զկենսատու խաչելու թիւնն • զերեքօրեայ թաղումնն • զերանելի յարու թիւնն • զաստուածապէս համբարձումն • զնստին ընդաշմէ քո հայր • զահաւոր և զիառաւորեալ զվիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք • ”

Չայս ամենայն՝ զորս թուեաց քահանայս՝ ասէ թէ՛ յորժամ զայս խորհուրդս կատարեմք • զմտաւ ածեալ յիշեմք • և յորժամ զայս ամենայն խոստովանիմք՝ 'ի յառաջ ածեալ հացիս և բաժակիս • յայնժամ դարձեալ ասեմք •

Եւ երբեւէլ զԵ՛ ծայնն՝ ՚ի վերոյ սելմոյն՝ և ոռն :

“ Եւ զքոյս ՚ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ
ամենայնի և յաղագս ամենեցուն :

Այսինքն՝ զքոյս միածինն ՚ի քոյոց կամաց ա-
ւաքեալ՝ դարձեալ զսա քեզ նուէր և ըն-
ծայ մատուցանեմք :

Եւ զայս տեսեալ ժողովրդեանն զի զնուէրն՝
զոր ետունն ՚ի ձեռս միջնորդին իւրեանց՝ ըն-
կալաւ ՚ի ձեռաց նորա Հայրն, յայնժամ ու-
րախացեալ զուարձանան : Եւ զգոհալ թիւնն՝
զոր նախ արժան համարեցան՝ իսկ այժմ եր-
զեն ասելով :

“ Յամենայնի օրհնեալ ես Տէ՛ր, օրհնեմք ըզ-
քեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղա-
չեմք զքեզ տէ՛ր Աստուած մեր : ”

Մեծ և բազմապատիկ են երախտիք քո առ
մեզ քրիստոս՝ զորս արարեր նախ, և այժմ ևս
առնես : Վասն ամենայն բարեացն զորս արարեր՝
օրհնեմք զքեզ, գովեմք և գոհանամք : Իսկ
ակնունիմք թէ՛ դեռ և՛ս առնիցես : Աղա-
չեմք զքեզ՝ զի արասցես և ո՛չ անարդեացես
զմեզ :

* Քահանայն Բողոքարար թողն : *

“ Զքեզ արդարեւ Տէ՛ր Աստուած մեր գովեմք,
և զքէն գոհանամք հանապազ : ”

“ Որ զանց արարեր զմերով անարժանս թեամբս օ
այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կար-
գեցեր սպասաւորս : ”

Փոխանորդէ քահանայս զգոհացողահանն երգս
ժողովրդեանն և առ հայր մատուցեալ ասէ
թէ՛ իրաւացի էր զքէն գոհանալ հանապազ օ
չի անտեսեցեր զմեր չարաչար գործն և ան-
պատմելի քո միածնի որդւոյ խորհրդեան սպա-
սաւոր արարեր զմեզ :

“ Ա՛չ յազգս մերոյ ինչ բարեգործութեանց օ
յորոց յոյժ թախուր եմք և միշտ ունայն
գտանիմք հանապազ օ այլ ՚ի քո բազմազեղ
ներողութիւնդ ցանգ ապաւինեալ՝ համարձա-
կիմք մերձենալ ՚ի սպասաւորութիւն մարմնոյ
և արեան միածնի քոյ տեառնդ մերոյ յիսու-
սի քրիստոսի : ”

Ճշմարտապէս ՚ի ներողութիւնն աստուծոյ հայ-
ելով հանապազ իշխեմք մերձենալ յստուա-
ծային սեղանն և ոչ եթէ ՚ի մերս գործ վըս-
տահանամք ։ Եւ դու տես այժմ՝ որ գոհանայ
միայն օ քանզի ընկալաւ զհայցուածն և զընծայսն
՚ի ձեռաց նորա ։ Որում վայել է ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Ժողո՞՛ ։ Եւ ընդ հոգւոյդ քում ։

Սար՞ ։ Աստուծոյ երկրպագեցնւք ։

Ժողովուր՞ ։ Առաջի քո Տէ՛ր ։

Քահանայն խոնարհեալ երկբողոքօտե՛ն ռեղոնոյն ևս ոտէ :

Պարտ է գիտել զի ամենայն բանք աղօթիցս՝ սրբ մինչև ցայս պատմեցան՝ ՚ի քահանայէն՝ այնպիսի են : Ջոր օրինակ՝ եթէ յիշխանաց որ յաղագս յանցանաց իրիք բարկանայ ծառային իւրում . և ոմն ՚ի սիրելեաց իշխանին կամօցի ՚ի հաշտութիւն անել զնա ընդ ծառային , նախ աղերսէ զի հաշտեցի և զկաշտան ընդունիցի՝ զոր ետ ծառայն :

Եւ իբրև զայն առնու , գիտէ այնուհետև զի հաշտեալ է ընդ ինքեան , նախ գոհանայ ըզնմանէ , և ապա համարձակի զայլ ևս խընդրուածս խնդրել ՚ի նմանէ , Նոյնպէս և այժմ միջնորդ քահանայս արար , զի պատմեաց նախ զամենայն տնօրէնութիւնն յաշխարհի , և ետ զընծայն ՚ի հայրն : Իբրև էառ և հաճեցաւ հայրն , գոհացաւ քահանայն զնմանէ , իսկ այժմ համարձակի այլ իմն խնդիրս առնուլ ՚ի նմանէ , և զի՛նչ իցէ խնդիրն՝ այսինքն :

* Աղօթ+ : *

“ Երկիրպագանեմք և աղաչեմք և խնդրեմք ՚ի քէն բարերոր աստուած , Առաքեան ՚ի մեզ և յառաջի եղեալ յընծայս յայս զմշտնջենաւորակից քօ և զէակից սուրբ Հոգիդ : ”

Չհոգին սուրբ աղերսեալ հայցէ՝ զի որպէս յայնժամ յետ կատարման անօրէնութեան որդւոյն եկն ՚ի սուրբ առաքեալնն. նոյնպէս և այժմ նախ զանօրէնութիւն որդւոյն պատմեաց, և սպա հայցէ երկրպագութեամբ զհոգին սուրբ ՚ի հօրէ. Քայց եթէ տարակուսեցի ոք՝ թէ զնորդ զհոգին սուրբ և ոչ զորդին ազաչէ իջանիլ և կատարել զհացն և զբաժակն Մարմն և Արիւն իւր, այսպէս գիտացէ՝ զի թէպէտ մի է կամք երրորդութեանն, սակայն ամենայն շնորհաց բաշխումն ՚ի հոգւոյն սրբոյ իջանէ ՚ի մեզ, և հոգին սուրբ է կատարիչ ամենայն շնորհաց, որպէս սենիս քեզ օրինակ նախ զմարգարէնն, և յետոյ զառաքեալնն, Այլ և ինքն որդին նախ զհոգին էառ անօրինաբար ՚ի յորդանան, և սպա հոգւոջն վարեցաւ յանապատն փորձեալ ՚ի սատանայէ, և յաղթեաց փորձողին.

Նոյնպէս և այժմ իջանէ հոգին սուրբ ՚ի վերայ նշանակացս քրիստոսի, որպէս և յայնժամ, և առնէ զսա Աստուած կատարեալ.

Եւ Քահանայն խալովնէ զԵնժոյն և սուէ :

“ Արտլ զհացս օրհնեալ Մարմնն Քշմարտապէս արասցես տեառն միրոյ և փրկչին յիսուսի քրիստոսի. Սարկաւազն՝ ամէն. ”

Քանզի մինչև ցայժմ միայն օրինակ էր հացն և բաժակն, հայցէ 'ի հօրէ զհօգին սուրբ, զի իջէ և սրբեալ կատարեցէ զնշանակ մարմնոյն և արեանն քրիստոսի Քչմարտապէս մարմն և արիւն քրիստոսի: Ձի զոր օրինակ՝ մեռեալ մարդ միայն օրինակ մարդոյ է և ոչ ստուգապէս մարդ, զի ոչ ունի զհօգին՝ որ կենդանի աւնէ: Ապա թէ լիցի 'ի շնորհացն աստուծոյ՝ զի հագի մացէ 'ի մեռեալ մարմնն յայն և կենդանացուցէ զնա, այնուհետև ոչ է օրինակ մարդոյ՝ այլ Քչմարտապէս մարդ կենդանի: Այսպէս հացն և գինին մինչև ցայժմ՝ նշանակ և օրինակ էր քրիստոսի, իսկ յորժամ կատարիչ հօգին իջանէ և կատարէ զնա, լինի Քչմարտապէս քրիստոս: Եւ որպէս յայն մեռեալ մարմնն՝ հօգին աներևութապէս գայ և կենդանացուցանէ, և յորժամ կենդանանայ մարմնն՝ յայլ ձև ոչ փոխանակի, այլ միայն կենդանական զօրութիւն 'ի նա առաւելու: Այսպէս և 'ի հացս և 'ի գինիս աներևութապէս իջանէ հօգին սուրբ, եւ ոչ եթէ զձև հացին և բաժակին 'ի միս և յարիւն փոփոխէ, այլ միայն զաստուածական զգօրութիւն և զներգործութիւն մարմնոյն և արեանն քրիստոսի 'ի հացն և 'ի բաժակն սոցաւորէ:

“Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատարարութիւն, 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեզաց:”

՚ի դատապարտութիւն գտանի սա անարժանիցն • որք անխտրաբար մերձենան ՚ի սա իբրև ՚ի սոսկ հաց և ՚ի բաժակ, Այլ և նոցա է դատապարտութիւն՝ որք սակս փառս որսալոյ ՚ի մարդկանէ, և կամ յաղագս ազահութեան ընչից պատարագեն զքրիստոս, յայտնապէս ընդ քրիստոսավաճառ հրէիցն դատապարտին •

Եւ յայտճետէ երևելի նուիրօքն աղերսէ ըզհայրն • քանզի էջ հոգին սուրբ ՚ի վերայ նուիրացն • և մեռեալ նիւթն կենդանացաւ • և անշունչն շնչացաւ • օրինակն՝ ճշմարտութիւն եղև • և նշանակն ստուգապէս Մարմին և Արիւն քրիստոսի կատարեցաւ • Ասան որոյ այժմ իբրև յաստուած հայեցողութեամբ հայցէ ասելով •



Սովաւ շնորհեան զսէր՝ զհաստատութիւն՝ և զըզձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւապաց, թագաւորաց, աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանսպարհորդելոց, նաւելոց, կապելոց, վճարանդելոց, աշխատելոց • և որք ՚ի պատերազմունս բարբարոսաց •”

Սովաւ ասէ, այսինքն թէ ՚ի ձեռն այսր աստուածացեալ ընծայիս, շնորհեան մեզ հայր զսէր առ աստուած և առ մարդիկ, և հաս-

տատու թիւն 'ի հաւատոս և յամենայն գործս
բարեաց • զխաղաղութիւն առ աստուած և
առ մարդիկ՝ յոգի և 'ի մարմին • Եւ թէպէտ
ամենայն աշխարհի տացես զայս մեծ պարգևս •
սակայն առաւել հօտի քում եկեղեցեաց քը-
րխտոնէից • և ապա 'ի գլխաւորացն սկսեալ՝
մինչև Յիստինն հայցէ տալ զողորմութիւն •
“ Սովաւ և օգոց շնորհեան՝ զբարեխառնութիւն •
և անդոց զպողարբերութիւն • և ախտացելոց 'ի
պէսպէս ցաւս՝ փութսպէս զառողջութիւն • ”

Եւ այտ առնէ այսու թէ ամենեքեան՝ որք հա-
ւատով ակնուենին այսմ աստուածային շնորհին՝
առնուեն զմեծամեծ պարգևս •

“ Սովաւ հանդն՝ զամենեսեան յառաջագոյն 'ի
քրիստոս զննչեցեալն՝ զնախահարս • զհայրա-
պետս • զմարգարէս • զառաքեալս • զվկայ-
եալս • զեպիսկոպոսուէս • զերիցուէս • զսարկա-
ւազուէս • և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սրբոյ •
և զամենեսեան յաշխարհական կարգէ զարս և
զկանայս հաւատով վախճանեալս • Ընդ որս և մեզ
նոց արասցես՝ բարերանք աստուած աղաչեմք • ”
Տուցանէ այսու թէ ոչ միայն կենդանեաց •
այլ և որք միանգամ ճշմարիտ և սուրբ հաւա-
տով ննչեցին 'ի քրիստոս՝ ամենեցուն է սա յոյս
և ակնկալութիւն փրկութեան • Զոր և սկիզբն
արարեալ յագամայ հետէ՝ թուէ զամենայն զնա-
հասկետան առաջինն • զորս հարս և հայրապետս

կոչեաց, և ապա զկնի զառաքեալն և զմարգարէսն և զայլն ամենեսեան: Իսկ թէ ասիցէ ոք եթէ՛ զկարգ զարդարն յիշատակէ աստ իբրև զկարօտս՝ որոց և մեք իսկ ակնունիմք բարեխօսութեան: այսպէս իմասցի: Քանզի թէպէտ և փառաւորեցան նոքա և հանգեան, տակայն ոչ բնաւ ՚ի լրումն հասին, այլ օր ըստ օրէ քաղցնուն և զառաւելլութիւն խնդրեն: Վասն զի անմարմին փառացն՝ յորս նոքա հասին, չէ հնար թէ կատարումն լինի. քանզի իմաստութիւն հոգևոր և գիտութիւն աստուածային է փառքն այն: Արդ՝ եթէ այսմ երկրաւոր գիտութեանս չէ հնար եթէ լրումն լիցի, ո՞րչափ ևս առաւել այնմ՝ որ իմանալին է և աստուածային: Այլ հանապազ օր ըստ օրէ ՚ի փառաց ՚ի փառս վերանան, որպէս և հրեշտակք, զի յամենայն աւուր նոր գիտութիւն առնուն յաստուծոյ, այսպէս և սուրբքն: Վասն այնորիկ նախ նոցա հայցէ քրիստոսիւ զօղորմութիւն, և ապա զայլն յիշէ մի ըստ միօջէ: Բայց տես դու ո՞վ իմաստուն այր և խօհեմ ՚ի կարգ և ՚ի խորհուրդ ազօթիցդ՝ զոր մատուցանես, թէ որպէս նախ զկենդանիս յիշատակես և ապա զննչեցեալն, և այսու իմն հաւատտեալ թէ նախ կենդանեաց է փրկութիւն աստուածային զենումնս այս, և ապա մեռելոց: Եւ ունայն են բանք այնոցիկ՝ որք

կարծեն տղայական մտօք թէ ոչ է սարա
 զկենդանիս ոք յիշատակել 'ի պատարագն. Ո՛վ
 եղբայր՝ մի թէ թաղաւորք և իշխանք, եղխ-
 կողոսք և քահանայք, ճանապարհորդք՝ նա-
 ւորդք՝ հիւանդք և այլք ո՛չ իցեն կենդանիք.
 Արդ կամի՞ս ուսանիլ զճշմարտութիւն. Պա-
 տարագո՛ւ զոր մատուցանես՝ ոչ է հնար եթէ
 միւսմ միայն առնել զնա, որպէս և կարծեն.
 այլ և ամենայն աշխարհի. որպէս և բանք ա-
 ղթիցս յայտ առնեն. Բայց եթէ ոք հաւա-
 տով տացէ 'ի ձեռս քո ողորմութիւն զինչ և
 իցէ. և յանձն սունէ քեզ յիշատակել զինքն
 կամ զայլ, զկենդանիս և կամ զմեռեալս
 'ի պատարագն. նախ տէս և քննեմ զգործս
 նորա թէ է՞ յայնպիսեաց՝ զի արժան իցէ յի-
 շել առաջի ահաւոր խորհրոյն. Մի՛ գուցէ ա-
 նառակ ոք և սրտնիկ իցէ. շնայօղ և արբե-
 ցօղ. զրկօղ և անօրէն. Արդ՝ եթէ յայսպի-
 սեաց ոմանց առցես ինչ և պատարագեցես ըզ-
 քրիստոս, կցորդ եղեր չսրեաց նոցա. և վրի-
 պեալ զտանիս ոչ միայն 'ի խնդրուածոցդ,
 այլ և 'ի քահանայական կարգէդ. Ապա եթէ
 այր երկիւղած և սոտուածապաշտ իցէ. և տա-
 ցէ ողորմութիւն ինչ 'ի ձեռս քո հաւատով յի-
 շատակել զինքն 'ի պատարագն զոր մատուցա-
 նես, դու թէպէտ վասն աշխարհի մատուցեր
 զպատարագն. սակայն նա՛ որ ետ զողորմութիւն՝

առցէ ըստ յուսոյն իւրում զփոխարէնն : Ո՛չ միայն յայնմ պատարագէ՛, զոր դու մատուցեր, այլ և յամենայնէ՛, որ ընդ բոլոր աշխարհս յամենայն եկեղեցիս ուղղափառաց պատարագի քրիստոս՝ յայս կեանս զհարիւրապատիկն առցէ, և յաշխարհին՝ որ դալոց է՝ զկեանսն յաւիտեանականս ժառանգւոցէ : Զի մի՛ է տէրն, և մի՛ է խորհուրդ մարմնոյ և արեան նորա, որ ընդ ամենայն տիեզերս կատարի, Նոյնպէս և թէ մեռելոց վառն պատարագես՝ ընտրեան և տես եթէ բարի՞ գործովք ելին յաշխարհէ, և կամ թէ՛ մեղան և դարձեալ զղջացա՞ն և խոստովանութեամբ և արտասուօք հաճոյացա՞ն, և ողորմութեան արժանի եղե՞ն, Իսկ որք ոչ այնպէս, այլ յանզղջութեան և յանզգուշութեան եգիտ զնոսս մահն, և ոչ յետին պահուզղջմանն արժանի եղեն : զայնուսիկ ո՛չ է արժան յիշատակել պատարագաւ :

Այլ և անձին քում առաւել զգոյշ և պարատ լեր՝ յամենայնի սուրբ և մաքուր լինիլ յամենայն արատոյ մեղաց, մանաւանդ յազահութեան և ՚ի փառասիրութեան ախտից, զի ահա՛ քրիստոսավաճառ լինիս՝ որ չար է քան զյուզային :

Եւ չե՞նչ յոյս տանէ այժմ յիշելն զսրբոցն յիշատէ տուն-
 Բէր սեղանոյն ՚ի լուր ժողովրդեանն :



արկաւազն հայր է ժողովրդեանն, քան-
 զի որպէս քահանայն՝ որ մեծ էր պատ-
 ուով՝ զքրիստոսի յիշատակն մատոյց
 հօր, նոյնպէս և սարկաւազն՝ որ սպասաւոր է
 նախն՝ զսրբոցն կատարէ զյիշատակ, զի սուրբքն
 անդամք են գլխոյն յիսուսի, Իսկ որ առն-
 թեր սեղանոյն անուշահոտ խնկօք հանդերձ
 յիշատակէ զսուրբսն, յայտ առնէ թէ սուրբքն
 իւրեանց անուշահոտ առաքինութեամբքն մերձ
 են աստուծոյ, Եւ զայն յետ կատարման պա-
 տարագին առնէ, քանզի նախ քրիստոս պատա-
 րագեցաւ, և սպա սուրբքն մահակից և չար-
 չարակից եղեն քրիստոսի, և որպէս զքրիստո-
 սի մահն յիշեմք ՚ի հաշտութիւն հօր, այս-
 պէս և զսրբոց նորին, Իսկ որ բարձր ձայնիւ
 գոչէ ՚ի լուր ժողովրդեանն, զի լուեալ՝ նա-
 խանձորդք լիցին վարուց նոցա :

Քահանայն ուզէ :

“ Աստուածածնի սրբոյ կուսին մարիամու և
 յովհաննու մկրտչին, սրբոյն ստեփաննոսի նա-
 խալկային և ամենայն սրբոց եղևցի յիշատակ
 ՚ի սուրբ պատարագս աղաչեմք : ”

Արդ՝ եթէ յիշատակել զաւրբան՝ տարկաւագին
է կարգ՝ օրպէս և ասացաւ, զիս^րդ նախ քա-
հանայս սկսանի առնել զայս:

Վասն զի բանքս այտքիկ՝ զձե աղօթից ունին:
Իսկ տարկաւագին ոչ է իշխանութիւն աղօթել
առաջի ժողովրդեանն, այլ միայն քարոզել: Յա-
ղագս այտքիկ նախ քահանայս առնէ սկիզբն,
իբր թէ՛ հրաման և համարձակութիւն տա-
լով տարկաւագին, և ապա նա առեալ ՚ի նմա-
նէ՛ յիշատակէ զայլ զսուրբան:

Սարկաւագն գայ յաշակողմն սեղանոյն խըն-
կարկելով շուրջ զսեղանոջն, և ուղղէ զդէմս
՚ի պատարագն, և ասէ բարձր ձայնիւ ՚ի լուր
ժողովրդեան, “ Առաքելոց սրբոց, մարգարէից,
վարդապետաց և այլն ըստ կարգին: ”

Այս է սեռութիւն բանից տարկաւագին, քան-
զի ասէ նա առ հայր թէ ընդ սրբոյ պա-
տարագին՝ որ պատարագեցաւ՝ յիշեցին ամե-
նայն սրբոցն առաքինութիւնք առաջի քոյ՝ բա-
րեխօս վասն մերոյ փրկութեան: Իսկ ժողո-
վուրդքն կցօրդին բանի տարկաւագին ասելով,
Յիշեան տէր և ողորմեան: Եւ ոչ է թէ մոռա-
ցեալք ինչ են առաջի աստուծոյ՝ վասն այնո-
րիկ յիշել ասէ, այլ այտպէս ասէ թէ նո-
ցա առաքինութեանց յիշատակաւ՝ որ է առաջի
քոյ անմուսաց՝ ՚ի նոսա հայեցեալ շարժեցի
գութ քո ՚ի վերայ մեր, զի աղգակից մեր են:

Եւ Կահանայն Կրկնաբանէ զԷփեսոս նոցին առջևդ :

“ Յիշեան տէր և ողորմեան և օրհնեան դուրբ, կաթուղիկէ և զառաքելական եկեղեցի քո սուրբ : Ջոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քոյ : և ազատեցեր խաչիւն սրբով : Շնորհեան սմա զանշարժ զխաղաղութիւն : ”

Ջհայրն աղաչէ քահանայս յիշել զգրիտոտս և զսուրբան իւր : զգրիտոտս իւր գործովքն՝ զոր նախ ինքն քահանայն յիշատակեաց : և զսուրբան՝ զորս առննթեր նորին սարկաւազն վերաճառեաց : Արկնաբանէ զաղօթսն՝ զոր քրիտոտսիւ միայն խնդրեաց : այժմ վերաջին նոյվաւ և սրբովք նորին՝ որք են անգամք նորա՝ թախանձէ զհայրն յիշել և տալ զխաղաղութիւն և զողորմութիւն կաթուղիկէ՝ որ է համօրէն եկեղեցեաց : Որք քարոզութեամբ առաքելոցն ժողովեցան՝ ի մի հօտ արեամբ գընեալք միածնի քոյ :

“ Յիշեան տէր և ողորմեան և օրհնեան զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն՝ ի մեզ զբանն ճշմարտութեան : ”

“ Եւս առաւել զեպիսկոպոստայեան մեր՝ այս անուն : շնորհեցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ : ”

Ջուղղափառադաւան զեպիսկոպոսունսն ասէ՝ որք

Տամառօտօղք էն բանին, այսինքն՝ մեկնիչք և ուսուցիչք, զորս ոչ բնաւ այժմ գտանեմք յեկեղեցւոյ, այլ էն բարձեալ և աղաւաղեալ, Իսկ սարկաւազն՝ ՚ի սկտանիլ քահանային զաղօթսն, խորհրդաբար գայ դարձեալ ՚ի նոյն առաջին տեղին իւր առ աջակողմն քահանային, և սկտանի ասել:

“Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք քեզ տէր աստուած մեր վասն սուրբ և անմահ պատարագիս՝ որ ՚ի վերայ սրբոյ սեղանոյս և այլն ըստ կարգին:”

Սարկաւագին յաջմէ քահանային կեալն՝ զդատիւ նորին և զյոյժ մտերմութիւն որ առ քահանայն նշանակէ, որ և զյոյժ մտերիմ սուրբսն ընդ աջմէ աստուծոյ ասէ լինիլ աւետարանն, զսոյն և ինքն սարկաւազն նշանակեաց, որ յաջակողմն սեղանոյն չոգաւ և յիշատակեաց ըզսուրբսն:

Եւ Կրօնայնի առէ զպղծին զայս:

“Յիշեան տէր և ողորմեան և օրհնեան զքո առաջի կացեալ ժողովուրդս և զպատարագիս մատուցողս: Եւ պարգևեան սոցա զպիտոյն և զօգտակարսն:”

Զժողովուրդսն՝ որք կան առաջի սպասաւորել, և զպատարագի մատուցողսն՝ որք էն ամենայն քա-

Տանայական դառն՝ յիշեանք քանզի թէպէտ մին միայն է մեծարեալ՝ ի պատիւն յայն, տակայն ամենեքեանք քահանայք և դպիրք՝ որք կան և սպասաւորեն աստուածային սուրբ խորհրդոյն՝ իւրաքանչիւր ոք ըստ իւրում ջսկոյն մատուցիչք են սրատարագին։

“ Յիշեան տէր և ողորմեան և օրհնեան զուխտաւորս և զպտղաբերիչս եկեղեցւոյ քում սրբոյ և որք յիշեն զաղքատս ողորմածու թեամբ։ ”
Եւ հատո՛ նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութեան քում հարիւրապատիկ աստ և ՚ի հանդերձելումդ։ ”

Այսու բանիւս՝ փակէ զամենայն ընծայաբերս և զպտղատուրս՝ որք յեկեղեցիս և կամ ՚ի քահանայս և կամ յաղքատս ինչ նուիրեցին։ Եւ յանդիմանէ զայնոսիկ՝ որք թիւս և համարս պահանջեն թերահաւատութեամբ, և միոյ անձին միայն համարին փրկութիւն։ Իսկ ընդաբոյսն՝ բնութենակից ասի, վասն զի աստուծոյ բնութեան կցորդեալ է իւր առատութիւնն։

“ Յիշեան տէր և ողորմեան և գթան ՚ի հոգիս հանգուցելոցն։ Հանգո՛ զնոսա և լուսաւորեան և դասաւորեան ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից, և արժանի արա ողորմութեան քում։ ”
Նախ զկենդանիսն և ապա զհանգուցեալսն յիշէ՛ որպէս և յառաջագոյն, քանզի կրկնաբանութիւն է այս նախասացեալ աղօթիցն։

Եւ թէ է՛ր վասն զնոյն դարձեալ կրկնեաց •
վասն զի անդ յորժամ քրիստոսի յիշատակն կա-
տարեցաւ • և հացն և բաժակն աննսհացաւ •
արար զտոյն ալօթսւ • Իսկ այժմ դարձեալ ըզ-
կնի յիշատակի սրբոցն պատշաճ համարեցաւ
վերստին զնոյն ալօթսն կրկնաբանել •

Եւ աստ թէ կամիս զոք յանուանէ յիշել •
բարուոք է յիշեան •

“ Յիշեան տէր և զայնստիկ՝ որք յանձնեցին
մեզ յիշատակել յաղօթս զկենդանիս և զհան-
գուցեալս • կառավարեան զկամս հայցմանց նոցա
և զմերս • ընդ ուղղորդն և որ լին է փրկու-
թեամբ • ”

“ Եւ վարձատրեան բոլրեցունց զանանց և զե-
րանելի բարութիւնսդ • ”

Ահա որդեակ՝ տէս և իմն ուղիղ մտօք եթէ որ-
պէս պարունակեաց զամենեւեան միով բանիւս
այսու զկենդանիս և զհանգուցեալս • և զի՛նչ
այլ պիտոյ է զոք յանուանէ յիշել քեզ •
Կառավարեան • այսինքն՝ ուղղեան • Քանզի է բա-
զուժ անգամ զի անպատշաճ և թիւր լինին
խնդրուածքն մեր •

Վասն որոյ հայցէ զի զկամս այնոցիկ՝ որք յանձ-
նեցին զինքեանս մեզ՝ և զմերս յուղղորդն • և
և որ փրկութեան է մեզ առիթ • ուղղեացէ •
և վարձատրեացէ ամենեցուն զանանց բարիսն •
“ Եւ զտեալ զխորհուրդս մեր՝ տաճարացն

յընդունակու թիւն մարմնոյ և արեան միածնի
քոյ ակառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի : ”
Խնդրէ զի զուտ և մաքուր լիցին խորհուրդք
Նաշակողացն :

“ Ընդ որում քեզ հօր ամենակալի հանդերձ
կենդանարար և ազատիչ սուրբ հոգւովդ վայ-
ելէ փառք իշխանու : ”

“ Եւ եղիցի ողորմութիւն մեծիս ատուծոյ և
փրկչիս մերոյ յիսուսի քրիստոսի ընդ ձեզ
ընդ ամենեւեանդ : ”

Դպիրքն . “ Եւ ընդ հոգւոյդ քում : ”

Ընդէ՛ր յե՞ս այսքէ՛ն էհո՞ս ժամանէ՛ Գորդո-Յե՞տն ոտքի-
ստգին :

* Ի Ներսէն *

Պնորտ է գիտել թէ այտուհետե վախ-
ճան էառ խորհուրդ պատարագիս հան-
դերձ սէսպէս աղերսանօք ՚ի քահանայ-
էն , զի մինչդեռ ոչ էր այս կատարեալ , ոչ
ինչ ունէր համարձակութիւն քարկաւազն աղ-
դել ժողովրդեանն , վասն այսորիկ լուեալ դա-
դարեցաւ :

Եւ սոքա քահանայքս ետուն խորհրդապէս ըզ-
քրիստոս հօր , առին և ՚ի նմանէ զհոգին ,
հայցեցին և սէսպէս ողորմութիւն , Իսկ յու-

Ժամ 'ի լուսնն զխորհուրդս ածեալ յանգե-
ցին, սարկաւազն ազգէ քարոզութեամբն ժո-
ղովրդեանն եթէ ձեր փրկութեան նուէրն՝ զոր
ետուք 'ի քահանայն՝ մատեալ առաջի առ-
տուծոյ, և նա ընկալաւ հաշտ և քաղցր կա-
մօք :

Արդ պատրանստ լերուք՝ զի փոխարէն պատարա-
զին ձերոյ զշնորհան՝ զորս քահանայքն առին
յատուածոյ՝ 'ի հոգիս ձեր վայելիցէք : Եւ այս-
պէս զգուշութիւն տայ նոցա, զի պատրաստե-
ցին առ հանդերձեալ շնորհն՝ սր իշանելոց է
'ի մէջ նոցա, այսինքն՝ զի դեռևս ընդ աստ-
ուած հայր ոչ համարձակեալ են ժողովուրդն
խօսիլ : Նա և ոչ զհոգւոյն իշուսն 'ի վերայ
պատարագին իմացեալ : զի սյս ամենայն ծա-
ծուկ և խորհրդաբար 'ի ներքին վայր սրբոյ
խորանին կատարեցաւ 'ի մէջ քահանայիցն : Եւ
ժողովուրդքն միայն քրիստոսի լինէին խօսակից՝
զսերովբէականն երգելով զերգ և զյամենայնի
գոհաբանութիւնն : որպէս և անդր է յայտ-
նեալ : Արդ այսուհետև հանդերձեալ են ըզ-
հոգին տէրունական ընդունիլ : վասն որոյ պարտ
է՝ զի որպէս քահանայքն նախ ընդ հօր խօսե-
ցան և ապա 'ի ձեռն քրիստոսի զհոգին 'ի նը-
մանէ ընկալան : այսպէս լիցի և սոցա նախ հա-
մարձակիլ և առ աստուած հայր աղօթել : և
ապա զսարգև շնորհին 'ի նմանէ ընդունիլ :

* Քարոզի սարկաւածի : *

“ Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեցոցք :
Ժողո՞ւ . Տէ՛ր պղտմեմս : ”

Ամենայն սրբովք՝ զորս յիշատակեցաք ևս առա-
ւելլապէս զտէր աղա՞ :

Ասն մատուցեալ սուրբ և աստուածային
պատարագիս որ՝ ի վերայ սրբոյ սեղանոյս զտէր՞ :

“ Որպէս զի տէր աստուած մեր՝ որ ընկալաւ
զսա՞ ՚ի սուրբ յերկնային և յիմանալի իւր
մատուցարանն . և զփոխանակն առաքեցեցէ առ
մեզ զՀնորհս և զպարգևս հոգւոյն սրբոյ զտէր՞
և այլն՝ ՚ի կարգին : ”

Քարոզ սարկաւածին որպէս ասացաւ ՚ի վերոյ՞
առ ժողովուրդն է . զի աղաչեցեն զհայրն
տալ նոցա զհոգին սուրբ : Զոր և նախ քա-
հանայն աղօթէ առ հայրն տալ նոցա զայնպի-
սի համարձակութիւն :

Եւ անչէն ընդ Գորգուիէտնն Գահոնոյն խոհրդոց
ողօնէ :

“ Աստուած Ղշմարտութեան և հայր ողորմու-
թեան՝ գոհանամք զքէն : Որ ՚ի վեր քան զե-
րանելի նահապետացն՝ զմեր պարտաւորելոցս ա-
ռաւել մեծարեցեր զբնութիւն : ”

Մեծ է մարդասիրութիւնն աստուծոյ առ մեզ

զերջինս՝ քան առ նահապետն առաջինն •
 Վասն զի նոցա աստուած կոչեցաւ յազագս
 ճշմարտութեան դատաստանին առ նոսա • իսկ
 մեզ հայր անուանեաց զինքն վասն բազում
 ողորմութեան իւրոյ առ մեղապարտսս •

“ Վասն զի նոցա աստուած կոչեցար • իսկ մեզ
 հայր հաճեցար անուանիլ գթալով • ”

“ Եւ այժմ տէր աղաչեմք զքեզ՝ զայսպիսի առ
 ՚ի քէն զնորդ և զպատուական անուանադու-
 թեանս շնորհ օրըստօրէ պայծառացուցեալ
 ծաղկեցն ՚ի մեջ եղեղեցւոյ քում սրբոյ • ”

Այս է պայծառանալն և ծաղկիլն զի վարս
 սուրբս և գործս մաքուրս շնորհեացէ մեզ • զի
 համարձակ լիցուք զայսպիսի մեծ և տօրտախելի
 անունս կոչել • օրպէս և ստէ •

“ Եւ տուր մեզ համարձակածայն բարբառով
 քանալ զբերանս մեր • կարգալ զքեզ երկնա-
 լորդ հայր՝ երգել և ասել • ”

Եւ զդերիս Բողոքարոժ Եղանկէն •

“ Հայր մեր որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քն • ”
 Բանցի որպէս զորդիս հարազատս զնմանու-
 թիւն հօրն բերեն յինքեանս • և յերկրայնոցս
 ՚ի բաց կացեալ՝ ՚ի յերկինս վերացան հոգւով •
 Վասն որոյ աղաչեն սուրբ լինիլ անուան նորա •
 այսինքն՝ զի վարս սարկեշտս և գործս առա-

քինիս ստացուք ամենեքեան շնորհօքն աստու-
ծոյ, որպէս զի անուն նորա փառաւորեացի 'ի
դործոց մերոց, որպէս այն զոր ասէ, Տեսցեն
զգործս ձեր բարիս, և փառաւորեացեն զհայր
ձեր որ յերկինս է:

“ Եկեացէ արքայութիւն քո: ”

Քանզի ընդ ծանր ծառայութեամբ մեղացն ե-
լաք, և սատանայի արքայութիւնն տիրեաց մեզ:
Այժմ բարձցի ասէ նորա իշխանութիւնն, և
քո թագաւորութիւնդ տիրեաց մեզ: Եւ այս
եթէ որպէս եղիցի՝ ասէ:

“ Եզիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: ”

Այսինքն սատանայի կամացն խախտուամն լե-
նիցի 'ի խորհրդոց մերոց, և քո կամացդ յօ-
ժարութիւն որպէս յերկինս 'ի հրեշտական
կատարի, նոյնպէս և 'ի մեզ 'ի յերկրաւորս 'ի
մարդիկ կատարեացի:

“ Ջհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: ”

Վասն զի մարդիկ եմք կարօտ բնութեամբ,
վասն որոյ զհաց զօրըստօրէն հայցեմք: Այլ և
զխմաստութիւն՝ որ է հաց բանական հոգւոյն,
Նոյն և ինքն քրիստոս՝ հաց է յերկնից ի-
ջեալ:

“ Թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թո-
ղումք մերոց պարտապանաց: ”

Քանզի բիւր երախտեաց քոց որ առ մեզ՝
պարտական դտաք, զի ոչ եղաք շնորհակալ:

այլ անհնազանդ գործով օրինաց քոց՝ բարկացուցաք զքեզ : Եւ արդ՝ թողութիւն շնորհեան մեզ այսպիսի պարտաւորելոցս : որպէս և մեք այնոցիկ՝ որք մեզ էին պարտականք : և առ մեզ եղեն յանցաւորք : թողաք ՚ի սրտից և անօխակալ եղաք :

“ Եւ մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութիւնս :”
Փորձութիւնք եթէ ՚ի մեղաց են : և եթէ ՚ի մարմնական փասուց՝ յամենայնէ զփրկիլն հայցեմք :

“ Այլ փրկեան ՚ի չարէնս :”
Չար է նոյն ինքն սատանայ և խաբէութիւն նորա՝ յորմէ զփրկիլն հայցեմք : Եւ զաւարտուծն աղօթիցս՝ ՚ի քահանայն յանձնեն : զի նա է հայր սոցա որպէս և ասէ :

* Աղօթ : *

Տե՛ր տէրանց՝ աստուած աստուծոց : Թագաւոր յաւիտենական : Արարիչ ամենայն արարածոց : Հայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի : Մի՛ տար զմեզ ՚ի փորձութիւն և մի՛ ՚ի դատապարտութիւն : այլ փրկեան ՚ի չարէ : և ազրեցո՛ ՚ի փորձութենէ :

“ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն :”

Ամենեցուն որ յերկինս և որ յերկրի՝ դու

ես տէր սստուած՝ որ հայր ես բնութեամբ
տեառն յիսուսի։ Ասոն զի քո է սեպհական
Թագաւորելն, և զօրութիւնս առնելն, և
քեզ փառք յաւիտեանս ամէն։

“ Խաղաղութիւն ամենեցուն։ ”

Ժողո՞ւք։ Եւ ընդ հոգւոյդ քու՛մ։

Սար՞ի։ Աստուծոյ երկիրպագեսցո՛ւք։

Ժողովու՞ր։ Առաջի քո Տէ՛ր։

Ձառ հայր աղօթելն վիճարեաց, այժմ կամի
'ի տեսութիւն ածել զաստուածային խոր-
հօւրդն, վասն որոյ նախ զխաղաղութիւն տայ։
Եւ սարկաւազն հրամայէ երկիրպագանել, զի
մի՛ հարեանցի յանկարծագէպ տեսցեն զայս մեծ
խորհօւրդս։ Դարձեալ՝ զի մի՛ յորժամ տես-
ցին, յայնժամ խոնարհեցին յերկիրպագանել,
և զրկեցին 'ի տեսութենէն, վասն որոյ նախ
հրամայէ երկիրպագանել։

Եւ քահանայն խոնարհեցուցեալ զգլուխն
իւր նման ժողովրդեանն՝ աղօթէ առ հօգին
սուրբ։

Քանզի որպէս ասացաք 'ի վերոյ՝ եթէ ամե-
նայն շնորհաբաշխութիւն 'ի Հոգւոյն սրբոյ է։
Եւ նա Հոգին սուրբ աստուածացոյց զնը-
շանակն։ Ասոն այնորիկ քահանայս այժմ առ
հօգին սուրբ աղօթէ վասն ժողովրդեանն։

Մեկնութիւն. ողբերգն՝ զոր ունեա լիակնայն և ճարտաւ
յնէ :

ՈՐ ԱՂԻՒՅԻՒՅԻՆ ես կենաց և
բղիսումի ողորմութեան Հոգիդ սուրբ :
Ողորմեան ժողովրդեանս՝ որք խոնարհեալ եր-
կիրպագանեն աստուածութեանն քում :

Աղբիւր կենաց ամենայն ուրեք զհոգին սուրբ
անուանեն միշտ գիրք. վասն զի զոր օրինակ
աղբիւր ջրոյ՝ յորժամ զգրախտ ինչ առոգանէ
միով որակութեամբն իւրով՝ զամենայն ծառս
և զծաղիկս և զբոյսս դրախտին՝ ի պէսպէս
համն և ի զանազան գոյնս և ի զօրութիւնս
փոխարկէ : Ա՛յսպէս և հոգին սուրբ՝ միով պարզ
և իմանալի աստուածութեամբն իւրով առուպ-
նէ զգրախտ եկեղեցւոյ. և պէսպէս շնորհս և
զօրութիւն տայ ամենեցուն ըստ իւրաքանչիւ-
րոյ հաւատոյն չափոյ՝ որպէս ասէ առաքեալն :
Քոր հայցէ այժմ քահանայս. զի զնոյն առա-
տութիւն շնորհացն ողորմութեան՝ սոցէ ժողո-
վրդեանն որպէս ասէ :

“Պահեա զնոսա ամբողջս և անարատս :”

Ո՛չ միայն մարմնով՝ այլ առաւել ևս հոգւով
լինիլ մաղթէ ողջ և անարատ :

“Տպաւորեան յոգւոջ սոցա զձե մարմնոյ ցու-
ցակի” :

Ասէ թէ՛ զոր մարմնով այժմ ձեացեալ կան

առաջի քո 'ի սպասաւորութիւնս : և խոնարհ-
հեալ երկիրպագանեն . զնոյն ցուցակ և յոգ-
ւոյ սոցա սպաւորեան . զի և հոգւով ևս լիցին
առաջի քո և հոգւով երկիրպագեն :

“ Առ 'ի ժառանգութիւնս և 'ի վիճակ հան-
դերձեցոցդ բարեաց՝ Քրիստոսիւ Յիսուսիւ տէ-
րամբ մերով . ”

Ձի այնմ վիճակի ժառանգութեան հանդեր-
ձեցոց բարեացդ արժանացին : զորոյ քրիստոսիւ
յիսուսիւ տէրամբ ընկալան զգրաւականն . ”

“ Ընդ որում քեզ հոգւոյդ սրբոյ և հօր ա-
մենակալի վայել է : ”

Եւ Բեհեմայն առնուա զսուրբ հոյն 'ի Յիւնն : Եւ սարկաւոսին
Յայնէ Բորչր . Վաստիսաւ :

Բառս այս յունական է : Իսկ 'ի մերո՝ Աւենկն
դիք կամ 'ի վեր հայեցէք թարգմանի :

Եւ Բեհեմայն վերոցուցանէ : զնոյն 'ի վեր Կան զՎեր-
նա :

Ի սրբաւիտան սրբոց :

'ի սարկաւադի ձայնէն ընդոտտեան ժողովուրդքն՝
յորժամ ասաց թէ երկիւղիւ 'ի վեր հայեցէք :
Եւ իրրե լուան և տեսին յոր ցանկային : ասէ

քահանայն թէ՛ սրբութիւն է սա • բայց սրբոցն և մաքուր եղելոցն լինի սա ՚ի սրբութիւն • որք խոստովանութեամբ և արտասուօք զինքեանս մաքրեցին ՚ի մեղաց •

Եւ ժողովարդին միտքոյն ողորակեն •

“ Միայն սուրբ՝ միայն տէր՝ յիսուս քրիստոս ՚ի փառս աստուծոյ հօր ամէն • ”

Ջարտութիւն խոստովանին յառաւել ուրախութենէն ասելով • տէր մեր քահանայ՝ ՚ի մեզ ուստի՞ իցէ սրբութիւն կապելոցս ընդ մարմնոյ և ընդ արեան • Այլ միայն սուրբ է սուրբդ սրբոց • որ միայն տէր է երկնի և երկրի տէր մեր յիսուս քրիստոս ՚ի փառս հօր փառաւորեալ •

Քահանայն ունելով զնոյն յերկոսին յեանն ուն •

“ Օրհնեալ հայր սուրբ Աստուած Ճշմարիտ • ”
Ժողո՞ • Ամէն • Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած Ճշմարիտ • Ժողո՞ • Ամէն • Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած Ճշմարիտ • Ժողո՞ • Ամէն • Քահանայն • Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւի՞ • ”

Քանզի ՚ի յերրօրդութենէն ընկալաւ զայս

մեծ շնորհո՞ւ վասն որոյ զգոհացողական երգս
նմա մատուցանէ :

Եւ ժողովուրդքն զնոյն երկրորդեն զբահա-
նայինն ասելով . Ամէն . Հայր սուրբ՝ Որդիդ
սուրբ՝ Հոգիդ սուրբ :

Օրհնութիւն հօր և Որդւոյ և հոգւոյն սըր-
բոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից
ամէն :

Եւ Կոնստանդնուպոլսոյ զարգիւտեալ խոնարհի և ողօբէ :



ԱՅՆԱՅ Տէր մեր յիսուս քրիս-
տոս յերկնից՝ ի սրբութենէդ քու միտ
և յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ .”
Այսու ցուցանէ զանբովանդակելի աստուածու-
թիւն Որդւոյն :

“ Ե՛կ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զմեզ .
Որ ընդ հօր նստիս և աստ սրատարագիս :”

Նա է սրբութիւն և կենդանութիւն ամենե-
ցուն քրիստոս . զի թէպէտ և ընդ հօր է ան-
բաժանաբար . սակայն և ՚ի վերայ սեղանոյն
սրատարագի հանապազ :

“ Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ
քու միտ և ՚ի սպասուական արկնէ . և ՚ի ձեռն
մեր ամենայն ժողովրդեանս :”

Զի մեք ըստ գործոցս չունիմք համարձակու-
թիւն մերձենալ ՚ի քեզ . բայց դու արժանա-

ցուցես Կողորմութեամբ, և ՚ի ձեռք մեր ա-
մենայն ժողովողեանս, զի ամենեքեան միացեալք՝
Հաղորդ լիցուք քեզ :

Եւ զայն ասացեալ երկիրպոփոնէ և համբարէ զսէղանն և
ասեալ զասորք Մարինն՝ ոչ զ Բանայ յանպակ Արեւնն :
և ասէ զաղօնս զայն :

Յէր Աստուած մեր՝ որ հոչեցեր զմեզ յանուն
միածնի Որդւոյ քոյ քրիստոնեայս :

Գլխաւորելով զոր ինչ վասն մատուցման պա-
տարագին գոհութիւն և աղօթք, զոր և աւար-
տեալ առանձնաբար օրհնութեամբք ՚ի սուրբ
Երրորդութիւնն :

Եւ դարձեալ զօրհնութիւն և զփառս միաւո-
րութեամբ սկսանի, դարձեալ գոհութիւն,
դարձեալ և մաղթանս :

Զորս սչ վասն բնաւ մարդկութեանս, այլ
վասն հաւատացելոց միայն, Եւ քանզի ասաց
մեծածայնութեամբ թէ սրբութիւնք սրբոց
վայել են, և յայտնեաց թէ որդիսիք են սրբ-
բութիւնքն յասելն, Հայր սուրբ՝ Որդի սուրբ՝
Հոգի սուրբ :

Եւ սուրբ Պատարագն քրիստոսեան՝ վայել է
սուրբ Երրորդութեանդ ընծայ, և թէ որք
Հաղորդին սրբութեանցն՝ և նոքա մաքուր և
սուրբ պարտին լինիլ, Եւ զի մարդկային բը-

նաթիւնս միշտ աղտեղանայ 'ի սխալանաց, և
 սէ կարէ ամենեւին անախտ լինիլ, վան որոյ
 կոչէ տկարութեանս մերում օգնական զգթու-
 թիւնն աստուծոյ, զի որով մաքրութիւն ըս-
 տացեալ 'ի մաքուրն մերձեսցուք, Եւ նախ
 հայր ասելով շարժէ 'ի գթութիւն զմարդա-
 սիրութիւնն աստուծոյ, և ապա այնու 'ի հայրն
 յարեալ ասէ:

“ Ար կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քոյ
 քրիստոնեայս: ”

Զի այնպիսի ասէ շնորհ ետուր մեզ, մինչ զի
 զքոյ միածնի որդւոյդ առաք 'ի վերայ մեր զա-
 նուն, քանզի դա կոչի Քրիստոս, իսկ մեք
 քրիստոնեայք:

Այսու և գոհանամք և 'ի գործ ածեմք: Զի
 թէ մինչ օտարքն էաք՝ այսպէս սէրդ քո ըս-
 տիպեաց գթալ, մինչ միածնիդ քոյ առնել
 բաժին և ժառանգութիւն, և դովիմք անուա-
 նիլ: Ապա որչափ քրիստոնեայքս գովով՝ աղե-
 կէզ լինիցիս 'ի մեզ վասն քոյ միոյ միածնիդ և
 սիրելի որդւոյդ լինելոյ մեր և կոչեցելոյ յա-
 նուն դորս:

“ Եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգևոր ա-
 լազանաւն 'ի թողութիւն մեղաց: ”

Ա՛չ ասէ միայն բաժին և ժառանգութիւն ե-
 տուր զմեզ միածնի որդւոյդ քում ըստ խոս-
 տացելոյ մարգարէիւն թէ, հաց քեզ զհետեւ:

նոսս 'ի ժառանգութիւնս, այլ և եղբարս ևս
կամեցար առնել զմեզ սիրելի և համադոյ որդ-
ւոյդ քոյ, զի եղիցի դա անդրանիկ 'ի մէջ եղ-
բարց բաղմաց, Յաղագս այնորիկ զաղտեղու-
թիւն մեղաց մերոց լուացեալ մկրտութեամբ
սուրբ աւազանին և վերստին ծննդեամբ հոգ-
ւոյն սրբոյ՝ զմեզ որդիս վերածեր, և այնու
ևս ասէ շեռուցեր զհայրական սիրոյ բորբո-
քումն, զի ելողդ 'ի քէն սուրբ հոգիդ որ երկ-
նեաց զմեզ՝ և քեզ որդեգիրս վերածեաց:

“Եւ արժանի արարեր զմեզ հաղորդիլ սուրբ
մարմնոյ և արեան միածնի քոյ:”

Եւ քանզի առաւել յոյժ տաստեացաւ սէրդ
քո 'ի մեզ, զի ոչ ժուժեցեր որդի ունիլ մի-
այն դքս բնութեամբ զորդիդ, այլ և զմեզ՝
որք շնորհօք որդիացաք, զի յաղթեալ 'ի մար-
դասիրութենէդ՝ խառնել զնա ընդ մեզ կա-
մեցար: Որպէս զի նա գլուխ մեր լինիցի, և
մեք մարմին և անդամք նորա լիցուք մարմնով և
արեամբ նորին՝ 'ի նա յօդեալ և սատշաճեալ,
զի բազումքս մի մարմին եմք 'ի քրիստոս որ-
պէս ասէ առաքեալն, և ըստ այսմ մի որդի
ամենեքեան:

Եւ յետ այսպիսի անպատմելի սիրոյ յիշատակ
առնելոյ, ապա զաղաչանս առաջի արկանէ չան-
կանիլ 'ի սատուոյն և 'ի շնորհացն վասն մե-
զացն սխալմաց, և դու ասէ որ յայնչափ յա-

առաջին վատթարութեանցն յայսպիսի ածեր 'ի
լաւութիւնս, և այժմ մաքուրս արասցես զմեզ,
զի այնպէս 'ի մարմին և յարիւն քրիստոսի
մերձեցուք, որպէս և ասէ:

“ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր արա՛ զմեզ
արժանի ընդունիլ զհաղորդութիւնս զայս մեզ
'ի մեղաց թողութիւնս:”

Վասն այնր հաղորդութիւն կոչէ, զի կցորդի
նս մեզ և մեք նմա: Յաղաքս այսորիկ և
զայսպիսի շնորհէ գոհանալ պարտ է արժա-
նապէս, որպէս և ասէ:

“ Եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ
Որդոյ և սուրբ հոգւոյդ այժմ և:”

Եւ երկրպագեալ Բարձրացոցոնէ ակնբեւ ժողովրդեանն:

* Մեկնութիւնս: *

Նախ 'ի սկզբան պատարագիս՝ յորժամ եմուտ
առաջի սեղանոյն՝ երկրպագեաց: Եւ դարձեալ
յորժամ զհոգին խնդրեաց ի շննել և կատա-
րել զպատարագն, և այս երրորդ անգամ է՝
որ երկիրպագանէ: Քանզի որպէս պատգամա-
ւոր դք՝ յորժամ առաջի թագաւորին մտանէ՝
երկիրպագանէ նախ և ապա զպատգամս ասէ,
այնպէս էր և քահանայիս առաջին երկրպա-
գութիւնն: Նմանապէս և որպէս դք յորժամ
շնորհ ինչ առնու 'ի թագաւորէն, երկիրպա-

գանէ և գոհանայ, այսպէս և սա յորժամ
 զհոգին ընկալաւ՝ երկրպագեաց և գոհացաւ :
 Նոյնպէս և այժմ յորժամ զայլ խնդրուածն
 ընկալաւ, գոհանայ երկիրպագանելով : Նմանա-
 պէս և այժմ կրկին անգամ վերացուցանէ ըզ-
 լարհոլորդն, զի 'ի ճաշակումն յորդորեացէ ըզ-
 ժողովսերդն, որպէս և ասէ իսկ :

“ 'ի սուրբ 'ի սուրբ պատուական մարմնոյ և
 յարեմէ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քը-
 ռիստոսի : Ճաշակեցուք սրբութեամբ՝ որ ի-
 ջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջև մերում :
 Սա է կեանք՝ յոյս՝ յարութիւն՝ քաւութիւն
 և թողութիւն մեղաց, Սաղմոս ասացէք տեառն
 աստուծոյ մերում, սաղմոս ասացէք երկնաւոր
 թագաւորիս մերում անմահի՝ որ նստի 'ի կառս
 քերովբէականս : ”

Նախ երկեցոյց զնոսա, յորժամ վերացոյցն և
 ասաց, 'ի սրբութիւն սրբոց, և նոքա զարհու-
 րեցան 'ի ձայնէն գիտելով զսխալական բնու-
 թիւնս իւրեանց :

Այլ իմն դարձեալ յորդորէ զնոսա 'ի ճաշա-
 կումն ասելով, թէպէտ և է սա սրբութիւն
 սրբոց, ոսկայն յորժամ սրբէք զձեզ խոստո-
 վանութեամբ և հաւատոյք ճշմարտութեամբ,
 կեանք և յոյս և յարութիւն և քաւութիւն
 և թողութիւն մեղաց ընդունիք 'ի սմանէ :

Ձեզ նշանակէ այսուհետեւ հրամանս որովհետեւ ստիճանովն
Գործոյն Գոտո . որդէս եւ ուէ :

Սաղմոս ասացէք տեսուն աստուծոյ մերում
դպիրք՝ ձայնիւ քաղցրութեան զերգս հոգե-
որս : Ձի ամա վայել են սաղմոսք և օրհնութիւնք
ալիլուք և երգք հոգեւորք : պաշտօնեայք հան-
դերձ երգովք սաղմոս ասացէք և զՏէր յեր-
կինս օրհնեցէք :

Որպէս յառաջնումն մինչ վերաբերիւր պատա-
րագս ՚ի Ժողովողենէն ՚ի սեղանն՝ հրաման տայր
սարկաւազն դպրացն եղանակել . այսպէս և
այժմ առնէ . զի հանդերձեալ է նոյն շնորհն
իշանել առ Ժողովուրդն ՚ի բաշխումն : Եւ այս
ո՛ր աղաբաւ . զի ազգումն երաժշտական եղա-
նակին՝ լրման ունի զօրութիւն . զի ընդոստու-
ցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ՚ի
տենչումն շնորհին :

Քանզի չիք ինչ՝ որ զկամս մեր յեղաշրջէ
յուրախութիւն . կամ ՚ի տրտմութիւն : որպէս
զերգոցն ձայն . որ թէ ըստ պատշաճին լինի-
ցի : Վասն այսորիկ և եկեղեցին՝ աւանդութիւն
ընկալաւ զսոյն յարտաքնոցն : Եւ գարձեալ
երգք աստուածայինք և քաղցրաձայնք զիղծս
և զցանկութիւնս մարդկան յերկրէ յերկինս
առ աստուած ամեն :

Եւ ապա սխումի եկեղեցին եղանակել շորի ստորոց որոտորոտութեան :

* Մեկնումիտան : *

Տեսանելո թէ որպէս 'ի քահանայէն առնուն
զբանն աւետեաց, և ապա յերանակս առեալ
գերզեղեն զմիտս և զմարմինս ամենեցուն բա-
նիւն և եղանակաւն. և 'ի խնձոյս ցնծու-
թեան շարժեն :

Բայց եկ զի զզօրութիւն ասացելոցս քննեալ
ծանկցուք, զի՞նչ ասէ :

“ Քրիստոս պատարագեալ բաշխի 'ի միշլե
մերում : ”

Որպէս թէ՛ ով եկեղեցի ծանկր զստկալի
խորհուրդն, զի Քրիստոսն այն՝ զոր 'ի միշլայ
մերմէ վերածեալ՝ քրովբէապէս տուաք 'ի
ձեռս քահանային պատարագ մատուցանել ա-
տուծոյ հօր փոխանակ ամենեցուն՝ նոյն ինքն
մատեալ յերկինս, և զհաշտութիւնն առ աստ-
ուած և առ մարդիկ ուղղեալ՝ այժմ դարձեալ
գայ 'ի մէջ մեր պատարագ 'ի հօրէ, և գերզ
կենաց բաշխի ամենեցուն :

Իսկ Կոնստանդնուպոլսի Երեմիայի խոսքն
և Կոնստանդնուպոլսի Երեմիայի խոսքն :

“ Ձո՞ր օրհնութիւն կամ զո՞ր գոհութիւն
'ի վերայ Հայիս և Բաժակիս ասացուք : Այլ

Յիսուս՝ զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբդ
և ամենատուրբ Հոգևոյդ այժմ և միշտ և
յաւի՛ :”

* Դարձեալ առէ : *

“ Խոստովանիմ և հաւատամ զի դու ես քը-
րիստոս որդի աստուծոյ՝ որ բարձեր զմեզս
աշխարհի :”

Եւ բեկեալ որումն է բաժակն առելով .

“ Լրումն Հոգւոյն Սրբոյ :”

Եւ ապա խնորհ է աւանդէ զէսպէս հայցուածս ոնջինն և
ժողովրդինն և ոմնոյն ոչխորհի՛ որչափ և կտի : Եւ յեփ
այնորիկ առեալ ճաշուի՛ն առելով .

“ Մարմն քո անապական լիցի ինձ՝ ի կեանս .
և սուրբ Արիւն քո՝ ի քաւութիւն և ՚ի թո-
ղութիւն մեզաց :”

Եւ Ֆիւլրեո նա զոյս առէ և զպիրոս զաշտէն , հրաման քոյ
ճաշուի՛ն ոյնոցիկ՝ որք է քահանայուն կարգին էն :

* Մեկնութիւնն :

Զոր օրինակ և տէրն զայն արար , զի նախ
ինքն ճաշակեաց և ապա ետ առաքելոցն , զի

ւոց կերակուր և հոգւոց հաց յերկնից իջեալ :
և յերկրի մարմնով զգալեալ երևեալ առ 'ի
զզգալիս այժմ կենսացուցանել :

Եւ զդերձն երգէն բարձր ճոյնի :

“ Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ :
Օրհնեալ եկեալ յանուն Տեանն : ”

Քահանայն Գոյ զնի՛ն որբնաւորն . եւ խալանի՛նէ շտաղմաւոր-
քնն ասելով :

“ Աեցո՛ զժողովուրդս քո՛ , և օրհնեան զժառանգ-
դու թիւնս քո՛ , հովուեան և բարձրացո՛ զսոսա
յայսմ՛հետէ մինչև յաւիտեանն : ”

Եւ հողորդէ Գահանայն զորժանաւորն . եւ զդերձն երգէն
ընթաց : Եւ որբով յաճէ Գահանայն 'ի ճաշակունի՛ն՝ զդերձն այն-
Գոյ երկարեցէն զերգոն :

* Մեկնութիւնն : *

Ամենայն երգ զպրացն՝ ուրախական է . և յոր-
դորումն ժողովրդեանն 'ի ճաշակումն :

* Եւ զդերձն երգէն : *

“ Լցաք 'ի բարութեանց քոց տէր ճաշակելով
զՄարմին քո և զԱրիւն , փառք 'ի բարձունս

կերակրողիդ զմեզ : Որ հանապազ կերակրես
 զմեզ՝ առաքելան՝ ի մեզ զհոգևոր քո զօրհնու-
 թիւն : Փառք ՚ի բար՛ :

Առանայ Կոնստանդնուպոլսի զհեռն . եւ արկաւագն՝ մինչ նոյա երգեն՝
 խոանի արկունէ զուրջ զուղանոք . եւ ոտեալ զոգոսոս Կոնստանդնուպոլսի
 արկաւագոսն . եւ ելեալ հրոճոյէ ժողովրդեանն գոհանալ
 այոգէն :

“ Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեացուք : Եւ
 ևս հաւատով ընկալեալք յատուածային սուրբ՝
 յերկնային՝ յանմահ՝ յանարատ և յանսպական
 խորհրդոյս՝ զտեառնէ գոհացարուք : ”

Փոքր ինչ ունին ՚ի միմեանց զանազանութիւն
 ընթացք բանի գոհութեանն և օրհնութեանն :
 Քանզի օրհնութիւնն է յէլից բարեացս աստու-
 ծոյ փառատրութիւն . Իսկ գոհութիւնն՝ նորոգ
 առեւոյն շնորհակալութիւն : Արդ՝ մինչև ցայժմ
 յաղագս որոյ ունէին շնորհ յատուծոյ՝ օրհ-
 նէին . Իսկ այժմ դարձեալ նորոգ ընկալեալ
 զհասարակաց պարգևացս բաշխումն՝ ՚ի վերայ
 որոյ գոհանալ հրամայէ դատտիարակ նոցին սար-
 կաւագն :

Որպէս զի և ըստ այսմ հաղորդ լիցին քա-
 հանայական աղօթիցն . որ նա ևս խորհրդա-
 բար գոհանայ անդր ՚ի ներքին վայր որբոյ խո-
 բանին :

աստուծոյ հօր, որ և բարեխօս խի է վասն մեր, Եւ դարձեալ միւսանգամ գալոց է հաստուցումն առնել ըստ գործոց, զնոյն և քահանայապետս ձեացաւ նախ, զի էջ խնկարկութեամբն առ ժողովուրդն և հաւատարեցաւ նոցա, Եւ դարձեալ վերացաւ ՚ի սրբութիւն սրբութեանցն ՚ի բեմն, մերձ առ սեղանն տէրունական, և բարեխօսեաց առ հայր մինչև ցայժմ, Իսկ այժմ վասն ժողովրդեանն զգե՛նու զեմփօրոնն, և իջանէ և աղօթէ յօրինակ միւսանգամ գալստեանն, և զհաստուցումն իւրաքանչիւրոցն ցուցանէ, որպէս և ասէ:

* Առջիւ : *

“ Ար օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տէր, և սուրբ առնես զյուսացեալս ՚ի քեզ: ”

՚Ի միւսանգամ գալստեան իւրում քրիստոս զայնոսիկ՝ որք աստ հաւատովք և գործովք բաւեաց օրհնեցին և փառաւորեցին զնա՝ օրհնէ ասելով, Եկայք օրհնեալք հօր իմոյ, և սուրբ առնէ, որք սրբեցին զանձինս իւրեանց յաշոյ մեղաց յաղագս յուսոյն իւրեանց որ ՚ի նա:

“ Աեցո՛ զժողովուրդս քո, և օրհնեա՛ զժառանգութիւնս քո: ”

Աեցո՛ այժմ ՚ի մեղաց, և օրհնեա՛ ՚ի հանգերձեալն:

կերակրողիդ զմեզ : Որ հանապազ կերակրես
զմեզ՝ առաքեան՝ ՚ի մեզ զհոգևոր քո զօրհնու-
թիւն : Փառք ՚ի բարի :”

Լուսնայ Կոմիտայն զՅեան . եւ սարկաւագն՝ մինչ նոյա երգեն
խանէ արիանէ զորզ զԵղանոյն . եւ ոտեալ զսպասո Կաննի՝ ՚ի
սարկաւագորանն . եւ ելեալ հրոմայէ ժողովրդեանն գոհանալ
այսպէս :

“ Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեացուք : Եւ
ևս հաւատով ընկալեալք յաստուածային սուրբ՝
յերկնային՝ յանմահ՝ յանարատ և յանապական
խորհրդոյս՝ զտեառնէ գոհացարուք :”

Փոքր ինչ ունին ՚ի միմեանց զանազանութիւն
ընթացք բանի գոհութեանն և օրհնութեանն :
Քանզի օրհնութիւնն է յէկց բարեացս աստու-
ծոյ փառատրութիւն : Իսկ գոհութիւնն՝ նորոգ
առեւըցն շնորհակալութիւն : Արդ՝ մինչև ցայժմ
յաղաչս որոյ ունէին շնորհ յաստուծոյ, օրհ-
նէին . Իսկ այժմ՝ դարձեալ նորոգ ընկալեալ
զհասարակաց պարգևացս բաշխումն, ՚ի վերայ
որոյ գոհանալ հրամայէ դաստիարակ նոցին սար-
կաւագն :

Որպէս զի և ըստ այսմ հաղորդ լիցին քա-
հանայական աղօթիցն . որ նա ևս խորհրդա-
բար գոհանայ անդր ՚ի ներքին վայր սրբոյ խո-
րանին :

առտուծոյ հօր : որ և բարեխօս իսկ է վանն մեր :
 Եւ դարձեալ միւսանգամ գալոց է հատուցումն
 առնել ըստ գործոց : զնոյն և քահանայապետս
 մեացաւ նախ : զի էջ ինկարկու թեամբն առ ժո-
 ղովուրդն և հաւատարեցաւ նոցա : Եւ դարձեալ
 վերացաւ 'ի սրբու թիւն սրբու թեանցն 'ի բեմն :
 մերձ առ սեղանն տէրունականն : և բարեխօ-
 սեաց առ հայր մինչև ցայժմ : Իսկ այժմ վանն
 ժողովրդեանն զգե՛նու զեմիւիորանն : և իջանէ
 և աղօթէ յօրինակ միւսանգամ գալտեանն : և
 զհատուցումն իւրաքանչիւրոցն ցուցանէ : որպէս
 և ասէ :

* Աղօթ : *

“ Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տէր :
 և սուրբ առնես զյուսացեալս 'ի քեզ : ”

'Ի միւսանգամ գալտեան իւրում քրիստոս
 զայնոսիկ՝ որք աստ հաւատովք և գործովք բա-
 րեաց օրհնեցին և փառաւորեցին զնա՝ օրհնէ
 ասելով : Եկնյք օրհնեալք հօր իմոյ : և սուրբ
 առնէ : որք սրբեցին զանձինս իւրեանց յաշոոյ
 մեղաց յաղագս յուսոյն իւրեանց որ 'ի նա :

“ Աեցո՛ զժողովուրդս քո : և օրհնեա՛ զժառան-
 գու թիւնս քո : ”

Աեցո՛ն այժմ 'ի մեղաց : և օրհնեա՛ն 'ի հանգեր-
 ձեալն :

“ Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեան, ”

“ Սրբեան զտոսս՝ որք ողջունեցին սիրով զվայ-
եւելուծիւն տան քոյ, ”

Լրումն կոչէ զբաղմուծիւն հաւատացելոցն, զորս և պահել աղաչէ՝ ի վորձուծեանց։ Իսկ վայելելուծիւն տանն աստուծոյ՝ է սեղանն սուրբ, զի որք սիրով համբուրեն, սրբեալք եղիցին յամենայն աղտոյ։

“ Դու զմեզ փառաւորեան աստուածային զօրու-
ծեամբ քով, և մի՛ թողուր զյուսացեալս ՚ի
քեզ, ”

Փառաւորեան զմեզ, յորժամ դաս հայրենի
փառօք։

“ Զխաղաղուծիւն պարգևեան ամենայն աշխար-
հի, եկեղեցեաց՝ քահանայից՝ թագաւորաց մերոց
և զինուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողո-
վողեանս, ”

Քանզի այս մեծի պարգևիս՝ որ է խաղաղու-
ծիւնն՝ ամենեքեան կարօտին, զոր հայցէ այժմ
տալ ամենեցուն աննախանձաբար։

“ Զի ամենայն տուրք բարիք և ամենայն պար-
գևք կատարեալք ՚ի վերուտո են իջեալք առ
՚ի քէն, որ եռ հայր լուսոյ, և քեզ վայելէ
փառք՝ իշխանուծիւն և պատիւ այժմ և՛, ”

Ջրով և այժմ էկեղեցւոյն առէլն . Եղեցի ոնոան գեաան օրհնելու յայսմհէպէ մինչև յաւիտեան :

* Մեկնութիւն : *

Յորժամ լուան զի քահանայն մեծս և բարձրագոյնս ետ նոցա շնորհ փոխանակ օրհներգութեանն , ևս յորդորին 'ի նոյն բաղձանօք սրբտից , յայտ արարեալ թէ անուն Տեառն մերոյ ոչ միայն այժմ օրհնեցաւ 'ի մէջ մեր՝ սրպէս վկայեաց Հայրդ սուրբ՝ այլ և յայսմհետէ օրհնեսցի մինչև յաւիտեան , այսինքն յանկէան և յանսահմանն ժամանակ , զի յաւիտեանն 'ի վեր է քան զժամանակն , և ոչ մասն ժամանակի :

Եւ Կոնստնտին Դոստոյ եւ առէ 'ի վերայ ոցս .

“ Կաթարումն օրինաց և մարգարէից դաւ ես քրիստոս աստուած փրկիչ մեր . Որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս քո :

Լից և զմեզ հոգևովդ քով սրբով : ”

Ամենայն օրէնք և մարգարէք վասն Քրիստոսի խօսեցան , զորս եկն և կատարեաց իւր տնօրէնութեամբն : Եւ զի հայրական ասէ , վասն զի հօր կամօքն արար զամենայն : լից զմեզ աստուած ծային հոգևովդ քով :

Եւ քերէն նշխար առ Կահանայն . եւ առ օրհնեալ Բաշիէ ծողո-
ղըրեանն . եւ առն աղմո . Օրհնեցից զտէր յամենայն ժամ եւ
այլն : Եւ Կահանայն խաւովն Եւզղ զծողողաւորն առէ . օրհնեալ
էրբոստ , եւ այլն : Եւ որդ . Էրբ զարծեցի . զէնն ըմբն
առելով :

* Մեկնութիւն : *

Բաշխուսն նշխարացն զայս նշանակէ . վասն
զի ծողղորդացն՝ որք կցորդեցան քահանայական
օրհնութեանցն՝ պարտ է զի և սեղանոյն կցոր-
դեցցին : Վասն այնորիկ լինի եթէ ոմանք՝ որք
ոչ կարողանան յաստուածային խորհուրդն մերծե-
նալ՝ այս սուրբ նշխարացս հաղորդեցին հաւա-
տով . որպէս թէ՛ ի փշրանաց սեղանոյն տեառն
կերակրին , զոր և քանանուհին վկայեաց :
Յոր և ոչ է պարտ իբրև ՚ի սուկ հաց մերծե-
նալ . այլ իբրև ՚ի միացուածս աստուածային
սեղանոյն , զի և ըստ չափու իւրեանց արժա-
նացին շնորհաց յաղագս ճաշակմանն : Բայց
թէ զի՞նչ նշանակէ սաղմոսն՝ զոր երգեն .

“Օրհնեցից զտէր յամենայն ժամ :”

Այս է . քանզի զայս սաղմոսս յայնժամ եր-
գեաց դաւիթ , յորժամ փախեաւ ՚ի սաւուղայս
և գնաց առ քահանայապետն . և ետ նմա քա-
հանայապետն զհացն՝ զոր ոչ էր օրէն ուտել
աշխարհականաց . Բայց եկեր ինքն դաւիթ և
որք ընդ նմա էին , և այնու եբաց զդուռն հա-

շատոյ • զի և աշխարհականք կերիցեն 'ի քա-
 Տանայական հացէն • որ այժմ 'ի նորս քրիս-
 տոսիւ կատարեցաւ • յաղագս որոյ յաւարտման
 այսր խորհրդոյ երգեմք զայս սաղմոսս • Եւ
 արդ՝ 'ի յաւարտիւ բանիցս խորհրդեան՝ զայս
 պարտ է զմտաւ ածել • Քանզի որք կատարողք
 են սուրբ խորհրդոյ պատարագիս քահանայք •
 և կամ որք միայն հաղորդին 'ի սուրբ խոր-
 հօւրդն աշխարհականք • ոչ է պարտ առանց
 պատրաստութեան լիրբ և յանդուզն երեսօք
 մերձիւ 'ի սուրբ և յաստուածային խորհօւրդն •
 և քամահանօք իբրև 'ի սոսկ հաց և 'ի բա-
 ժակ • և կամ թէ յաղագս արծաթոյ և
 կամ փառաց • Զի այնպիսիքն են՝ որք 'ի դա-
 տաստան անձանց իւրեանց ուտեն և ըմպեն •
 վասն որոյ և պարտական իսկ գտանին Մարմնոյ
 և Արեանն տեառն • որպէս և յուդասն • և որք
 զտէրն 'ի խաչ հանին • Քանզի ասէ առաքեալն
 թէ արհամարհեալ ուրուք զօրէնան մովսիսի՝
 երկու կամ երեք վկայիւք միռանիւր ա-
 ռանց ողորմութեան • վասն զի անողորմ սպա-
 նանէին զարհամարհիչս օրինացն մովսիսի • Իսկ
 քանի՞ պատժոց այն լինի արժանի՝ որ զօրդին
 աստուծոյ յոան ձգէ • և զսուրբ մարմին և զա-
 րիւն նորա • զի որով սրբեցաւ ամենայն աշ-
 խարհ՝ յայն իբրև յանսուրբ և խառնակ
 ինչ քամահանօք հաղորդի • զի ասէրդ ակնկալ

լուծիւն հանդերձեալ դատաստանին այսպիսեացս է, այս է՝ բաժին և նախանձ հրոյ գերհենին: Գարձեալ մի ոք անյուսաբար զերկիւղինչ՝ ի մէջ բերիցէ և ամենեւին հեռացեալ օտարանայցէ՝ ի սուրբ և յաստուածային կենաց կերակրոյս: զի որով ՚ի մահու և ՚ի մեռելուծեան է յայտնապէս այնպիսին: Քանզի թէ զամենայն առաքինուծիւնս լիակատար ունիցի՝ և ընդ հրեշտակս հաւատարեալ կենդանւոյն ՚ի յերկինս վերանայցէ՝ և ՚ի հաղորդութենէ մարմնոյ և արեան տեառն ՚ի բաց կացցէ: Նըշմարտապէս ընդ ստոմնայի ՚ի ներքին սանդարամտս կործանի: Զի երկու յանցանս յանցանեն այնպիսիքն, մի՛ զի զհրաման տեառն արհամարհեն, զայն՝ զոր ասաց, Զայս արարէք առ իմոյ յիշատակի, և թէ՛ Ես եմ հացն կենաց իջեալ յերկնից, որ ուտէ ՚ի հացէս յայսմանէ, կեցցէ յաւիտեան: Եւս՝ որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, ունի կեանս յանձին իւրում, և որ ոչ ուտէ և ըմպէ, ոչ ունի կեանս յանձին իւրում: Արդ՝ որ անկոյթ առնէ զհաղորդութենէն, զայս ամենայն քաղցր պատուէրս արհամարհէ:

Եւ երկրորդ յանցանքն նորա այն է՝ որ կամապաշտութեամբ յանձնապատտան լեալ՝ միայն իւրով առաքինուծեամբն ակն ունի արդարանալ:

Եւ դարձեալ էն ոմանք՝ զի զբնական ինչ կիրս
կամ զսխալանս ինչ յոչ կամաց՝ առաջի ար-
կանեն և ՚ի բաց կան ՚ի սուրբ խորհրդոյն •
Եւ զայն ոչ հաւատան՝ զոր ասէ յովհաննէս
[Թէ արիւն որդւոյն աստուծոյ սրբէ զմեզ ՚ի
յամենայն մեղաց •

Այլ զայս գիտացէ ամենայն ոք • զի է երբեմն
որ սատանայ զմեծ յանցանս՝ առ ոչինչ տայ
համարիլ • և յորդորէ ՚ի հաղորդութիւն Մար-
մնոյ և Արեան տեառն • զի այնու կրկին պատ-
ժոց արժանի արացէ •

Եւ է երբեմն • զի զդոյզն և զասկաւ սխալանս
մեծ և անհնարին երեւեցուցանէ անիծեալն • և
՚ի բաց օտարացուցանէ ՚ի կենաց ճաշակոյն • զի
ընդ ինքեան ՚ի մահ և ՚ի կորուստն յաւիտե-
նական ածիցէ և զայն ողորմելին • Վասն որոյ՝
ոչ է սրտո ումեք ինքն ինքեամբ անձին իւ-
րում քննիչ լինիլ • սյլ՝ զայլ ոք կացուցանել
անձին իւրում և գործոցն դատաւոր և քննիչ •
Եւ այս [Թէ որպէս լիցի՝ այս է • Չամենայն
զգործս իւր և զբանս և զխորհուրդս՝ զմեծս և
զվտրունս՝ զկամայն և զակամայն՝ զգիտութեամբն
և զանգիտութեամբն՝ և առ հասարակ զամե-
նեօտանն՝ անամօթացեալ պատմեսցէ խոստովա-
նութեամբ առաջի խոստովանահօրն • Եւ է [Թէ
զոր ինչ խոստովանահայրն հրամայեսցէ՝ զնոյն
ոչ առնիցէ • անձնահաւան է և կամապաշտ • և

ոչ թէ զբան մարդոյ, այլ զնոյն ինքն զաստ-
 ուած արհամարհէ, ապա թէ ոչ տայ հրաման
 հաղորդելոյ, և նա յանդգնեացի՝ զնոյն 'ի վե-
 րոյ ասացեալ պատուհան կրեացէ, Երբմէ զեր-
 ծուցէ զմեզ քրիստոս որդին աստուծոյ իւրով
 խաչուն և չարչարանօքն, և իւր մարմնոյ և ա-
 րեան կատարմամբն, Արուս վառք՝ պատիւ և
 գոհութիւն յամենայն արարածոց և գոյից, և
 այժմ և՛, Բայց տեսանեմ և զայս յոյժ անկար-
 գութիւն յեկեղեցիս մեր, զի ոմանք ոչ միայն
 յաշխարհականաց, այլ և բազումք 'ի կուսա-
 կրօն քահանայից՝ որք մինչև ցօր վախճանին
 կան անհոգացեալ, և ոչ ինչ վոյթ առնեն վասն
 հաղորդութեան խորհրդոյն, Իսկ երբ հիւան-
 դանան մերձ 'ի մահ, ապա 'ի հարկէ և ոչ
 վասն յուսոյ այլ վասն մարդկան խօսից, զի
 մի՛ մարդիկ պախարակեցեն թէ անհաղորդ մե-
 ռաւ, Խնդրեն հաղորդիլ և բազումք՝ ոչ ին-
 քեանք, այլ այլք ստիպեն զնոսա 'ի նոյն, և
 յորովից մինչև շունչքն քաղին՝ ապա ժամանէ
 քահանայն և տայ 'ի բերանս նոցա զուրբ
 խորհուրդն, որ չար և մեծ է քան զամենայն
 հերձուածս, զի զաստուածային խորհուրդն զնէ
 յայնպիսի բերան, յորմէ ոչ լուաւ խոստովա-
 նութիւն և զղումն մեղաց կամ դաւանու-
 թիւն հաւատոյ, Արդ՝ թէպէտ յաշխարհակա-
 նաց ոք եթէ մերձ 'ի վախճանն զղձացեալ

'ի մեղացն խոստովանեսցի և հաւատով խնդրեսցէ զսուրբ խորհուրդն, համարձակիլ արժանէ յողորմութիւնն քրիստոսի, և տալ նմա զշունորհն քրիստոսի: Բայց վասն քահանայից՝ յոյժ դժուարին, և անգէտ եմ թէ զինչ ասացից:

Վ Ե Ր Ձ:



Ձայս մի ինչ հարկաւոր համարիմ յիշատակել զի 'ի տպագրութեան մատենիս փոյթ յանձին կալայ ըստ Տիշգ կանոնաց յարմարագրութեան զկետագրութիւնն կարգել, ուստի թափնուր էր օրինակն տպագրեալ 'ի Աստանդնուպօլիս յութեւտաներորդում Օգոստոսի յամի տեւոռն 1799, յորմէ և 'ի լոյս հանի զայս տպագրութիւն՝ ախոտալով զի չունէի 'ի ձեռին զգրչագիր օրինակ ինչ՝ որոյ ընդ տպագրելոյն համեմատութեամբ հնար լինէր զամենայնն ուղիղ տրամագրել, և եթէ սպտահէր վրիպակ ինչ գրչի՝ զնոյնն որոշել:

Երեք հարիւր օրինակք այսր մատենի տպագրեցան, զի նոքօք հնար լիցի զիջուցանել զծարաւ հոգւոց որոց 'ի հնդիկս կան մերաղնեայք, և որոց 'ի Պուղայ բնակին որդիք նորոյս Սիովի:

Համառօտ պատմութիւն պատճառի տպեցման
մատենիս : 'Ի Յովհաննիսէ Ավգալեանց :

'Ի փոքունց պատճառաց բազում ան-
գամ ծնանին իբք մեծամեծք • և յակնարկու-
թենէ Պատճառին ամենեցուն յառաջ գան այն-
պիսի կատարեալ և օգտակար պարգևք՝ զորս
'ի վայելելն մարգոց յատիս երախտագէտ ծա-
ռայութեամբ Պարգևատուին՝ անսպառ երա-
նութեան վայելլցն արժանանան յանտիս :

Յընթացս երթևեկութեան իմոյ 'ի
տունս բարեկամի ուրեմն՝ որ զախտ մահացու
համբուրեալ զամս երկուս դէտակն կալեալ սպա-
սէր գեղեցկատեսել շինուածոյն քակտման՝ դէպ
եղև ինձ 'ի ձեռս բերել զառաջիկայ հոգեկե-
ցոյց մատեան , զոր նա խնամով պահպանէր յիւր-
ում փոքրիկ գրատան : 'Ի յաճախ ընթերցմանէ
սորա քաղեալ զօգուտս միթարութեան՝ գրա-
սէր հոգի նորա փափագէր եռանդեամբ և զայ-
լոցն առնել հաղորդս գանձուն 'ի նմա ծածկե-

լոյ և աստուածային սիրովն վառեալ՝ թա-
խանձանօք յորդորէր զիս ո՛ր և իցէ եղանակաւ
զոռն գործ արկանել՝ ի մանուկ։ Բայց ախտն
զի ո՛չ հերիքացաւ նմա արեւ տեսանել զբաղձա-
լին հողւոյ իւրոյ ածեալ՝ ի լոյս և քանզի ար-
դէն հողոյ է հաւատարեալ զնա մահ և կայ՝ ի
սիրտս մեր նմին հաւատարելոյ վայ ու ահ և յու-
սամ զի ոչ զնալաւ վառաօրում թեան՝ և ո՛չ զի-
նեւ շողքորդութեան տողիւտ ինչ արկցի յըն-
թերցողաց և թէ համարձակեցայց համառօտիւ
տալ ծանօթութիւն ինչ զնմանէ և զայն՝ պարզ
և անստիճակէ թ բանիւք և ո՛չ այնչափ առ ՚ի պատ-
ուել զյիշատակ ննջեցելոյն՝ որչափ առ ՚ի ա-
ւանդել կենդանեաց զքանի մի ՚ի հողեշահ բա-
նիցն՝ զոր խօսեցաւ նա յաւուրս իւրոյ մօտալուտ
օրհասին ։

Տիկին Մէրջան Ստեփաննասեան՝ քան-
զի այս է անուն նախասացեալ բարեկամին՝ ծնեալ
էր ՚ի Բուշեռ որ ՚ի ծոցն Պարոից ՚ի 28 Յուլիսի
յամի Տեառն 1788 ։ Էր սա անդրանիկ դուտոր
Պարոն Եարութիւնին Մէլքումեանց Ջուղայեց-
ւոյ ։ որ ըստ սնօրինելոյ բարձրելոյն յլեաց զնա
հանդերձ մարք իւրով ՚ի Վաղիաթա ՚ի հնգե-
տասան ամաց հասակի նորա ։ ուր և ամուսնացաւ
նա ընդ Աղայ Մկրտչին՝ երկրորդի որդւոյն Աղայ
Պարզսին Տէր Եովհաննիսեանց ։ Չե էին զամս
ութն ամուլքս այսոցիկ զօրհնութիւն աստուա-

գիր խորհրդոյս վայելեալ՝ հասանէ առն հրաւերք երկնային, և վիճակի անմխիթար այրութեան՝ նորին դժբաղդ ամուսին, Երկրորդ ամուսնութիւն նորա ընդ Պարոն Ստեփաննոսին Վարպետեան եղև քան զառաջինն առաւել վտառաղդ, Ամիսք ութն միայն՝ և ահա ջահն հարսանեաց շիջանի, և զրկելով ՚ի գլխոյ իւրմէ լեալ զոյգակորոյս այրի՝ զմնացեալ առուրս կենաց իւրոց ՚ի քրայս վշտաց և տրտմութեանց աշխարհի հանապաղ այրի, Փորձ առեալ սորա երկիցս ամուսնական կենաց և որոց ընդ նմա կցորդք են աղէտք՝ և տեսեալ զի այս հովիտ թշուառութեան ընդ միոյ վարդոյ բերէ զտասն փուշ՝ ասէր յաճախակի, որ միանգամ ամուսնանայ՝ համբերող է, որ երկիցս՝ յիմնր է :

՚ի լրանալ քառասուն ամաց հասակի նորա ըմբռնեցաւ նա ՚ի դժնդակ ախտ շրգոզութեան, որ ՚ի դերև հանեալ զամենայն զգեղ և զգարման բժշկաց՝ չթողոյր ախտացելոյն զյոյս ինչ բժշկութեան, ՚ի մահաբեր ցաւոց անտի յոգիս սոյաստան եղեալ՝ իմանալն աչօք նկարէր յանդիման զօրն սոսկալի, որ լինիլ լինէր վերջին այսր կենցաղոյ, և առաջին կենացն երկնայնոյ, Յայսպիսի աղետալի վիճակի ղետեղեալ՝ ներքին մարդն ինդրէ զմխիթարութիւն ընդ գրօշակաւ կրօնի, իբրև ալէտանջ մրրկակօծ նաւաստի ՚ի նաւահանգիստ

ցանկալի : Աւետարանական բանից պարսպուճի
 էր լքեալ սրտի նորա դեղ . քարոզք և ճառք
 հոգեշահք՝ էին վերաւոր մտաց նորա բալա-
 սան : Եւ թէպէտ խղեալ էր երկրաւոր կե-
 նաց նորա յոյս , սակայն ուսեալ էր նորա կան-
 խաւ յոսկեղէն պատգամաց սուրբ գրոց՝ զի յոյս
 տեսանելի չէ յոյս . զի զոր տեսանէ ոք՝ զի՞
 ևս յուսայ : Արպէս փափագի եղջերու յաղբերս
 ջուրց , այնպէս ևս անձն նորա առ Աստուած փա-
 փագեալ՝ զոր ո՞չն տեսանէր , յուսայր . և համ-
 բերու թեամբ ակն ունէր հասանել 'ի վերջոյ
 այնմ անդորրու թեան՝ զոր ժխտէ մահկանա-
 ցուաց այս ձոր արտասուաց :

Յաւուր միում՝ մինչ լուսաբանու-
 թեամբ ընթեռնուի յունկն նորա զհնգետա-
 սաներորդ գլուխ առաջին թղթոյն Պողոսի առ
 կորնթացիս՝ ներքին մարդն երեւիւր զարտա-
 քինն զօրացուցանել . և միտքն երկնային սի-
 լով յափշտակեալ՝ լիճք լուսոյն յանհեղի ար-
 տօսր բիւրեղանային : 'Ի լուր այսր բանի թէ՛
 ընկլաւ մահ՝ 'ի յաղթու թիւն . ո՞ր է մահ
 յաղթու թիւն քո . ո՞ր է դժոխք խայթոց քո ,
 սթափեալ նորա 'ի յափշտակութենէ անտի
 մտաց՝ ազաղակեաց , 'ի զգե՛նուլ իմ զանմահու-
 թիւն զկնի մահուան , բարձցի յերեսացս սեաւ
 քօղ իմն՝ որով այս մարմին ծածկէ յաչացս զյա-
 շխտե՛նականու թիւն :

'ի հարցանել իմում զողջութենէ
 անձինն՝ եթէ սիրան 'ի յուզմանց կրիցն վըշ-
 տանայր, այս սովորական պատասխանի էր նորա.
 մանկունք իմ՝ անհնազանդք, ծառայք՝ անհաւա-
 տարիմք, արքայն՝ յաթուոյ իւրմէ գահավէժ
 անկեալ, և ընդ հակառակն՝ մինչ վայելէր նա
 զներքին գիւրութիւն, պատասխանէր, ման-
 կունք և ծառայք՝ հպատակք արքային և գըշ-
 խոյին իւրեանց: Թերևս չիցէ աւելորդ յուշ
 առնել զի արքայիւ՝ զբանն, զշխոյիւ՝ զկամս,
 մանկամբք՝ զկիրս, և ծառայիւք՝ զզգայութիւնն
 իմանայր. յորմէ երևի թէ չէր նմա անծա-
 նօթ իմաստասիրացն սահման, որով փոքր աշ-
 խարհ սահմանեցին զմարդ: Դարձեալ՝ յառուր
 միում՝ 'ի հարցանել իմում ցնա թէ զի՞արդ-
 անցուցեր զօրս զայս, պատասխանեաց. հատի
 զայսր առուր ճանապարհ, աստարէզ իմն է այս
 աշխարհ, և մարդիկ՝ ճանապարհորդք 'ի նմա.
 բայց գնացք նոցա 'ի միմեանց տարբերին. ոմանց
 կայ առաջի ճանապարհ հարթ, կիտոց՝ փշալից.
 այլոց՝ քարուտ և առապար, վերջին տեղակն
 վիճակեցաւ ինձ, և ես ուղեորիմ մինչև 'ի
 ծայրն ժամանիցեմ:

'ի զայրանալ խօթութեանն՝ յոր-
 ժամ թելք կենացն խզիլ խզէին հուպ ընդ
 հուպ՝ ծանեաւ և ինքն զմերձենալ առուրն,
 յորում պարտէր հրաժեշտ տալ աշխարհի և

որոց 'ի նմա մեղաց, ունայնութեանց, պատրաս-
 նաց, ցաւոց և հեծութեանց, Նստեալ նորա յան-
 կողնի մինչդեռ էր յուժի՛ զբանիւք գայր ընդ-
 բարեկամաց իբրև ոք՝ որոյ կայցէ առաջի հե-
 ռանալ յիւրոց սիրելեաց և գնալ 'ի տար և
 յանդարձ ուղի: Ջսաղմատերգութիւն առեալ զբան
 'ի բերան՝ ասէր. Արցո՛ զիս Աստուած, զի հա-
 սին ինձ ջուրք, ընկլայ ես 'ի խորս անգնդոց՝ ուր
 ոչ գոյ ինձ հանգիստ: Ո՛հ. . . յաւելայր. . .
 զի՛արդ Քչգրտիւ կատարեցաւ յիս այս բան
 մարգարէին, զոր հարիւրիցս կրկնեալ որո՞ճէի
 'ի մտի: Եւ ապա յիշեալ զանհնարին աղէտս
 այսր ունայն և անցաւոր աշխարհի՛ հառաչելով
 բարբառէր. հալոց իմն է այս կեանք, և մարդս
 տակի, որ 'ի հուր վշտաց և ցաւոց լուծեալ՝
 զտեալ մաքրի, մինչև արժանացի յինքն ընդու-
 նիլ վերատին զտիպ իւրոյ Արարչին՝ զոր 'ի
 ձեռն մեղաց կորոյս հետեւելով չարին, իսկ որ-
 քան միւր զաղբութեան գոյ յիս, զի այսբա-
 նեօք վշտօք և ցաւօք հալիմ, և դեռ ոչ զտիմ:
 Մի մուտ է ամենեցուն յաշխարհս, և մի ելք
 հասարակաց ըստ գրոյն:

Կատարեալ նորա զընթացս իւր
 երկրսւոր, և զգեցեալ զհանդերձ հարսանեաց
 'ի ձեռն քրիստոնէալայել կատարեալ զզն-
 ման՝ ելաց նա զմեղս իւր 'ի լեւելս իւրոյ խոս-
 տովանասօր, և արժանացեալ յետին թոշակին՝

էհաս նմա հրաւեր երկնային • և հանգեաւ
խաղաղութեամբ 'ի Տէր յերեսներորդում Սեպ-
տեմբերի ամսոյ յամի Տեառն 1830, 'ի հասակի
42 ամաց, 2 ամսոյ և 2 աւուրց :

Քոյս բարուց մեծարոյ Տիկնոջս՝ զո-
րոյ խօթութեան և մահուան անցս յիշատա-
կեցի յօգուտ ընթերցողաց՝ էր այնպէս քաղցր
և ամօք : մինչ զի որք ճանաչէինն զնա՝ մեծա-
րանո նմին մատուցանէին • և որք անծանօթքն
էին՝ 'ի ծանօթութիւն նորին փափագէին • Ազգ-
մուսաճ մարմնոյ նորա էր քաղառողջ և վայելչա-
գեղ • բնաւորութիւն նորա՝ աշխոյժ • տեսիլ
զիմացն՝ շնորհալի • բարեպաշտութիւն նորա՝
անկեղծաւոր • բարերարութիւնն՝ անպարծ • ուր-
մածութիւնն՝ անյայտ • բարեկամութիւն նորա՝
իբրև զվէմ հաստատուն • թշնամութիւնն՝ իբ-
րև զծիւն արևահար անկայուն • ընկերակցու-
թիւնն՝ հաճելի • զոյցքն՝ զուարճութեամբ և
հանճարով լի • առ իւրսն՝ սրտցաւ • առ օտարս՝
մարդասէր • 'ի ժպիտս և 'ի պչրանս բախտին՝
գէմք նորա միօրինակ • յաթող առողջութեան և
'ի մահիւն հիւանդութեան՝ արիութիւն սրտի
նորա անդրդուելի իբրև զՍոկրատայն • որոյ ե-
րեսք 'ի հայեցուած հարսին և օրհասին մնաց ան-
այլայլակ • կամ միով բանիւ ասել ըստ Սիրաբայ
էր սն կին զգօն և բարի • և շնորհ ամօթխա-
ծութեան նորա գեր քան զսակի :

Մարմին բարեյիշատակ Տիկնոջ
 յանձնեցաւ 'ի ծոց հողոյ՝ մօրն հասարակաց 'ի
 գաւթի սուրբ Նաղարեթայ Եկեղեցւոյն Սալ-
 կաթայ, յորոյ գերեզմանի վերայ արձանագրե-
 ցաւ հետագայ տուգանագիր :

Յայտ աղջամուղջ՝ հողախշտի՝ անկողնի՝
 Մէրջան Տիկին՝ Ստեփաննոսի՝ խաղաղի •
 Որ թօթափեալ՝ ցամաքեցաւ՝ իբր տերև •
 Անշունչ անխօս՝ անգօրր ննջեալ՝ անարև •
 Իբրև զվարդ՝ ծաղկեալ ել սա՝ 'ի գերև •
 Հեղձեալ 'ի վշոց՝ վշտաց ելոց՝ շուրջ զիւրև •
 Վրեալ զցաւս՝ տեսեալ զմահ՝ ակներև •
 Ջանանց հանգիստ՝ գանձեաց ինքեան՝ 'ի պարգև •
 Ջամս քառասուն՝ զամիսս երկու՝ սա կեցեալ՝
 Վերին կոչմամբ՝ 'ի հարսանիս՝ հրաւիրեալ •
 Մասն բարի՝ ընտրեաց սա իբր՝ Մարխամ •
 Որ ոչ երբէք՝ բարձցի յիւրմէ՝ յաւիտեան •
 Վախճանեալ 'ի 30 Սեպտեմբերի, 1830 •

Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս • գրեան •
 երանի մեռելոցն որք 'ի տէր ննջեցին այժմիկ
 վաղվաղակի • զայս ասէ հոգին • քանզի հանգեանս
 յաշխատութենէ իւրեանց • բայց միայն գոյժք
 իւրեանց չողան զհետ նոցա • Յայտ՝ • Ժգ • 14 •
 Եթէ մեռանիցի մարդ՝ կեցցէ • Յովբ • Ժգ • 14 •

ՀԱՆԴԱՆԱԿՈՂՔ ԾԱԽՈՒՅ ՏՊԵՅՄԱՆ

ՄԱՏԵՆԻՄ:

Սբեազնի Տէր Կարողեա՛ւ Առաջնորդ	առաջիւ :
Վանայն Ջոռայնա	18
Սբեազնի Տէր Յովնազէնս Վարդապետ՝ յոջորդ նորին . .	16
Սբեազնի Տէր Գրեգոր՝ ծայրագոյն Վարդապետ նոյն էնի	
Վանայ	14
Սբեազնի Տէր Անասն Աւագեան՝ աւագ Կահանայ սուրբ	
Նազարեթայ եկեղեցւոյն կալիւնայ	12
Սբեազնի Տէր Յարութեան Եղիայ՝ նորին եկեղեցւոյ	
Վիճալի Կահանայ	10
Սբեազնի Տէր Յովնանէն Գալուստեան՝ նորին եկեղեցւոյ	
Վիճալի Կահանայ	6
Աւետ Աղաբեկեան	12
Գեորգ Աւետեան	6
Գեորգ Փննոս Բարազուճեան	6
Ելիսու Ալրաբեան	6
Խալիկ Աստուածաբան Գեորգեան	6
Կարողեա Խ : Ներսէսն	6

Կարապետ Յուզէեան	6
Կարապետ Յ. Վրդանէեան	6
Տէգն Լուսինի Մարտիրոսեան	6
Ղազար Աշէկէեան	12
Մանուկ Մ. Մանուկեան	6
Մարմէն Մարտիրոսեան	6
Տէգն Մերլան Սեփաննասեան (այժմ ննջեալ է Տէր) .	6
Յարութեան Աբգարեան	12
Յարութեան Գալուսեան	16
Յովնանջան Էլիազեան	6
Յովնանէն Ալրաւեանց	16
Յովնանէն Լ. Յարութեան	12
Յովէկ Յ. Քամալեան	6
Ներսիս Մ. Մելիքեան	6
Պետրոս Յ. Սարգսեանց	6
Պողոս Որդանանէան	6
Սարգիս Յովնանէան	12



